# ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



№ 8 (1599) ՕԳՈՍՏՈՍ 2008

# ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ

## Յայտարարութիւն

Հարաւային Կովկասում վերջին շաբաթուայ իրադարձութիւնները, փաստացի պատերազմը՝ ողբերգական հետեւանքներով, միջազգային լարուածութիւնը եւ հնարաւոր զարգացումները պարզում են նոր իրողութիւններ, որոնք ուղղակիօրէն առընչւում են մեր տարածաշրջանի հեռանկարին եւ չեն կարող չմտահոգել Հայաստանն ու հայութիւնը: Մեր անմիջական հարեւանութեամբ կատարուածը ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական առումով նոր մարտահրաւէրներ է ստեղծում: Առաջին արձագանքն, ի հարկե, ցաւն է բոլոր կողմերի հազարաւոր մարդկային զոհերի եւ խեղուած ճակատագրերի համար: Այսօրուայ գերխնդիրն է նման իրավիճակների բացառումը ապագայում: Ուժի կիրառմամբ ազգամիջեան հարցերը լուծելու 90-ականների փուլը աւարտուած է, եւ վերջին դէպքերը աւելորդ անգամ ապացուցեցին այդպիսի գործելակերպի անհեռանկարայնութիւնն ու ողբերգականութիւնը: Մի կողմից պէտք է գիտակցել՝ Վրաստանը մեր անմիջական հարեւանն է, որի կայունութիւնը եւ բնականոն զարգացումը բացառիկ կարեւոր է մեզ համար, իսկ Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական գործընկերն է եւ դերակատարութիւն ունի Կովկասում, միւս կողմից ակնյայտ է՝ տարածաշրջանին չի կարող ձեռնտու լինել Եւրամիութիւն-Ռուսաստան-ԱՄՆ յարաբերութիւնների բախումնային սրումը:

Չնայած ՀՀ պաշտօնեաների հաւաստիացումներին, թէ բեռնափոխադրումների հարցում պրոբլեմներ չկան, մենք մտահոգութիւններ ունենք եւ ակնկալում ենք, որ այս դժուարին կացութեան մէջ բարեկամ Վրաստանը խոչընդոտներ չյարուցի:

Մեզ համար կացութիւնը երեք առումով է գերկարեւոր: Առաջինը Արցախի ժողովրդի՝ սեփական կամքով իր ճակատագրի տնօրինման իրաւունքի ամրապնդման խնդիրն է: Վերջին դէպքերը ակնյայտօրէն ցոյց տուեցին, որ բռնի ուժով խնդիրը լուծելու ադրբեջանական նկրտումները ոչ միայն անհեռանկար են, այլեւ տարածաշրջանը էլ աւելի անկանխատեսելի ցնցումների են տանելու: Արցախը չի կարող Ադրբեջանի կազմում լինել: Մենք պարտաւոր ենք կարգաւորման բանակցութիւններում առաւել յստակ ու ամբողջական պաշտպանել մեր ազգային-պետական շահերը եւ պահանջել, որ կողմերը առաջին հերթին ուժի կիրառումը բացառող իրաւական փաստաթուղթ ստորագրեն:

Երկրորդը վրացահայութեան եւ յատկապէս հայաբնակ Ջաւախքի անվտանգութեան, իբրեւ ազգային փոքրամասնութեան իրաւունքների պաշտպանութեան եւ ինքնավարութեան խնդիրն է: Այստեղ մենք անտարբեր չենք կարող լինել եւ ուզում ենք հաւատալ, որ Վրաստանը ամենայն պատասխանատուութեամբ, միջազգային իրաւունքի գերակայ սկզբունքներով կ'առաջնորդուի այս հարցում:

Յաջորդը երկրի կայունութեան եւ ներպետական-ներազգային հիմնարար խնդիրներում առաւելագոյն միասնականութեան անհրաժեշտութեան գիտակցումն է: Սա ժողովրդի եւ պատմութեան առջեւ պատասխանատուութեան հարց է:

Յուսով ենք՝ բուռն հակազդեցութիւններից յետոյ ե՛ւ հակամարտող կողմերը, ե՛ւ միջազգային հանրութիւնը տարածաշրջանը խաղաղեցնելու եւ առկայ խնդիրները քաղաքակիրթ ճանապարհով կարգաւորելու ուղիներ կգտնեն: Այդ ջանքերին կարող է ու պէտք է միանայ նաեւ Հայաստանը:

ՀՅ Դաշնակցութիւնը վստահ է եւ պատրաստ է ջանքեր ներդնել, որ ի վերջոյ Հարաւային Կովկասում լիարժէք համագործակցութեան ու զարգացման հիմքեր ստեղծուեն, եւ հարեւան ժողովուրդները համերաշխ ապրելու հնարաւորութիւն ունենան:

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ

Երեւան, 15 Օգոստոսի 2008 թ.

# ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



## Երկրի կյանքը

**4** *Ք վոտաներ կանանց համար*
*Անհրաժե՞շտ են արդյոք դրանք (շարունակություն)*

## Հայ Դատ

**17** *Ժան Ժորես*
*Պետք է փրկել հայերին*

## Տարածաշրջան

**27** *Ո՞րն է ելքը*

## Դաշնակցական բեմ

**34** *ՀՅԴ ծրագրային հիմնադրույթները եւ որոշ համեմատություններ Սոցիալիստների անդամ այլ կուսակցությունների արժեքային հասկացությունների հետ (շարունակություն)*

**40** *«Գնա, արագ վազիր, գնա...»*

## Թերթերով «Դրօշակ» - ի էջերը

**48** *Ի՞նչ է գրել « Դրօշակը » 100 տարի առաջ*

## Նոր գիրք

**47** *Համատեղ Գիտաժողովի նյութեր*

## Դարձերասան

**48** *Սերգեյ Գալստյան*

"**Դրօշակ**" ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ **Ռուբեն Հովսեփյան**
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

" **Droshak**" monthly, ARF dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**



Digitized by ARF PR Office

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՅԻՆ ԱՌԱՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԷ՞ ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ

Վրաց-օսական վերջին ընդհարումները ապացուցեցին, որ բազմազգ պետութիւնները, եթէ իրենց էթնիկական խմբերի վարչա-քաղաքական, տնտեսական եւ մշակութային հարցերը չեն լուծում ազգային ինքնորոշման սկզբունքի հիման վրայ, ապա մշտապէս ենթակայ են քաղաքական եւ ռազմական ապակայունութեան: Ապացուցեցին, որ ներկայ աշխարհում բազմազգ պետութիւնների կենտրոնական իշխանութիւնները այլեւս ի վիճակի չեն իրենց ներքին ազգային հարցերը լուծել բռնի միջոցներով, ռազմական գործողութիւններով, էթնիկական զտումներով:

Նաեւ ապացուցեցին, որ բազմազգ եւ տոտալիտար պետութիւններում **դեմոկրատական կարգեր** հասկացութիւնը ամբողջապէս դառնում է ձեւական, եթէ դրա հիմքից հանւում է բնիկ ազգութիւնների ինքնորոշման գաղափարը... Այլ խօսքով՝ կայսերական տոտալիտարիզմով չի կարելի դեմոկրատիա կառուցել բազմազգ պետութիւններում:

Մէկ անգամ եւս ապացուցեցին, որ բազմազգ եւ տոտալիտար պետութիւնները իրենց գոյութիւնը պահպանելու համար քաղաքականապէս եւ ռազմականապէս աւելի կախուած են արտաքին ուժերից եւ համեմատաբար շատ աւելի նուազ անկախ են, քան էթնիկապէս մոնոլիտ եւ ունիտար պետութիւնները:

Ահա թէ որ սահմանագծին է կանգնած մեր բազմազգ հարեւան, փոքր կայսրութիւն Վրաստանը...

Մենք ցաւ ենք ապրում մեր հարեւանների, բազմաթիւ վրացիների, օսերի եւ ռուսների մարդկային եւ նիւթական կորուստների համար, սակայն չենք կարող իրադրային քաղաքականութեան չափորոշիչներով միայն վերլուծել տարածաշրջանային այս խոշոր իրադարձութիւնը:

Չմոռանանք ասել, որ վրաց-օսական վերջին ընդհարումները լաւագոյնս ապացուցեցին, որ դիւանագիտական լեզուն, երբեմն, կարող է միանգամայն հեռու լինել արարողակարգային հաճոյախօսութիւններից եւ «ծախուծուռ» լեզուակապակցութիւններից: Դիւանագէտներն էլ կարող են խօսել ամենասկզբունքային գետնի վրայ՝ անգամ ամենաբարդ չակերտները բացելով:

Մեզ նման փոքր ազգերի պարագայում, յատկապէս երբ նրանք գտնւում են տագնապալի տարածաշրջաններում, քաղաքական, դիւանագիտական շրջանակներում, բնականաբար, ի յայտ են գալիս զգուշաւորութեան պահուածքներ: Այս պահուածքները բնական են այնքանով, որքանով չեն վերածւում կարծրատիպերի եւ անփոփոխ սկզբունքների:

Չակերտները բացենք. Կովկասի եւ Սեւծովեան աւազանի տարածաշրջանում կան պետութիւններ, որոնց քաղաքական սահմանները աւելի մեծ են իրենց ազգային սահմաններից: Մինչեւ ե՞րբ պիտի այս բազմազգ պետութիւնները շարունակեն իրենց պետական գոյութիւնը իրենց պետութեան մէջ գտնուող ազգերի ճնշման միջոցով եւ տարածաշրջանը ապակայունացնելու հաշուին:

Պետութիւնների առկայ տարածքային «ամբողջականութեան սկզբունքը», մանաւանդ երկրորդ աշխարհամարտից յետոյ, օբյեկտիւօրէն հակասում է ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքին: Նոյնիսկ ԽՍՀՄ փլուզումից յետոյ էլ մեծապետական համակարգերի գործադրած լուծումներն ընթացել են յօգուտ «ամբողջականութեան սկզբունք»-ի: Վրաց-օսական հակամարտութիւնները, ՌԴ նախագահի եւ Պետական դումայի կողմից Հարաւային Օսեթիայի եւ Աբխազիայի անկախութեան պաշտօնական ճանաչումը, կտրուկ փոխելու են վերոյիշեալ սկզբունքների հակասութեան նժարը:

Աշխարհաքաղաքական այս անկիւնադարձը հնարաւորություն է ընձեռում մեզ երեք գլխաւոր առանցքների շուրջ վերանայել մեր արտաքին քաղաքականութիւնը.

ա. Հարկաւոր է ուսումնասիրել Արցախեան հակամարտութեան բանակցային գործընթացը այլ հարթութիւններ տեղափոխելու հարցը: Կոսովոյի, ինչպէս նաեւ Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի անկախութեան ճանաչումը միջազգային-իրաւական նախադէպ կարող է հանդիսանալ ԼՂՀ անկախութեան միջազգային ճանաչման համար: Այս ուղղութեամբ նախ եւ առաջ հարկաւոր է ձեւաւորել չափազանց ակտիւ դիւանագիտական հրետանի: Պէտք է յիշեցնել աշխարհին, որ ազգային ինքնորոշման իրաւունքը, գոնէ հաւասարապէս, պարտադիր պէտք է յարգել Արցախի՝ արդէն լիարժէք պետականութեան տէր հայութեան պարագայում:

բ. Հարկաւոր է բարձրացնել Ջաւախքի ինքնորոշման հարցը: Պատմական փորձը ցոյց է տալիս, որ կայսրութիւնների փլուզումը չի աւարտւում տարածքային իմաստով աւելի փոքր կայսրութիւնների ստեղծմամբ: Կայսերական պետութիւնների տրոհման գործընթացները, իրենց ռազմական հետեւանքներով, իրականում աւարտւում են այն դէպքում, երբ տրոհումը լիարժէք է լինում, երբ տուեալ կայսերական պետութեան բոլոր ազգերին տրւում է ինքնորոշման իրաւունք: Այլապէս տրոհման կիսաւարտ գործընթացները շարունակում են յղի մնալ նորանոր տագնապներով:

գ. Այս նոյն օրինաչափութիւնը առկայ է նաեւ Թուրքիայի պարագայում: Առարկայական տարբերութիւնները անշուշտ շատ մեծ են ՆԱՏՕ-ի լիիրաւ անդամ Թուրքիայի եւ դեռ ՆԱՏՕ-ական չդարձած Վրաստանի միջեւ: Հարկաւոր է լրջօրէն ուսումնասիրել վիլսոնեան իրաւարարութեան հաշուառման կարելիութիւնը հայ-թուրքական յարաբերութիւններում: Եթէ Ադրբեջանին ոչ մի հանգամանք չի խանգարում, ՄԱԿ-ի անդամ երկրների դեսպանների զարմացած աչքերի առջեւ, Երեւանի ադրբեջանապատկանութեան մասին անհեթեթ յայտարարութեամբ հանդէս գալ, ապա ի՞նչն է խանգարում մեզ միջազգային հանրութեանը եւ յատկապէս Թուրքիային մէկ-մէկ յիշեցնել թուրքերի համար չափազանց մղձաւանջային տաբուի՝ «Սեւրի սինդրոմ»-ի մասին: «Սինդրոմ», որի իրաւական ուժը փայլուն գիտակցում է, ամենից առաջ, հէնց ինքը՝ Թուրքիան:

Ամէն դէպքում, Կովկասի եւ յարակից տարածաշրջանների կայուն խաղաղութեան ուղիները անխուսափելիօրէն անցնում են ազգերի ազատ ինքնորոշման, արդարութեան եւ պատմական իրաւատիրութեան սկզբունքների ընդմիջից: Կայուն խաղաղութիւնը եւ ազգերի բարիդրացիութիւնը այն ժամանակ է դառնում իրողութիւն, երբ դադարեցւում են կայսրիկների հովանաւորութիւնները, երբ վերջակէտ է դրւում այս կամ այն բռնապետի կողմից գծուած ու ներկուած տարածքների բռնի պահպանման ռազմական նկրտումներին:

# ՔՎՈՏԱՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԴՐԱՆՔ

**Անահիտ Բաղդասարյան**
*Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի փորձագետ*

*Սկիզբը՝ նախորդ համարում*

Որպես Հայաստանի Երրորդ հանրապետության պետականության կերտման մոդել ընտրված ներկայացուցչական ժողովրդավարության հիմքում ընկած գլխավոր փաստարկը միանգամայն պարզ և տրամաբանական է: Եթե խորհրդարանը հավակնում է (այդպես էլ պետք է լինի) արտահայտել ողջ հասարակության շահերը, ապա պետք է նկատի ունենալ, որ այդ հասարակության կեսից ավելին կանայք են:

Մեր երկրում կանանց համար քվոտաների ներդրման թեման առաջին անգամ քննարկվել է դեռևս երրորդ գումարման խորհրդարանում՝ «Կանանց քաղաքական իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայի վավերացմանը նվիրված խորհրդարանական լսումների ժամանակ (2004 թ.): Քվոտաների օգտին արտահայտվեցին միայն ՀՅԴ ներկայացուցիչները, որոնք լինելով Սոցինտերնի անդամ, կիսում էին այս հարցի վերաբերյալ միջազգային մոտեցումները: Նրանք առաջարկեցին ներդնել կանանց ներկայությունը ապահովող 25 տոկոս քվոտա: Սակայն խորհրդարանի մյուս ֆրակցիաների անդամները հանդես եկան որպես քվոտաների մոլի հակառակորդներ, հազար ու մի փաստարկ բերելով իրենց օգտին:

Անշուշտ, քվոտաների օգտագործման ոչ այնքան օգտակար փորձ ունենալով դեռևս խորհրդային ժամանակներից, երբ կանանց (կքվորուհիներ, բանվորուհիներ և այլն) ներկայությունը օրենսդիր մարմնում հասցվել էր 35-38 տոկոսի, կարելի է որոշ չափով հասկանալ մեր օրենսդիրների դիմակայությունը:

Արդյունքում՝ Ընտրական օրենսգրքում ամրագրված և կանանց ներկայության առավելագույն սահմանը, որ թույլ են տվել օրենսդիրները, 15 տոկոս քվոտայի սահմանն է: Իսկ եթե խոսք գնար 25 տոկոսի մասին, ապա հստակորեն կարելի է ասել, որ կուսակցությունները ստիպված կլինեին լրջորեն մտահոգվել կադրերի պատրաստման խնդրով:

Թռուցիկ հայացք ձգելով ԱԺ նախորդ, երրորդ գումարման ընտրություններում (2003 թ.) առաջադրված թեկնածուների ցուցակներին, կարելի էր եզրակացնել օրենսդիր իշխանության հանդեպ կանանց ունեցած առավել քան համեստ հավակնությունների և դրանից բխող ոչ պակաս համեստ հետևանքների մասին՝ խորհրդարանում ներկայացված 5,3 տոկոսով, որը թվային արտահայտությամբ նշանակում է ընդամենը 7 կին պատգամավոր: Մինչդեռ, եթե անդրադառնանք հասարակական գործիչների և հատկապես ԱԺ տղամարդ պատգամավորների կարծիքներին, ապա կանանց սակավությունը օրենսդիր մարմնում բացասաբար է անդրադառնում և օրենքների ընդունման, և խորհրդարանում տիրող մթնոլորտի վրա: Սակայն այդ կարծիքները այդպես էլ մնում են բարի ցանկություն, որովհետև արդեն չորրորդ գումարման ԱԺ ընտրությունների վերջնական արդյունքում կանանց ներկայությունը նորից չհասավ 10 տոկոսի, ինչպես անկախ Հայաստանի բոլոր գումարումների խորհրդարաններում:

Այսպես. 1991 թվականին պատգամավոր է դարձել 9 (3,6 տոկոս), 1995 թվականին՝ 11 (6,3 տոկոս), 1999 թվականին՝ 4 (3 տոկոս), 2003 թվականին՝ 7 (5,3 տոկոս) կին: ԱԺ նախորդ

ընտրություններում համամասնական ընտրակարգով առաջադրվել են 158 կին, որը կազմում էր կուսակցական ընտրացուցակներում ընդգրկված 1084 թեկնածուների 14,6 տոկոսը: Ընդամենը 26 կին էր ներկայացված 14 կուսակցությունների և դաշինքների ցուցակների առաջին տասնյակներում: Համամասնական ընտրակարգով, մյուս կին թեկնածուները, գրեթե առանց բացառության, զբաղեցնում էին ոչ անցողիկ տեղերը կամ եզրափակում էին ցուցակները: Արդյունքում՝ Աժ պատգամավոր դարձան 7 կին.

ա) ՀՀԿ՝ 2 (մեկը՝ մեծամասնական ընտրակարգով),

բ) ՀՅԴ՝ 2,

գ) Օրինաց երկիր՝ 1,

դ) ՄԱԿ՝ 1,

ե) «Արդարություն» դաշինք՝ 1:

Նոր ձևավորված կառավարությունում նշանակվեց մեկ կին նախարար:

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված 401 թեկնածուներից ընդամենը 17-ն էին կին, որոնցից 6-ը հանեցին իրենց թեկնածությունը մինչև ընտրությունները: Ինչպես ցույց է տալիս երկրում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների փորձը, կանայք մեծամասնական ընտրակարգում հաջողության կարող են հասնել եզակի դեպքերում: Գնալով ավելի ու ավելի է նվազում նրանց թիվը այդ ընտրակարգում, և դրա պատճառը ինչպես տղամարդկանց անհանդուրժողականությունն է, այնպես էլ հասարակության վերաբերմունքը և, որ ամենակարևորն է՝ ֆինանսական խնդիրը:

Երջանիկ բացառություն կամ ոչ օրինաչափ երևույթ կարելի է համարել բոլոր գումարումների խորհրդարանների պատգամավոր Հրանուշ Հակոբյանին, որը մեծամասնականով ընտրված եզակի կին պատգամավոր էր: Սակայն սրան մենք մեծ վերապահումով ենք մոտենում, քանի որ նա տարիներ շարունակ պատգամավորության թեկնածու է առաջադրվել և պատգամավոր ընտրվել հայրենի բնակավայրի ընտրատարածքում: Մեր կարծիքով, սա կանանց հաղթանակ համարել չի կարելի, քանի որ հայտնի չէ, արդյո՞ք նա հաջողության կհասներ, եթե իր թեկնածությունը առաջադրեր որևէ այլ ընտրատարածքում, անկախ իր օրենսդրական, հասարակական, պետական հասուն և գրագետ գործունեությունից:

Այնպես որ, միանշանակ կարող ենք հաստատագրել, որ պատգամավոր ընտրված կանանց թվաքանակը ոչ մի կապ չունի քվոտայով նրանց տրված որևէ առանձնաշնորհի հետ: Ուստի, Ընտրական օրենսգրքով հաստատագրված 15 տոկոսը չի կարելի առաջընթաց համարել: Իսկ ինչ վերաբերում է հայկական նորօրյա պառլամենտարիզմի ընտրապայքարում տեղի ունեցած այնպիսի բացասական հնարքի, որը խորհրդարան բերեց «Շամիրամ» կանանց կուսակցությունը հորջորջվող 11 հոգիանոց մի խմբի (1995 թ.), ապա դա ոչ մի դեպքում չի կարելի համարել հասարակության կամ տղամարդկանց սոցիալական հասունացման արդյունք: Դա ընդամենը ՀՀՇ-ական իշխանության ներկայացուցիչ, ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյանի քմահաճույքն էր, որը փաթաթվեց հասարակության և ընտրողների վզին: Մենք ականատեսն ու վկան ենք այդ ընտրությունների, երբ մարդկանց, հատկապես ծերերին, հաշմանդամներին մեքենաներով բերում էին ընտրատարածքներ, և որոնք քվեարկում էին նախօրոք նշված քվեաթերթիկներով: Փառք Աստծո, որ այդ հնարքն այլևս չկրկնվեց, քանզի քաղաքական դաշտում կնոջ վարկանիշին հասցված վնասը լրջորեն ազդեց հասարակական գիտակցության վրա:

Կանանց ներկայության առավել տխուր պատկեր է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: 2005 թվականին տեղի ունեցած 829 համայնքային ընտրություններում, երբ 671-ում կայացան համայնքապետների ընտրություններ, առաջադրվեց ընդամենը 33 կին, իսկ ընտրվեցին՝ 14-ը կամ ընտրվածների ընդհանուր թվի 2 տոկոսը:

Ինչ վերաբերում է համայնքներում ավագանիների անդամությանը, ապա առաջադրված 4779 թեկնածուներից միայն 446-ն էին կին, որոնցից հաղթեցին 298-ը, այսինքն ընդհանուր թվի 6,2 տոկոսը: Ոչ մի կին չընտրվեց մարզկենտրոններ Գյումրիում, Կապանում, Աշտարակում, Արտաշատում, Արմավիրում, Եղեգնաձորում, քաղաքներ Էջմիածնում, Աբովյանում, Գորիսում, Սիսիանում, Քաջարանում, Մարտունիում, Թալինում, Ապարանում, Մասիսում, Ախուրյանում, Աշոցքում, Նոյեմբերյանում, իսկ Սևանում, Վարդենիսում, Բերդում, Մեղրիում՝ նույնիսկ չառաջադրվեցին:

Ինչպես արդեն նշել ենք, կանանց ներկայության խնդիրը անփոփոխ

պահպանվել է նաև չորրորդ գումարման ԱԺ ընտրությունների նախընտրական ցուցակներում: Ընտրություններին մասնակցեցին 22 կուսակցություններ և մեկ դաշինք, որոնց թեկնածուների թիվը 1245 էր, այդ թվում 267-ը, այսինքն՝ 21,4 տոկոսը՝ կին: Սակայն մեր քաղաքական ներկապնակին քիչ թե շատ ծանոթ մարդու համար ի սկզբանե պարզ էր, որ խորհրդարան մտնելու լուրջ շանսեր ունեին, մեծ վերապահումներով, 4-5 կուսակցություն: Ինչ վերաբերում է մեկ տասնյակ և ավելի անդամների թվով պատգամավորական ֆրակցիա ունենալուն, ապա այստեղ հավակնությունները կրճատվել են և այդ թիվը հավասարվել է 3-ի: Այսպիսով, կուսակցությունների թվի նվազումը ուղիղ համեմատական է կանանց թվի նվազմանը:

Եթե դիտարկենք ընտրություններին մասնակցած կուսակցությունների նախընտրական ցուցակները, ապա կին թեկնածուների բաշխվածությունը ըստ տասնյակների այսպիսին էր (ներկայացնում ենք առաջին երեք տասնյակը).

**ՀՀ ԱԺ ՉՈՐՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (12.05.2007 թ.)**

| Կուսակցություններ, դաշինք | Թեկնածուների թիվը | կանանց | | 1-ին տասնյակ | 2-րդ տասնյակ | 3-րդ տասնյակ | մնացածը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թիվը | % | | | | թիվը | % |
| 1 ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 73 | 25 | 32.5 | 2 | 1 | 4 | 1 8 | 23,4 |
| 2 ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 12 | 2 | 16.6 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| 3 ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 71 | 12 | 16.8 | 0 | 2 | 1 | 9 | 12,6 |
| 4 «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 112 | 17 | 15,2 | 1 | 1 | 3 | 12 | 10,7 |
| 5 «ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 38 | 7 | 18.2 | 1 | 2 | 1 | 3 | 7,8 |
| 6 «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 51 | 10 | 19 | 3 | 1 | 2 | 5 | 9,5 |
| 7 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 40 | 9 | 22.5 | 1 | 2 | 1 | 5 | 12,5 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 31 | 4 | 12.8 | 1 | 1 | 0 | 2 | 6,4 |
| 9 | «ԻՄՊԻՉՄԵՆՏ» ԴԱՇԻՆՔ | 59 | 13 | 20.8 | 1 | 2 | 4 | 6 | 9,6 |
| 10 | ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 112 | 29 | 23.2 | 1 | 1 | 3 | 24 | 19,2 |
| 11 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 32 | 9 | 27.9 | 3 | 3 | 2 | 1 | 3,1 |
| 12 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 19 | 5 | 26 | 2 | 3 | 0 | 0 | 0 |
| 13 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 63 | 13 | 19.5 | 2 | 1 | 1 | 9 | 13,5 |
| 14 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 49 | 8 | 16 | 1 | 1 | 2 | 4 | 8 |
| 15 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 111 | 17 | 15.3 | 1 | 1 | 1 | 14 | 12,6 |
| 16 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 9 | 2 | 22.2 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 17 | ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 55 | 17 | 30,6 | 0 | 2 | 3 | 12 | 21,6 |
| 18 | ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 77 | 16 | 19,2 | 3 | 1 | 2 | 10 | 12 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | ՍԻԱՑՅԱԼ ԱԶԱՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 17 | 7 | 40,6 | 3 | 4 | 0 | 0 | 0 |
| | «ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 58 | 17 | 28,9 | 0 | 2 | 4 | 11 | 18,7 |
| 21 | ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 18 | 6 | 33 | 1 | 5 | 0 | 0 | 0 |
| 22 | ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 20 | 4 | 20 | 1 | 3 | 0 | 0 | 0 |
| 23 | «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 118 | 18 | 15,25 | 1 | 1 | 1 | 15 | 12 |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐԸ | 245 | 267 | 21,45 | 32 | 41 | 34 | 160 | 12,85 |

Աղյուսակի առաջին սյունակում ընտրություններին մասնակցած կուսակցությունների պատգամավորության թեկնածուների ընդհանուր թիվն է: Երկրորդ սյունակում կանանց քանակությունը և տոկոսն է թեկնածուների ընդհանուր թվում: Այնուհետև ցույց է տրված կանանց բաշխվածությունը առաջին, երկրորդ և երրորդ տասնյակներում: Չորրորդ սյունակում նշված են պատգամավորության թեկնածուների ցուցակում ընդգրկված, սակայն չորրորդ տասնյակից հետո տեղ զբաղեցրած կանանց թիվը և տոկոսը:

Ինչպես տեսնում ենք պատգամավորության թեկնածու կանայք կազմում են թեկնածուների ընդհանուր թվի 21,45 տոկոսը, իսկ անցողիկ տեղերում, այսինքն առաջին երեք տասնյակում տեղաբաշխված են նրանց ընդամենը 8,6 տոկոսը:

Ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո պարզ դարձավ, որ 5 տոկոսի շեմը հաղթահարել են ընդամենը հինգ կուսակցություն և նրանց ներկայության պատկերը Ազգային ժողովում այսպիսին է.

ա) ՀՀԿ - 64 պատգամավոր, որոնցից ընդամենը 2-ն են կին:

բ) ԲՀԿ - 25 պատգամավոր, որոնցից 3-ն են կին:

գ) ՀՅԴ - 16 պատգամավոր, որոնցից 3-ն են կին:

դ) Օրինաց երկիր – 8 պատգամավոր, որոնցից 1-ն է կին:

ե) Ժառանգություն – 7 պատգամավոր, որոնցից 3-ն են կին:

Անկախ 10 պատգամավորների մեջ կին չկա:

Առաջընթաց կարելի է համարել պատգամավոր կանանց թվի ավելացումը չորրորդ գումարման Ազգային ժողովում (9,2 տոկոս): Ի տարբերություն նախորդների, այս անգամ կանանց թիվը անցավ մեկ տասնյակը և խորհրդարանում այս անգամ ունենք 12 կին պատգամավոր, որը, սակայն, այս անգամ էլ չկազմեց պատգամավորների ընդհանուր թվի նույնիսկ 10 տոկոսը:

Անդրադառնալով մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանանց, պետք է նշել, որ երկրի

41 ընտրատարածքներում առաջադրված 120 թեկնածուներից ընդամենը 5-ն էին կին: Նախորդ բոլոր ԱԺ ընտրությունների փորձից ելնելով կարելի էր վստահորեն եզրակացնել, որ այդ ընտրություններում ևս մեծամասնական ընտրակարգով որևէ կին չի ընտրվի խորհրդարան, առավել ևս, որ մեծամասնականի մշտական պատգամավոր Հրանուշ Հակոբյանը այս անգամ ներկայացված էր ՀՀԿ-ի կուսակցական ցուցակով:

Անշուշտ պատկերը բոլորովին այլ կլիներ, եթե մեր քաղաքական այրերը, իրենց իսկ ընդունած 15 տոկոս քվոտան ընտրացուցակներում բաշխեին ոչ թե ընդհանրապես,այլ կոնկրետ անցողիկ տեղերում: Բայց դա օրենսդիրները չէին կարող անել, որովհետև, ի սկզբանե արդեն տարօրինակ օրենք էին ընդունել: Ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ կետը ձևակերպված է այսպես.

**Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության (կուսակցությունների, դաշինքի) ներկայացրած ընտրական ցուցակում առնըվազն 15 տոկոսը պետք է լինեն կանայք. ընդ որում, ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է կին լինի...»:**

Հարց է առաջանում, մեր իրականության մեջ քանի՞ կուսակցություն կարող է երկու տասնյակ կամ ավելի պատգամավոր ունենալ: ԱԺ չորրորդ գումարման ընտրություններում դրանց թիվը երեքն է: Չենք կարող չեզրակացնել, որ իբր կանանց թիվը ամրագրող հենց նույն օրենքը, կուսակցությունների հայեցողությանը թողնելով կանանց թվի ավելացումը անցողիկ տեղերում, արգելանք է դնում նոր Ազգային ժողովում նրանց թվի ավելացման վրա: Այդ, եթե կարելի է ասել, պարզ խորամանկությունը կամ միջազգային կառույցների աչքին թոզ փչելու հին ու փորձված հնարքը, որը խանգարում է կանանց մուտք գործել խորհրդարան, նոր չէ և լայնորեն օգտագործվել է բոլոր երկրներում:

Այսպիսով, խստագույնս կիրառելով օրենքի պահանջը, կանանց անունները հայտնվում են հիմնականում երկրորդ, իսկ ավելի հաճախ նաև երրորդ տասնյակից հետո: 15 տոկոսանոց քվոտան ընդունողները բնականաբար շատ լավ էին հասկանում, որ խորհրդարանի որոշումների վրա այդ թիվը որևէ որոշիչ ազդեցություն չի կարող ունենալ, առավել ևս, որ այն անցողիկ տեղերին չի վերաբերում:

Անժխտելի փաստ է, որ աշխարհի բոլոր երկրների հասարակությունները կառուցված են տղամարդկային տրամաբանությամբ, սակայն փոխվել են ժամանակները և ժողովրդավարության զարգացման հետ միջազգային հանրությունը խստագույնս պահանջ է դնում հաշվի առնել կանանց ներկայության կարևորությունը գենդերային հավասարության տանող մարտավարություն մշակելիս:

Մեր երկիրը, որը ձգտում է համաշխարհային և եվրոպական ինտեգրացիայի, չի կարող հաշվի չառնել այս հանգամանքը, քանի որ այն տնտեսական ծրագրերը, որոնք իրականացվում են մեր երկրում, անպայմանորեն իրենց մեջ ներառում են գենդերային հավասարության պահանջը: Այլապես, եթե քիչ թե շատ ուշադիր դիտարկենք որոշումների ընդունման համակարգից կանանց դուրս մղման մեխանիզմը, ապա անմիջապես կարելի է բացա-հայտել արժեքային չարաշահումների փաստը:

**Ո՞ր ընտրական համակարգերն են ավելի լավ հարմարեցված կանանց ընտրությանը: Ընտրական համակարգերն ինչպե՞ս են անդրադառնում կանանց ներկայացուցչության ավելացման վրա: Ինչպիսի՞ կոնկրետ գործոններ պետք է հետաքրքրեն կանանց ընտրական համակարգեր մշակելիս:**

Ահա հիմնականում այն հարցերը, որոնց պատասխանները գտնելով, զարգացածության տար-

բեր մակարդակ ունեցող երկրների կանայք տարբեր ձեռքբերումներ ունեն իրենց երկրներում պետական, հասարակական կյանքի վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցության գործում: Միջազգային փորձագետների կարծիքով՝ կանանց քաղաքական ներկայացուցչության համար կարևոր դեր են խաղում ընտրական համակարգերը: Ըստ որում, կանանց մեծ թվով ընտրությանը ավելի են նպաստում ընտրական զուգահեռ՝ համամասնական և մեծամասնական, իսկ ավելի շատ՝ միայն համամասնական ընտրակարգերը:

Մենք արդեն առիթ ունեցել ենք խոսելու մեծամասնական ընտրակարգից կանանց խուսափելու պատճառների մասին: Ինչ վերաբերում է համամասնական ընտրակարգին, ապա այստեղ էլ կանանց գրկաբաց չեն ընդունում: Գաղտնիք չէ, որ նախընտրա- կան շրջանում, հատկապես երբ որոշվում է, թե ովքեր են լինելու համամասնական ցուցակներում, կուսակցություններում ներքին խմորումները այն աստիճանի են շիկանում, որ հետևանքների մասին միայն գուշակություններ կարելի է անել: Այսպիսի մթնոլորտը ուղղակիորեն ազդում է այդ ցուցակների, հատկապես անցողիկ տեղերում կանանց թվաքանակի վրա, որովհետև ցուցակներում տեղ գրավելու հրմշտոցի մեջ բնականաբար կանայք կամ իրենք են հեռանում, կամ դուրս են մղվում դաշտից: Օրինակները ակնառու են չորրորդ գումարման նախընտրական ցուցակներում:

Բացի նշված փաստերից, այն կանայք, որոնք պատրաստ են և ուզում են զբաղվել քաղաքականությամբ, բախվում են քաղաքական, հասարակական այնպիսի դիմակայության, որը, մեղմ ասած, չի նպաստում նրանց մասնակցությանը ընտրական գործընթացներին:

Կանանց քաղաքականությանը մասնակցելուն խանգարող հանգամանքները Ստոկհոլմի համալսարանի փորձագետները բաժանում են երեքի.

**ա) քաղաքական,**
**բ) սոցիալ-քաղաքական,**
**գ)քաղաքական-հոգեբանական:**

**Քաղաքական:** Ի սկզբանե պետք է հաշվի առնել, որ մեր երկրում ոչ ոք լրջորեն չի զբաղվել կանանց ընտրական նախապատվությունների, ընտրություններին որպես թեկնածու մասնակցելու շարժառիթների ուսումնասիրությամբ, քաղաքականության մեջ կանանց որոշակի թվով ներկայության հասարակական պատվերի պահանջարկի գոյությամբ: Մեր կարծիքով, կանանց թեկնածության առաջադրման մեջ, մասնավորապես կուսակցական ընտրացուցակներում, ծանրակշիռ է քաղաքական համակարգի գործոնը: Այն փակում է կանանց ճանապարհը, որովհետև բացակայում է քաղաքական մշակույթը: Հատկապես մեր փոքրաթիվ ժողովրդի համար հսկայական թիվ կազմող կուսակցությունները (70 և ավելի), դրանց չզարգացած կամ ընդհանրապես գոյություն չունեցող կառուցվածքը, վստահության բացակայությունը, որին բախվում են կանայք, և, որքան էլ զարմանալի թվա, կուսակցությունների անտեղյակությունը կանանց շահերի մասին:

Երկրորդ խնդիրը, որին բախվում են կանայք ընտրությունների ժամանակ, ընտրողների քաղաքական անգրագիտությունն է, այսինքն քվեարկության ժամանակ որոշում կայացնելու և հետևողական ընտրություն կատարելու ընդունակությունը: Զարմանալի կարող է թվալ, բայց քաղաքական գրագիտությունը բոլորովին կախված չէ կրթական մակարդակից, չնայած դրան, այն և քաղաքական կամքը կարևոր դեր կարող են խաղալ իրավիճակի փոփոխության գործում: Սա հատկապես կարևոր է մեր երկրի պարագայում, քանզի ընտրական բյուլետեններում չի ներկայացվում կուսակցությունների ողջ ընտրացուցակը և չի կիրառվում ռեյտինգային համակարգը (երբ ընտրողը կարող է իր քվեով տեղաշարժել իր ընտրած թեկնածուի հերթական համարը), այս դեպքում միանգամայն պարզ է դառնում, որ համամասնական ընտրացուցակներում կանանց ներկայությունը անցողիկ տեղերում բացառապես կախված է կուսակցական վերնախավից:

Ոչ հեռու անցյալում, խորհրդային և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական համակարգի երկրների բոլոր մակարդակների ընտրովի

մարմիններում, բացի կանանց հատկացվող քվոտաներից, նրանց թիվն ավելանում էր նաև արհմիությունների և երիտասարդական կազմակերպությունների հաշվին, որոնցում նույնպես օգտագործում էին քվոտաներ: Անհրաժեշտ է նշել, որ քվոտաների, ինչպես նաև նշված լրացուցիչ աղբյուրների շնորհիվ, կանանց ներկայությունը ընտրովի մարմին-ներում, այդ համակարգի վերջին տասնամյակներում, հասնում էր 38 տոկոսի:

Սակայն, քանի որ մեր պայմաններում նշված կազմակերպությունները ընդհանրապես չեն մասնակցում ընտրություններին, ապա կանանց ներկայության խնդիրը նորից ու նորից կախված է մնում քաղաքական վերնախավի լավագույն ցանկությունից:

**Սոցիալ-տնտեսական**: Սոցիալ-տնտեսական պայմանները, ինչպես զարգացած, այնպես էլ երիտասարդ ժողովրդավարության երկրներում, շատ կարևոր դեր են խաղում կանանց ընտրովի մարմիններում ներգրավելու գործում: ՄԱԿ-ի տվյալներով, աշխարհում 1,3 միլիարդ մարդ ապրում է աղքատության մեջ, սրանց 70 տոկոսը կանայք են: Տարօրինակ զուգադիպությամբ, ըստ մեր վիճվարչության տվյալների, մեզ մոտ նույնպես գործազուրկների 70 տոկոսը կանայք են: Փորձագետները գտնում են, որ այսպես կոչված «զարգացող ժողովրդավարության» երկրներում տնտեսական ճգնաժամը ավելի է ուժեղացրել կանանց աղքատացման ռիսկը: Աղքատությունը, գործազրկության նման, ավելի ու ավելի է կանացի դեմք ստանում, իսկ հասարակության մեջ կանանց սոցիալական և տնտեսական վիճակը անմիջականորեն ազդում է քաղաքական ինստիտուտներին և ընտրովի մարմիններին նրանց մասնակցության վրա:

Եթե ավելի հակիրճ ձևակերպենք, ընտրություններին կանանց մասնակցությանը խանգարում են.

**ա) աղքատությունը,**

**բ) գործազրկությունը,**

**գ) անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը,**

**դ) ընտանեկան և մասնագիտական պարտականությունների ծանրաբեռնվածությունը:**

**Հոգեբանական-քաղաքական**: Ինչպես մեր, այնպես էլ աշխարհի շատ երկրներում (զարգացած և նոր զարգացող), ավանդույթները թելադրում են կնոջ առաջնային դերը որպես տնային տնտեսուհու և մոր: Ամբողջ աշխարհում հասարակության մեջ ուժեղ է այն գաղափարախոսությունը, որ կինը պետք է «իմանա իր տեղը»: Սակայն արագորեն զարգացող ժողովրդավարությունը թելադրում է իր օրենքները, և շատ երկրներ արդեն համակերպվելով իրավիճակին, բոլորովին այլ, դրական մոտեցում են ցուցաբերում գենդերային հավասարությանը: Օրինակ, ինչպես արդեն ներկայացրել ենք, Հյուսիսային Եվրոպայի երկրներում՝ Դանիայում, Շվեդիայում, Նորվեգիայում կուսակցությունները միանշանակ կիրառում են քվոտաներ, որոնք երաշխավորում են կուսակցական ցուցակներում կանանց 40-50 տոկոս ներկայություն: Հենց սա էլ որոշիչ և դրական դեր է խաղում այդ երկրներում կանանց ներկայացուցչության ավելացման գործում:

Գոյություն ունի նաև մեկ այլ հոգեբանական գործոն: Կինը դառնալով քաղաքական գործիչ, չի դադարում կին լինելուց: Հատկապես կանացիությունը պետք է մղվի առաջին պլան, քանի որ այն իր մեջ յուրօրինակ ստեղծագործական և ինտե-լեկտուալ ներուժ ունի: Այլա-պես՝ կանայք, որ դառնում են ղեկավարներ, պատգա մավորներ, անհարմարություն զգալով սկսում են ընդօրինակել տղամարդկային վարքագիծը, կարծես հաստատելով, որ կանացիությունը անընդունելի է այդ ասպարեզում: Այնինչ, քաղաքական, պետական գործունեություն ընտրած կանայք պետք է կարողանան հաղթահարել իրենց ներքին կաշկանդվածությունը, անհարմարության զգացումը և լինեն ինչպիսին որ կան:

Մեր կարծիքով, դեպի խորհրդարան տանող ճանապարհին կանայք պետք է ամենից առաջ հաղթահարեն ավանդական կարծրատիպերը, որոնք կանխորոշում են կանանց և տղամարդկանց դերերը, այնուհետև սեփական թեկնածության առաջադրման ժամանակ ինքնավստահու-

թյուն ցուցաբերեն և նկատի ունենան, որ քաղաքականությամբ զբաղվելը այդքան էլ դյուրին գործ չէ, և որ անհրաժեշտ է հաղթահարել երբեմն չափազանց բարդ արգելքներ:

Խոսելով որոշումների կայացման մակարդակներում և ընտրովի մարմիններում կանանց ոչ բավարար ներկայության և դրանց պատճառների մասին, հիմնականում վկայաբերել ենք գոյություն ունեցող կնոջ դերի կարծրատիպը, տղամարդկանց գործոնը, հասարակության անհանդուրժողականությունը:

Սակայն ճիշտ չէր լինի շրջանցել մեկ այլ, շատ կարևոր գործոն կանանց և կանանց հասարակական կազմակերպությունների անկազմակերպ, ոչ գործնական, իրենց ներուժը, կարողությունները անհրաժեշտ վճռականությամբ չներկայացնող և հասարակու-թյան համար կայացվող որոշումներում իրենց ներկայության անհրաժեշտությունը պարտադրելու ոչ բավարար կարողությունը: Այնինչ, ինչպես ասում են, «խեղդվողի փրկությունը հենց իր՝ խեղդվողի ձեռքին է»:

Հյուսիսային Եվրոպայի երկրներում կանայք մեծ հաջողությունների հասան, երբ որոշեցին հասարակությանը և իրենց երկրների քաղաքական վերնախավերին ապացուցել իրենց ներկայության կարևորությունը: Նրանք ինքնակազմակերպվելով ճշգրտեցին իրենց նպատակները և հասարակական կազմակերպությունները վերածեցին շարժման: Աստիճանաբար, կոնկրետ գործունեությամբ, հասարակությանը ստիպեցին գնահատել և արժևորել իրենց ներուժը կարևոր որոշումների ընդունման մեջ: Նրանք իրենց աշխատանքները ակտիվացրին նաև կուսակցությունների ներսում: Ահա այսպիսի իրավիճակում, անշուշտ ոչ միանգամից, աստիճանաբար, բնականոն ձևով, ավելացավ կանանց ներկայությունը ընտրովի և գործադիր մարմիններում, և ինչպես նշել ենք, նրանց թիվն այսօր խորհրդարաններում կազմում է 38-45 տոկոս:

Սակայն այստեղ պետք է մեծ վերապահում անել: Այս ամենը կատարվեց վերջին 30-35 տարիների ընթացքում և, որ ամենակարևորն է, հասարակության բոլոր խավերի սոցիալական հասունացման պայմաններում:

**Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը մեր երկրում:**

Առաջինը, մեր հասարակությունը սոցիալապես հասուն չէ և նաև պատրաստ չէ ընդառաջելու կանանց:

Ճիշտ է, մեզ մոտ բարձր է կանանց կրթական մակարդակը, կան բազմաթիվ քաղաքականապես հասուն և ակտիվ կանայք, սակայն անժխտելի են նրանց ամբիցիաները, որոնք խանգարում են միավորմանը, բռունցք դառնալուն: Մի առիթով, երբ ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի ակտիվիստները մեր կանանց հետ ընտրություններին վերաբերող սեմինար էին անցկացնում, մեր այն հարցին, թե ինչու եք շտապեցնում, թողեք ամեն ինչ իր հունով գնա, մեր նորաստեղծ ժողովրդավարությունը դեռ ճանապարհ ունի անցնելու, չէ՞ որ Հյուսիսային Եվրոպայի երկրներում էլ կանանց խնդիրը լուծում է ստացել ընդամենը վերջերս, մեզ պատասխանեցին, որ աշխարհում գործընթացները արագացել են և չի կարելի հետ մնալ: Այստեղ հարց է առաջանում. իսկ մի՞թե կարելի է միանգամից հեղափոխություն առաջացնել հասարակական գիտակցության մեջ, պատասխանը միանշանակ է՝ իհարկե ոչ: Մենք վերը բերել ենք Շվեդիայի խորհրդարանի նախկին խոսնակի խոսքը, որտեղ նա նշում է, թե քանի տասնյակ տարի է անցել, մինչև իրենք որոշակի արդ-յունքի են հասել կանանց իրավունք-ների բարելավման հարցում, և որ պայքարը դեռ շարունակվում է:

Վերադառնալով մեր կանանց խնդիրներին՝ նշենք, որ ոչ լրիվ երկու տասնյակի հասնող կանանց խնդիրներով զբաղվող ակտիվ ՀԿ- ների (դրանց թիվը 60-ից ավելի է) հիմնականում ղեկավարները, աջակցություն չգտնելով մեր կառավարության որևէ կառույցի կողմից, իրենց նետում են միջազգա-յին կառույցների գիրկը, որոնք էլ օգտագործելով և նրանց, և նրանց ղեկավարած ՀԿ-ները, կատարում են իրենց տվյալ պահի քաղաքական խնդիրը: Ինչ վերաբերում է կանանց կազմակերպությունների կառուց-վածքի ամրապնդմանը, նրանց խնդիրների ընդհանրացմանը և կոորդի-նացմանը, որը կարող է նպաստել դրանց արժևորմանը հասարակության և

երկրի ղեկավարության կողմից, ապա այդ հարցերում դոնորները անտարբեր են և նույնիսկ խանգարում են: Այս մասին հստակ նշված է CEEL-ի հանձնարարությամբ վաշինգտոնյան գրասենյակի իրավաբանների կողմից 2002 թվականին մեր երկրի կանանց վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրության մեջ: Զեկույցում ասվում է.

**«...դոնոր հանրությանը բացարձակ չի հետաքրքրում ՀԿ-ների շարունակական գոյության հարցը: Մի շարք ՀԿ-ներ, որոնք արդեն ճանաչված են միջազգային հանրության կողմից, ստանում են ֆինանսավորման մեծ մասը: Միջազգային դոնոր կազմակերպությունները հակված են ապավինելու այս կազմակերպություններին և հազվադեպ են փնտրում նոր այլընտրանքային խմբեր»:**

Միջազգային կառույցների հովանու ներքո զանազան հավաքները, հռետորական հարցադրումներն ու ելույթները ոչ մի նստվածք չտալով, ակտիվանում և պասիվանում են տարբեր մակարդակի ընտրություններից առաջ և դրանց ընթացքում, ապա մարում, որևէ քաղաքական առիթով նորից ակտիվանալու միտումով: Շատ հետաքրքիր է, որ կանանց ՀԿ-ների 22 տոկոսը, մեր հարցախույզի ժամանակ դեմ արտահայտվեց նաև քվոտաների ներդրմանը:

Մեր կարծիքով, կանանց և կանանց կազմակերպությունների նման անորոշ, միաժամանակ ամբիցիոզ իրավիճակը նրանց թույլ չի տալիս տեսնել այն իրական խոչընդոտները, որոնք խանգարում են կանանց փուլ առ փուլ կարգավորելու հարցերը և հասնելու իրենց նպատակներին:

Աշխարհի պետություններից շատերը, կանանց ներուժը օգտագործելու նպատակով, առանց վախենալու, միաժամանակ մի քանի մակարդակներում ներդրել են քվոտաներ և հասել են որոշակի դրական արդյունքների:

Ստոկհոլմի համալսարանը, ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտի (International IDEA) հետ, 2004 թվականին, ուսումնասիրելով աշխարհի 96 պետություններում քվոտաների ներդրման պատկերը, գտել են, որ այն նպաստել է կանանց ներուժի առաջընթացին: Քվոտաներ օգտագործվել են չորս մակարդակներում.

**ա) քվոտաներ սահմանադրության մեջ,**

**բ) քվոտաներ ընտրական օրենսգրքում,**

**գ) սահմանադրական կամ օրենսդրական քվոտաներ տեղական ինքնակառավարման մարմինների համար,**

**դ) կուսակցական թեկնածուների քվոտաներ:**

Ուսումնասիրված երկրների ցուցակը գլխավորող Ռուանդայի ներկայությունը, որտեղ կանանց թիվը պառլամենտում հասնում է 48,8 տոկո-սի, մենք նոնսենս ենք համարում: 8 միլիոն բնակչությամբ այս երկիրը երկարատև քաղաքացիական կռիվներից և ցեղասպանությունից հետո ընդամենը 13-15 տարի առաջ է անկախություն ստացել: Այդ երկրի բնակչության ընդանենը 0,3 տոկոսը բարձրագույն կրթություն ունի: Թերթեր գոյություն ունեն միայն քաղաքներում, որոնք լույս են տեսնում շաբաթը կամ երկու շաբաթը մեկ անգամ: Ռադիո գոյություն ունի վերջին 10-15 տարիների, հեռուստատեսություն նոր միայն փորձում են ներդնել: Քաղաքներում ապրում է բնակչության ընդամենը 3 տոկոսը, իսկ գյուղերում կացութաձևը ցեղախմբային է: Ավելացնենք, որ աֆրիկյան այս պետության մեջ իրականացվում է միջազգային կառավարում: Այնպես որ, այս երկրում դեմոկրատական զարգացումների և հասարակության գիտակցական բարձր մակարդակի մասին խոսք լինել չի կա- րող:

Այս պետության մասին մանրա-մասնելու իմաստն այն է, որ միջազ-գային կառույցները, չգիտես ինչու, փոխանակ մեզ օրինակ բերելու Հյուսիսային Եվրոպայի երկրները, որտեղ հասարակությունը կանանց սկսել է գնահատել ըստ արժանվույն և սոցիալական հասունության արդյունքում, ցուցանում են հետամնաց Ռուանդայի օրի-

նակը, որը ոչ մի կերպ չի կարող աղերսներ ունենալ հասարակական գիտակցու-թյան զարգացածության աստիճանի և դրա արդյունքում կանանց դերի կարևորման և բարձրացման հետ: Այս եր- կրում քվոտաներ օգտագործվել են երեք մակարդակնե- րում՝ սահմանադրության մեջ, ընտրական օրենսգրքում, սահմանադրական կամ օրենսդրական քվոտաներ տեղական ինքնակառավարման մարմինների համար:

Զավեշտական է, որ այս երկրին հետևում են Շվեդիան, Դանիան, Նիդեռլանդները, Նորվեգիան և այլն: Առանձնացնելով եվրոպական բոլոր զարգացած երկրները, նշենք, որ այստեղ օգտագործվել են հիմնակա-նում կուսակցական քվոտաները, բա-ցառությամբ Ֆրանսիայի, որը բացի գոյություն ունեցող չորս մակարդակի քվոտաներից 1999 թվականին ուղղում է մտցրել երկրի սահմանա-դրության մեջ՝ բոլոր մակարդակ-ներում կանանց 50 տոկոս ներկա-յության վերաբերյալ, չկատարող-ների նկատմամբ կիրառելով ֆինան-սական սանկցիաներ:

Իսկ Հայաստանն այն պետու-թյուններից է, որ քվոտաներ կանանց համար ամրագրել է Ընտրական օրենսգրքում և կուսակցական ցու-ցակներում: Սակայն, ցավալիորեն պետք է նշել, որ ուսումնասիրված 96 պետությունների շարքում Հայաս-տանը 88-րդ տեղում է Հասարակա-ծային Գվինեայից հետո: Նրան հա-ջորդում են Շրի Լանկան, Հաիթին, Եգիպտոսը, Լիբանանը, Բանգլադե-շը, Նիգերիան, Իրաքը, Աֆղանըստա-նը և Սիերա Լեոնան: Վերջին երեք պետություններում ընդհանրա-պես կին պատգամավորներ չկան:

Ամփոփելով նշենք, որ չնայած միջազգային հանրության գործա-դրած ջանքերին, կանանց առաջ-ընթացը համաշխարհային թատերա-բեմում դանդաղորեն է արձանագըր-վում, նույնիսկ այն պայմաններում, երբ միջազգային ատյաններն ընդու-նում են «դրական խտրականու-թյունը», որը կարող է կիրառվել կանանց հարցում:

Ուսումնասիրված պետություն-ների առաջին մեկուկես տասնյակը սկսելով 48,8 տոկոսից ավարտվում է խորհրդարաններում կանանց ներ-կայությունը ցուցանող 30 տոկոսով: Այնուհետև 26 տոկոսից այդ թիվը իջ-նում է մինչև 0 տոկոս:

Այն իրողությունը, որ աշխարհի շատ երկրներում կանանց ընտրու-թյանը խանգարող օրենսդրական արգելքները վերացվել են և նույնիսկ ձևականորեն ընդունվել է քվոտայի գաղափարը, ինչպես վերը տեսանք, դեռ չի նշանակում, որ կանայք հա-վասար հնարավորություններ են ստացել: Պետք է հասկանալ, որ մի-այն արգելանքների վերացումը բավարար չէ: Ընդունված քվոտանե-րի համակարգը աշխատում է, եթե ապահովված են դրանց իրացման գործ-ընթացները և ստեղծված են մեխա-նիզմներ: Մի երկրում դա կարող է կատարվել ընդամենը միջազգային հանրության պա-հանջից ելնելով, ժողովրդավա-րության իմիտացիա ստեղծելու հա-մար (աֆրիկյան և ասիական մի շարք պետություններ), մեկ այլ դեպքում դա կարող է բխել հասարակական պահանջից (Հյու-սիսային Եվրոպայի պետություններ), ինչը, բնականա-բար, հասարակա-կան գիտակցու-թյան զարգացածու-թյան ցուցանիշ է և օգտակար պե-տության առաջ-ընթացի համար:

Իսկ այս ամենը չի կարող իրա-կանություն դառնալ, եթե երկրում չկայա-նան արդար ընտրու-թյուններ և հա-սարակությունը վստահ չլինի, որ իր

**Սահմանադրության մեջ քվոտաներ օգտագործել են 14 պետություն:**

**Ընտրական օրենսգրքում քվոտաներ օգտագործել են 32 պետու-թյուն:**

**Սահմանադրական կամ օրենսդրական քվոտաներ տեղական ինք-նակառավարման մարմիններում ընտրվելու համար օգտագործել են 17 պետություն:**

**Կուսակցական քվոտաներ, եվրոպական պետությունները ներառյալ, օգ-տագործել են 61 պետություն:**

**Կան նաև 15 պետություններ, որտեղ քվոտաներ կամ ավելի վաղ են գո-յություն ունեցել, կամ նոր են առաջարկվում դրանք օրենսդրորեն կիրառել:**

քվեն է ընտրությունների արդյունքների որոշիչը: Այլապես կանանց ընտրվելու խնդիրը ընդհանրապես օրակարգային չէ, ավելին, այն չի կարող առաջին պլան մղվել:

Քվոտաների ներդրման միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն առավել հեշտ է իրականացնել քաղաքական նոր հա-մակարգի պայմաններում, քանզի հնում տեղերը վաղուց զբաղված են: Իսկ ընդհանրապես, առավել հեշտ է քվոտաների ներդրումն սկսել նշանակովի պաշտոններից:

Այստեղ չենք կարող շրջանցել ևս մի կարևոր հանգամանք. եթե քվոտաների ներդրումը չիրականացվի գիտակցված և լրջորեն ուսումնասիրված կանոններով, ապա այն կարող է հարվածի տակ դնել ժողովրդավարական գործընթացների հիմքերը, ըստ որի միայն ընտրողները կարող են քվե տալ. այս կամ այն թեկնածուին:

Հայաստանն աստիճանաբար ինտեգրվելով համաշխարհային տնտեսական և քաղաքական գործընթացներին հայտնվել է իր համար նոր տիրույթում, որտեղ խաղի կանոնները բոլորովին այլ են, և պարտավորություններ է ստանձնել խաղալ այդ կանոններով: Սակայն չի կարելի չնկատել, որ այդ կանոններն ու պահանջները շատ ժամանակ օտար են, երբեմն նույնիսկ անընդունելի մեր ազգային հոգեկերտվածքին: Ավելին, պահանջների մեծ մասը, որոնք մեր երկրին ներկայացված են միջազգային կառույցների կողմից, քննություն չեն բռնել նույնիսկ Արևմուտքի երկրներում, սակայն դրանց փորձարկումները պարտադրվում են մեր հասարակությանը գրանտների կամ վարկերի ձևով:

Նկատի ունենալով վերը շարադրվածը և կանխելու համար այն ամենը, ինչը կարող է խաթարել մեր ազգային ինքնությունը, երկրիս պատկան մարմինները պարտավոր են նախաձեռնությունը վերցնել իրենց ձեռքը, առանձնացնել լավն ու առաջավորը, մերժել և չընդունել այն ամենը, ինչը կարող է վտանգել մեր ազգային անվտանգությունն ու ազգային ինքնությունը:

Քանի որ մեր նյութի խնդրո առարկան կանանց համար քվոտաների ներդրմանը վերաբերող հարցերն են, կուզենայինք նշել, որ իշխանությունները պետք է ավելի մեծ և լուրջ ուշադրության արժանացնեն կանանց իրավունքների պաշտպանության խնդիրները: Միջազգային կառույցների գնահատմամբ, կանանց իրավիճակի բարելավմանն ուղղված ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորումն ու ամրապընդումը լրջորեն նպաստում են պետության ներուժի ճիշտ ուղղորդմանը: Հենվելով 1995 թվականին Պեկինում կայացած կանանց հարցերով համաշխարհային չորրորդ համաժողովի որոշումների վրա, աշխարհի երկրների համարյա երեք չորրորդը ստեղծեցին կանանց հարցերով զբաղվող տարբեր մակարդակների ազգային մեխանիզմներ, որոնց օգնությամբ պետք է փոխվեր կանանց իրավիճակը: Այդ մեխանիզմների հիմնական խնդիրը երկրի ղեկավարությանն աջակցելն է օրենսդրական, ինչպես նաև երկրի զարգացման բոլոր ուղղություններում, ծրագրերում և նախագծերում գենդերային հիմնահարցերը ներառելուն:

Մեր տարածաշրջանում մենք միակն ենք, որ չունենք նման կառույց: Ադրբեջանը, օրինակ, վաղուց ունենալով նախագահին առընթեր կանանց հարցերի կոմիտե, 1996 թվականին, նախագահի հրամանագրով ստեղծեց Ընտանիքի, կանանց և երեխաների հարցերի պետական կոմիտե: Մինչ այդ կոմիտեի ստեղծումը, բնականաբար, նշված բոլոր հարցերը գտնվում էին համապատասխան նախարարությունների իրավասության ներքո: Նախարարություններից չխլելով այդ խնդիրների լուծումները, կոմիտեն լիազորություն ստացավ կոորդինացնել և վերահսկել դրանք: Ստեղծվեց վերլուծական կենտրոն, որն իրականացնում է օրենսդրության գենդերային փորձաքննություն: Կատարված աշխատանքները տրվում են կամ կառավարությանը, կամ խորհրդարանին և լոբբինգ է արվում առաջարկությունների իրականացման համար:

Վրաստանում ձևավորված է այդպիսի երկու մարմին՝ Ազգային ժողովի նախագահին առընթեր Գենդերային հավասարության հարցերի կոնսուլտատիվ խորհուրդ և Գենդերային հավասարության հարցերի պետական հանձնաժողով: Խորհուրդը բոլոր օրենքներում և օրենսդրական ակտերում պարտավոր է ապահովել գենդերային հավասարակշռությու-

նը, լոբբիստական աշխատանքներ իրականացնել և քննարկման առարկա դարձնել այն հարցերը, որոնք ուղղակիորեն կապված են գենդերային հավասարության հետ: Իսկ հանձնաժողովի պարտականությունների մեջ է մտնում այդ օրինագծերի իրականացման վերահսկողությունը:

Նմանօրինակ կառույցներ կան նաև ԱՊՀ հիմնականում բոլոր երկրներում, բացի միջինասիական որոշ պետություններից և Հայաստանից:

Եվրոպական շատ երկրներում այդպիսի կառույցները տարբեր անուններ ունեն: Օրինակ, Իտալիայում գոյություն ունի Հավասար հնարավորությունների նախարարություն, որի անվանումն իսկ արտահայտում է հասարակության մեջ գենդերային հավասարություն ստեղծելու եվրոպական տենդենցը, այլ երկրներում այն կոչվում է «Գենդեր, ընտանիք և երեխաներ»:

Համադրելով այս ամենը՝ կարելի է ասել, որ հասունացել է ժամա-նակը մեր երկրում նույնպես ձևավորելու որոշակի լիազորություններով օժտված նմանատիպ ինքնուրույն կառույց: Խոսքը ներկայումս սոցապ նախարարության կազմում կամ նախկինում վարչապետին առընթեր գործող կանանց հարցերի ձևական հանձնաժողովի մասին չէ, այլ լուրջ, պետական մարմնի, որը կգոհացնի մեր կանանց հասարակությանը և կբավարարի ներրկայիս քաղաքական պահանջները: Այն կարող է լինել և կառավարության կազմում, և նախագահին առընթեր, և Ազգային ժողովի կազմում:

Մեր իշխանությունների կողմից նմանօրինակ կառույցի ստեղծումը կարող է դառնալ առաջին գործնական լուրջ քայլը կանանց իրավունքների խնդիրը պետականորեն կարգավորելու ճանապարհին: Գործնական, որովհետև տեսական ու ձևական դաշտում արդեն մեծ աշխատանք է կատարվել: Հայաստանը ստորագրել է այդ խնդրի կարգավորմանն ուղղված միջազգային համաձայնագրեր, կազմել է ազգային ծրագրեր, անցկացնում է բազմաթիվ խորհրդակցություններ, քննարկումներ, գրվել են վերլուծություններ և հաշվետվություններ: Այս գործընթացում ներգրավված են ինչպես պետական, այնպես էլ միջազգային և տեղական հասարակական կառույցներ: Տեսականորեն գործողությունների ծրագիրը ընթանում է նախատեսված սցենարով, գործնականում՝ խնդիրը տեղից չի շարժվում:

2004 թվականի ապրիլին կառավարության կողմից հաստատվեց 2004-2010 թվականների ընթացքում ՀՀ-ում կանանց հասարակական դերի բարձրացմանն ուղղված ծրագիրը, միջոցառումների ցանկը, հանձնարարականներ նախարարություններին և բոլոր գերատեսչություններին: Այստեղ ընդհանուր առմամբ ներկայացված են կանանց հիմնահարցերի լուծումներին ուղղված պետական քաղաքականության ուղղություններն ու առաջնահերթությունները:

Չառանձնացնելով քվոտաների խնդիրը, ծրագիրը պետք է լուծի հիմնական այն հարցերը, որոնք պետք է ապահովեն կանանց և տղամարդկանց քաղաքական, տնտեսական, հասարակական հավասար հնարավորությունները (գենդերային հավասարության սկզբունքով):

Ամեն ինչ կարծես լավ է, արտաքին պահանջները բավարարված են, սակայն, ինչպես ասում են, «սայլը տեղից չի շարժվում»: Չնայած կրկնվելուն, ընդամենը մեկ դիտարկումով կուզենայինք եզրափակել կանանց համար նախատեսվող քվոտաների անհրաժեշտության մասին մեր ուսումնասիրությունը և համեմատությունը այլ պետությունների հետ: Մեր երկրում իրականացվող միջազգային տնտեսական, հասարակական, քաղաքական խնդիրներին վերաբերող բոլոր ծրագրերում հատուկ ուշադրություն է դարձված գենդերային խնդիրներին, որն էլ իր մեջ ներառում է քվոտայի գաղափարը և վաղ թե ուշ, որպես մեր երկրում ժողովրդավարության զարգացման բացթողում, միջազգային հանրությունը շեշտադրում կանի այդ հարցին:

Մեր կարծիքով, շատ լավ կլիներ, որ երկրի պատկան մարմինները, չսպասելով դրան, ինքնուրույն, սեփական մոտեցումներով ու պատկերացումներով, մեր պետությանն ու ազգային ինքնությանը հարիր լուծում տային խնդրին, դրանով իսկ շահելով և միջազգային կառույցների, և երկրի կանանց հասարակության դրական վերաբերմունքը:




Թարգմանությունը՝
ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆԻ

## ՄՈՒՏՔ

*Հա հետո պիտի դառնար համաշխարհային հանրությանը հայտնի ընկերվար, միջազգային ընկերվարական բյուրոյի ազդեցիկ անդամ, հիմնադրեր Ֆրանսիայի ընկերվարական կուսակցությունը, «Յումանիտեն», հանուն խաղաղության համընդհանուր գործադուլի կոչ անելուց երեք օր անց, առաջին աշխարհամարտի սանձազերծումից երեք օր առաջ, Փարիզում, Մոնմարտր փողոցի «Քրուասան» սրճարանում ահաբեկչի գնդակից ընկներ ու սպանվելուց տասը տարի անց իր արժանի տեղը գտներ Պանթեոնում:*

*1896 թ.-ին Ժան Ժորեսը Ֆրանսիայի Ազգային ժողովի 34-ամյա պատգամավոր էր, ընդամենը երեք տարի առաջ էր խորհրդարանական ընտրվել: Սակայն դա չխանգարեց, որ համիդյան նախճիրների բոթն ստանալուն պես, հիմնավորապես ծանոթանա Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Գամբոնի վավերական ճեպագրերին, միջազգային մամուլի հրապարակումներին, Ազգային ժողովում, ժամ ու կես տևած ելույթում, ոչ միայն դատապարտի Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականությունը, այլև իր իսկ կառավարության, ապա նաև Մեծ Բրիտանիայի, ցարական Ռուսաստանի երկդիմի դիրքորոշումը հայկական հարցի նկատմամբ: Ընկերվար պատգամավորի ելույթը այնպիսի ցնցող*

տպավորություն թողեց, ներազդեցություն ունեցավ, որ Մարսել Պրուստի նման խոշորագույն արձակագիրը, որն այդ տարիներին գրում էր «Ժան Սանեոյ» վեպը, Ժորեսին իր ամենաինքնատիպ կերպարներից մեկի՝ խորհրդարանական Գուզոնի նախատիպը դարձրեց:

Ժան Ժորեսը հայերի դատով սկսել էր հետաքրքրվել նախքան Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելը: Դեռևս 1895 թ. հունվարի 27-ին, ջարդերի գույժը Եվրոպա հասնելուն պես, նա «Լա փըթիթ ռեփյուբլիք» («Փոքրիկ հանրապետություն») պարբերաթերթում հրապարակում է «Հայաստանում» ծավալուն հոդվածը, որտեղ ահազանգում է, թե «Կարմիր սուլթանը»՝ Աբդուլ Համիդ 2-րդը ինչպես է իր կանոնավոր զորաբանակներով ու քրդական ոճրախմբերով բնաջնջում հայերին:

Խորհրդարանական նրա հաջորդ՝ 1897 թ. փետրվարի 22-ի և մարտի 15-ի ելույթները անհամեմատ խիստ ու անողոք էին, Ժորեսը կատարված ողբերգության՝ 200.000 (իր հիշատակած թիվն է) անմեղ հայերի սպանդի համար ուղղակի մեղադրում էր Եվրոպայի այն կառավարություններին, քաղաքական ու հասարակական գործիչներին, որոնք 1895-96 թվականների կոտորածի քստմնելի մանրամասներին հասու եղել ու մեղսակից լռություն էին պահպանել, փաստորեն դարձել էին սուլթանի հովանավորներն ու համախոհները:

Հայերի դատի հետևողական պաշտպանությունը Ժան Ժորեսի համար սոսկ խորհրդարանական պարտականություն չէր: Նա թուրքական կոտորածները իրեն հատուկ հռետորական հրայրքով դատապարտեց 1903 թ. փետրվարի 15-ին Փարիզում կայացած հանրահավաքում, իսկ Ադանայի դեպքերից հետո, 1909 թ. ապրիլի 4-ին, իր խմբագրած «Յումանիտեում» առաջիններից մեկը փաստեց, որ երիտթուրքերը էությամբ նույն հետադեմներն են և սուլթանական մոլագարությամբ ու դաժանությամբ շարունակում են հայերի զանգվածային սպանդը:

***Բացի պատմական նշանակությունից, ինչո՞վ են այսօր կարևորվում Ժան Ժորեսի խորհրդարանական ելույթները: Իրենց այժմեականությամբ, ցեղասպանության ընդունման ու հատուցման անխուսափելիությամբ: Ժամանակակից թուրք միջազգայնագետները սիրում են ճամարտակել, թե իբր 1915 թվականի հայերի «տեղահանությունն» ու «ցավալի կորուստները» (իրենց ձևակերպումն է) պայմանավորված էին համաշխարհային պատերազմով, այն հանգամանքով, որ հայերը կռվում էին հակառակորդի բանակում, ձգտում էին ներսից խարխլել ու տապալել թուրքական պետականությունը: Չանդրադառնանք այն իրողությանը, որ Վանի, Մուսա լեռան հերոսամարտերը սոսկ ինքնապաշտպանական բնույթ են ունեցել, դարձյալ վերհիշենք Ժան Ժորեսի նման միջազգային վարկ ու համբավ ունեցող քաղաքագետի խորհրդարանական վկայակոչումները, որոնք անառարկելիորեն փաստում են, որ արևմտահայության բնաջնջումը հղացել էր դեռևս Աբդուլ Համիդ 2-րդ արնախում սուլթանը, իրագործել սկսել էր 1895 թ.-ից, երբ Օսմանյան կայսրությունը ոչ պատերազմում էր, ոչ էլ հայերն էին «ներսից» դավեր նյութում: Եվ դեռևս հայտնի չէ, եթե ճիշտ ժամանակին չհնչեր Ժան Ժորեսի, Վիլյամ Գլադստոնի նման մարդասերների բողոքը, «կարմիր սուլթանը», որը զոհերի թիվը 300.000 էր հասցրել, իր նենգադավությունը չէ՞ր իրագործի, տխուր ավարտին չէ՞ր հասցնի: Ուրեմն մի անգամ էլ կրկնենք ու պնդենք, որ հայերի ցեղասպանությունն իրականում սկսվել է 1895 թ.-ից, ընդհուպ 1922 թ.-ը շարունակվել է, բայց իր տխուր ավարտին չի հասել: Չէ՛ր կարող հասնել:***

Որպես մատենագիտական հավելում ավելացնենք, որ Ժան Ժորեսի՝ հայերեն առաջին անգամ ներկայացվող խորհրդարանական այս երեք ելույթները գրառվել են Ֆրանսիայի Ազգային ժողովի սղագրական ծառայությունների կողմից, հրատարակվել «Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» (խորհրդարանական քննարկումներ), իսկ առանձին գրքով՝ բոլորովին վերջերս՝ 2007 թ.-ին, Փարիզում: «Պետք է փրկել հայերին» խորագրով այդ արժեքավոր գիրքը հրատարակության է պատրաստել, նախաբանն ու վերջաբանը գրել, ծանոթագրել է Վենսան Դյուքլերը: Շնորհակալություն նրան:

ԹԱՐԳՄԱՆԻՉ

## 1896 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ԵԼՈՒՅԹԸ

Պարոնա՛յք, ես ավելի մեծ հույսեր կտածեի Ֆրանսիայի արտաքին գործերի պարոն նախարարի սուլթանին հղած մտերմիկ դիտողության արդյունավետության վրա, եթե չհիշեի, որ նման հանդիմանագրեր բազմիցս հղվել ու ոչ մի արդյունք, հետևանք չեն ունեցել: Արտաքին գործերի պարոն նախարարի բացատրություններից հետո, ինձ թվում է, հարցը նույնությամբ՝ անլուծելի էլ մնում է:

Պարոն նախարար, ինձ հիացրեց այն համարձակությունը, որով դուք այս ամբիոնից փորձեցիք տեղաշրջել պատասխանատվությունները, նրանց հասցեին, որոնց կոչում եք հայերի արտաքին սադրիչներ, հնչեցրիք խիստ արտահայտություններ, անգամ նախազգուշացումներ, որոնք որոշ սպառնալիք էին պարունակում: Դուք, ինչպես հարգարժան դը Մյունը[1], հավակնում եք կարծել, որ նրա՛նք են իրենց անխոհեմությամբ ու հրահրումներով կրում Օսմանյան կայսրության հայրենակիցների վրա տեղացող չարիքների մեծ մասի պատասխանատվությունը: Միայն թե դուք մոռացաք ավելացնել, գոնե չավելացրիք՝ նույն պաթոսով, որով հանդես եկավ պարոն դը Մյունը, որ նրանք ինչպիսի դատապարտման էլ ենթարկվեն, հաստատ սադրիչներ չեն: Դուք մոռացաք հիշեցնել, որ նրանց պատասխանատվությունից առաջ, եթե, իհարկե, ունեն պատասխանատվություն, թերևս նաև մի քանի անհատների կամ կոմիտեների պատասխանատվությունից առաջ, չէ՞ որ մի ամբողջ ժողովուրդ է նահատակվել ու կոտորվել, կրկնում եմ՝ մոռացաք հիշեցնել, այդ անձանց պատասխանատվությունից առաջ, շատ առաջ, հենց իր՝ սուլթանի, ինչպես նաև ամբողջ Եվրոպայի պատասխանատվությունը:

### Սուլթանի պատասխանատվությունը

Պարոնայք, տասնութ տարի առաջ, Ֆրանսիայում ու Լոնդոնում հայկական կոմիտեներ ստեղծվելուց շատ առաջ, Եվրոպան համախմբվեց Բեռլինի վեհաժողովում, ընդունեց Թուրքիայի հայ հպատակներին պաշտպանելու անհրաժեշտությունը: Ահա արդեն տասնութ տարի է, որ Եվրոպան Բեռլինի վեհաժողովի դաշնագրով պաշտոնապես ստանձնել է հայերի անվտանգության, կյանքի ու պատվի պաշտպանությունը: Միաժամանակ որոշվել է, որ Եվրոպան ամենամյա հաշվետվություններ է պահանջելու, ամենամյա վերահսկողություն է սահմանելու այն բարենորոգումների ու երաշխիքների կապակցությամբ, որ սուլթանը խոստացել է իրագործել Փոքր Ասիայի իր հպատակների նկատմամբ: Շատ լավ, բայց ո՞ւր են այդ հաշվետվությունները: Ո՞ւր է վերահսկողությունը: Որտե՞ղ են միջամտությունները, որ Եվրոպան է պաշտոնապես խոստացել: Երբ



Ֆրանսիայի Ազգային ժողովի շենքը

այս պարտավորությունների ձախողման հանդեպ, Եվրոպայի անտարբերության հանդեպ, որը շրջում է գլուխն ու թույլ է տալիս, որ Փոքր Ասիայում ամենավերջին օրինազանցումները հրահրվեն, և գոհանում է Օսմանյան կայսրությունը մասնատելով, հանուն սրա կամ նրա շահի խլելով Բուլղարիան, Բոսնիան, Հերցեգովինան, Կիպրոսը, ապա Թուրքիային մնացած գավառներում օրինախախտումներ է թույլ տալիս, որոնք իր առաջին միջամտության պատճառը դարձան, որոնք թերևս ավելի ուշ նոր միջամտությունների կամ նոր մասնատումների պատճառ պիտի դառնան... զարմանալի՞ է, որ հայերը, որոնք եվրոպական այս խարդավանքների, խոստումնազանցության զոհերն ու նահատակներն են, հասնեն մեր մայրաքաղաքները՝ Փարիզ, Լոնդոն, փորձեն փոքր-ինչ շարժել Եվրոպայի գութը, սևեռել ուշադրությունը: Եվ հենց նրանց դեմ, Ֆրանսիայի արտաքին գործերի պարոն նախարար, կոտորածների հաջորդ օրն իսկ, այն դեպքում, երբ զոհերի թիվը հարյուր հազարի էր հասել, դուք, մոռանալով, որ Եվրոպան իր խոստումները չի հարգել, ձեր ամենահանդիմանական արտահայտությունները ուղղեցիք *(Ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)*:

Մենք նույնպես, մեր հերթին, խաղաղություն ենք ուզում: Բայց չենք ուզում, որ այն սոսկ խոսք լինի, որն այստեղ արտաբերեց արտաքին գործերի պարոն նախարարը, այլ դառնա դիրքորոշում, որն արտացոլել ենք մեր բոլոր փաստաթղթերում, որն ի զորու լինի խաղաղ միջոցներով երաշխավորել հայ հպատակների իրավունքների հարգանքը, ապահովությունն ու կյանքը:

Անիմաստ է հիմա, այս պահին, այս խորհրդարանում, մեր ամբողջ երկրում, որ չափազանց երկար ժամանակ անտարբեր կամ քիչ է իրազեկ եղել, նկարագրել արհավիրքները, որոնք հրահրվել են Փոքր Ասիայում: Հիմա, այս պահին էականը պատասխանատվությունները ճշտելն է, ընդ որում ոչ միայն, ինչպես իր տպավորիչ ազդեցիկությամբ, վճռական ու զուսպ պերճախոսությամբ պարոն դը Մյունը վարվեց, սուլթանի պատասխանատվությունը, այլ հենց Եվրոպայի պատասխանատվությունը, ավելի ուղղակի՝ Ֆրանսիայի կառավարության պատասխանատվությունը: Ինչպես նաև այս պահին Եվրոպայի խղճին ծանրացած հարցին որոշակի լուծում գտնելը:

Այո՛, պարոնայք, Փոքր Ասիայի ազգաբնակչության առնչությամբ այնպիսի փաստեր են կուտակվել, որոնց մասին կարելի է միանշանակ ասել՝ հազիվ, թերևս մասամբ միայն իրենց որոշ նախադեպերն ունեն: Սակայն, եթե անգամ այդ իրողությունները տարերային են եղել, եթե այդ բոլոր բռնությունները, բռնաբարությունները, նախճիրները, կողոպուտները, հրկիզումները, որոնք կատարվել են Փոքր Ասիայում, տարերայնորեն են կատարվել, ակնհայտ է, որ անկախ ամեն ինչից, մարդկության պատմության անցյալի փորձի, սովորության տարր պարունակել են:

Երբ Սասունի դեպքերն ուսումնասիրող Էրզրումի հանձնաժողովի ու քննիչների զեկուցագրերում, երբ Եվրոպայի հյուպատոսների՝ Փոքր Ասիայի վեց գլխավոր վիլայեթներում կատարված դեպքերի պաշտոնական զեկուցագրերում ես կարդացի քրդերի ու սուլթանի զորամիավորումների համատեղ գործադրած դաժան բռնությունների մանրամասները, երբ ծանոթացա հայ՝ երկար ժամանակ հլու ու հնազանդ ազգաբնակչության՝ քրդերի կամայականությունների ու հափշտակությունների դեմ ուղղված անդրանիկ դիմադրության փորձերին, երբ պատկերացրի այդ քոչվորների ու Հայաստանի հովիվների, մշակների առաջին արյունոտ բախումները կիրճերում ու անտառներում, քրդերի անսպասելի մոլեգնությունը, սկիզբ առած բնաջնջման պատերազմը, սեփական, հրդեհից խորտակված տներից գաղթող հայ ընտանիքներին, ծերունիներին, որոնց մերձավորները շալակած տանում, ճանապարհին ճարահատ թողնում էին, ու որոնք տեղում խողխողվում էին, խելագարված կանանց ու մայրերին, որոնք ձեռքի ափով փակում էին իրենց ճչացող երեխաների բերանները, որպեսզի այդ ճիչերը չմատնեն փախուստը անտառ, և երեխաներին, որոնց թաքցնում, խցկում էին քարերի տակ, ծառերի բնարմատների մեջ, որոնք հարյուրներով խեղդամահ էին լինում, և հղի կանանց, որոնց որովայնները պատռում էին, սաղմը բիրերի ծայրերով հանում, պար էին ածում, կույս աղջիկներին, որոնց թուրք զինվորներն ու վաչկատուն քրդերը իրար միջև բաժանում ու բռնաբարում էին, իսկ թուրք զինվորները, իրենց կրքերին հագուրդ տալուց հետո հրեշավոր սադիզմով գնդակահարում էին՝ այնպես, որ փամփուշտը փորատակից մինչև գլուխը հասնի՝ սպանությունն էլ յուրօրինակ բռնաբարություն դառնա, իսկ գիշերները, վրանների մոտ, որտեղ զինվորներն ու քոչվորները նույն խենթեշ շվայտությանն էին տրվում, դիակների համար մեծ փոսեր էին փորվում, և վշտից խելացնոր հայերը ողջ-ողջ նետվում էին այնտեղ, ու կառափնատված քահանաները, որոնց գլուխները անարգում, անա-

մոթաբար աձուկների արանքն էին խոթում, և ամբողջ ժողովուրդը, որը դեպի լեռնադաշտերն էր փախչում,- հետո, երբ այս բոլոր բարբարոսները զգացին, որ Եվրոպան անտարբեր է մնում, նրանց հասցեին, որոնց իրենք պղծել ու կոտորել են, խղճահարության ոչ մի խոսք չի լսվում, բնաջնջումը միանգամից անհամեմատ ծավալեցին, բնաջնջմանը զանգվածային բնույթ հաղորդեցին: Այլևս ոչ թե փոքր խմբերի, այլ քաղաքներում, շեփորի ազդականչով, նախնական պայմանավորվածությամբ, կանոնավոր հաջորդականությամբ, օրական զանգվածաբար 3000-ից 4000 հայ էին կոտորում: Ահա թե ինչ է տեղի ունեցել, ահա թե ինչին է Եվրոպան ականատես եղել, ու ահա թե ինչից է երես թեքել... և երբ, կրկնում եմ, ես հասու եղա մանրամասներին, ինձ թվաց, թե Երեսնամյա պատերազմի բոլոր մղձավանջները նորից են հրահրվել Արևելքի այդ հեռավոր, վայրագ հորիզոնում:

Սուլթան Աբդուլ Համիդ

Բայց էականը, ամենածանրը այնտեղ սանձազերծված մարդկային բրտությունը չէ, բրտության ի հայտ գալը չէ: Ամենածանրն այն է, որ տարերայնորեն ի հայտ չի եկել, հրահրվել, խրախուսվել, անհագ ախորժակը գրգռվել է օրինավոր կառավարության կողմից, ում հետ Եվրոպան բազմիցս ամենայն լրջությամբ ստորագրություններ է փոխանակում: Այո՛, այնտեղ մի անձ է գերիշխում՝ սուլթանն է ուզել, կազմակերպել, ղեկավարել կոտորածները: Նա տեսել է, որ տասնհինգ տարի ի վեր, ամենուր, որտեղ քրիստոնեական համայնքներ են գոյություն ունեցել, այդ քրիստոնեական համայնքները՝ կամ իրենց իսկ նախաձեռնությամբ, կամ արտասահմանի դրդմամբ, ինքնավարության են ձգտել: Այսպիսով սուլթանը, իր գահակալության հենց սկզբից տեսել է, թե ինչպես են Բուլղարիան, Սերբիան, Բոսնիան, Հերցեգովինան թոթափում օսմանյան լուծը: Նա մտածել է, որ հայկական պահանջատիրությունը, որը ձևավորվել է Կիպրոսից՝ Բեռլինի վեհաժողովի գաղտնի պայմանավորվածությամբ անգլիական կղզի դառնալուց ոչ հեռու, կարող է նոր անդամահատությունների պատրվակ դառնալ: Եվ քանի որ սուլթանն ի վիճակի չի եղել բարենորոգումներով, իրավական ու արդարադատ վարչակարգով զսպել իր՝ ըստ էության հեզ հպատակներին, ընդհակառակը՝ չնայած իր երեսպաշտ խոստումներին, ավելի ու ավելի է բացարձակացրել մոլեգին ու դաժան միապետությունը, շատ շուտով հույսը միմիայն ուժի՝ այնպիսի միջոցի վրա է դրել, որն իրեն մինչև վերջ հավատարիմ էր մնալու: Թուրքական ավանդական նկարագրի ուժի, որը շատ ճիշտ ներկայացրեց պարոն դը Մյունը: Ահա այս ուժը գործադրեց սուլթանը հայերի դեմ: Եվ նա մտածել է, իրավացիորեն մտածել է, պարոնայք, որ իր նպատակին հասնելու համար պիտի Եվրոպային անպայման կատարված փաստի, ավարտված սպանդի առջև կանգնեց-

Ժան Ժորեսը գործադուլավորների հետ,1909 թ.

նի: Նա զգացել է, որ Եվրոպան տատանվում է, անկայուն է, ներքին պառակտումներով բաժանված է և, իրոք, մինչ այդ տարանջատ, անզոր դեսպանները նախաձիրների ամենաօրհասական պահին բարենորոգումների՝ կեղծ մարդասիրական, ծիծաղելի պահանջներն էին ներկայացնում, սուլթանը լայն բացված դանակով ավարտում էր կոտորածները, որպեսզի մեկընդմիշտ ձերբազատվի հայկական հարցից, ինչպես նաև ձերբազատվի Եվրոպայի երեսպաշտ պնդերեսությունից՝ այն Եվրոպայի, որը, ինչպես դուք՝ ինքներդ, թե՛ ցավակցում է և թե՛ մեղսակից է *(Ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում, բողոքի բացականչություններ)*:

Միաժամանակ սուլթանը խաղում էր Եվրոպայի, խաղում էր ձեր և մարդկության հետ: Ի՞նչ ասեմ, դուք համոզված էիք, որ Սասունի առաջին ջարդերից հետո Էրզրում քննիչ հանձնախումբ կուղարկվի, կարծում էիք, որ Եվրոպայի ներկայացուցիչները այդ քննիչ հանձնախմբի կազմում կներգրավվեն: Պարոն նախարար, կարդացե՛ք, ամենայն հավանականությամբ կարդացել եք քննիչ հանձնախմբի արձանագրությունները, և համոզվել, որ թուրքական հանձնախումբը Եվրոպայի պատվիրակներին անընդհատ մերժել է այն վայրերը հասցնել, որտեղ կատարվել են քստմնելի նախաձիրները, որպեսզի նրանք հանկարծ չկարողանան դեպքի վայրում ճշմարտացի վկայություններ հավաքել: Հենց Թամայանի 1894 թ. դատավարությունից, որի մասին տեղեկագրել է Անկարայի հյուպատոսը, դուք կարող եք համոզվել, թե նպաստավոր կեղծ ցուցմունքներ կորզելու համար ինչպիսի դաժան միջոցների է դիմել սուլթանի կառավարությունը: Խոսքն այն մասին է, որ նրանք հայերին բռնությամբ, խոշտանգումների ենթարկելով ստիպել են ասել, նույնիսկ ստորագրել, որ խժդժություններն իրենք են սկսել: Ընդ որում բոլոր բնակավայրերում էլ եղել են տեղական պաշտոնյաներ, որոնք գիտակցել են իրենց պատասխանատվությունն ու ներքուստ խոստովանել՝ «Թերևս վաղը Եվրոպան կմիջամտի, ու Սուլթանն ստիպված կլինի մեզնից հաշիվ պահանջել»: Սուլթանն ինքն էլ է կամեցել պալատում հյուրընկալվող դեսպաններին հավաստել իր բարի կամքն ու հնազանդ հպատակների բարի կամքը: Եվ շատ հայերի, որոնց ընտանիքները հենց այդ պահին խողխողվել են, ստիպել են վկայել, որ իրենք են մեղավոր, որ իրենք են ընդվզել: Հենց ձեր հյուպատոսներից մեկն է պատմում, թե հիմնական վկաներից մեկին, ես հիմա կնկարագրեմ, ինչպես են կոտանքների ենթարկել: Նրա գլուխը դանդաղ ծակել, մեջը եռացրած ձյութ լցված ընկույզի, թե կաղինի կեղև են խցկել ու ամեն անգամ, երբ նա նման դաժան փորձությունից մի պահ սթափվել է, հարցրել են՝ «Հիմա կստորագրե՞ս, որ քո հայրենակիցներն են նախահարձակ եղել»: Ահա այսպիսի վկայություններ են Եվրոպա առաքվել: Ահա՛ ճշմարտությունը սուլթանի պատասխանատվության մասին:

## Եվրոպայի պատասխանատվությունը

Միաժամանակ ակնհայտ է՝ իհարկե դրանում համոզվելու համար հարկ չկա դիվանագետ լինել, Եվրոպայի պատասխանատվությունը: Ուստի մեր բոլորի պարտքն է եվրոպական լայնախոհ հայրենասիրությամբ, ես շնորհակալ եմ պարոն Դրնի Կոշենին[2] այդ մասին տպավորիչ ճարտասանությամբ արտահայտվելու համար, մեր բոլորի պարտքն է, քանի որ Եվրոպան ձախողել է իր առաքելությունը, քանի որ շահամոլությամբ, նախանձախնդրությամբ, ամոթալի եսամոլությամբ ինքն իր մեջ պառակտվել և թույլ է տվել, որ այնտեղ մի ամբողջ ժողովուրդ խողխողվի, ժողովուրդ, որն իրավունք ուներ Եվրոպայի խոստման վրա հույս դնելու, ու չի միջամտել միայն այն բանի համար, որ վախեցել է մնացուկների բաժանման համար մղվելիք քաշքշուկից, կրկնում եմ՝ մեր պարտքն է այստեղ խոստովանել Եվրոպայի գործած սխալներն ու հանցանքները, որպեսզի անհրաժեշտ քավության ձգտի *(Ծափահարություններ ձախ ծայրահեղականների, բազմաթիվ ծայրահեղականների շարքերում)*:

Այո՛, Եվրոպայի՝ քրիստոնյա ու քաղաքակիրթ հորջորջվող Եվրոպայի այս համընդհանուր պատասխանատվության մեջ կան երեք երկրներ, որոնց թվում ցավով պիտի հիշատակեմ նաև մերը, որոնք առանձնահատուկ, ծանր պատասխանատվություն են կրում: Այդ երեք երկրներն են Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան:

Պարոնայք, Անգլիան ասացի... ես այս մեծ երկրի նկատմամբ ոչ մի միտումնավոր վերաբերմունք, առավել ևս ատելություն չունեմ, որ այժմ ձգտում են արմատավորել մեր ժողովրդի մտայնության մեջ: Ինձ հայտնի է, որ այժմ, արգահատելի պառակտմամբ ֆրանսիացի ժողովրդի հոգեբանությունը փորձում են հեղափոխել՝ ազգային ինքնության միասնականություն, պահանջատիրություն սերմանել... *(բուռն ծափահարություններ)*... ես

չեմ հասկանում նման հետևողական ատելությունը Անգլիայի նկատմամբ: Ո՛չ ես, ո՛չ իմ մտերիմները չենք տրվում խորամանկորեն նյութվող այս պառակտմանը *(զանազան շարքերից՝ «ճիշտ է, շատ ճիշտ է»: Տարբեր հակազդեցություններ դահլիճում)*: Միաժամանակ, այդ պատճառով, ես չեմ ուզում քողարկել այն պատասխանատվությունը, որ իմ կարծիքով Անգլիան կրում է հայկական հարցի առնչությամբ: Ընդ որում պետք չէ, որ ինքներս սահմանենք այդ պատասխանատվությունը: Այն համարձակորեն սահմանել են իրենք՝ Անգլիայի ազնվական ուղեղները: Անգլիայի պատասխանատվությունը պատկերացնելու համար բավական է կարդալ դուքս Արշիլի՝ պարոն Գլադստոնի հետ Ղրիմի կառավարության վերջին վերապրողի սքանչելի գիրքը, որը, «Մեր պատասխանատվությունը Թուրքիայում» խորագրով, ընդամենը մի քանի ամիս առաջ է լույս տեսել: Դուքս Արշիլը գտնում է, որ արդեն մեկ դար է, Փիթի և Ֆոքսի՝ ռուս-անգլիական քաղաքական հիմնահարցի բուռն պայքարից անմիջապես հետո, Անգլիան վճռականորեն Ռուսաստանի դեմ է ելել, ուստի, Անգլիան, շատ հաճախ զուտ եսամոլական շահագրգռությամբ համակված, դառնում էր Թուրքիայի նախանձախնդիր պաշտպանը, ընդ որում իր իսկ ապահովությունից դրդված հրահրում էր սադրանքներ, անկարգություններ, օրինազանցություններ, որոնք ըստ էության կարող էին և տեղի չունենալ: Բայց սրանք Անգլիայի հին պատասխանատվություններն են: Նոր պատասխանատվություններն ի հայտ եկան այն պահին, երբ նա արտաքուստ հակոտնյա դիրք գրավեց՝ այո՛, արդեն քանի՞, ավելի ճշգրիտ մեկ կամ երկու տարի է, որ հատկապես հայկական հարցի նկատմամբ Անգլիայի ու Ռուսաստանի մինչև տեղի է ունեցել դերերի փոփոխություն: Մինչև այժմ Ռուսաստանն էր, դրա փաստական վկայությունը Բեռլինի դաշնագիրն է, որ Եվրոպային ստիպում էր միջամտել սուլթանի և նրա հպատակների հակամարտությանը: Ու ճիշտ հակառակը՝ Անգլիան էր հնարավոր ամեն ինչ անում, որ կանխեր Եվրոպայի միջամտությունը, ամեն կերպ պահպաներ Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու անկախությունը: Մինչդեռ ահա մի տարի է, որ Անգլիան է ստանձնել Ռուսաստանի, Ռուսաստանը՝ Անգլիայի դերը: Ու ի հայտ են եկել պետական այրեր, ինչպես ասենք՝ դուքս Արշիլը, որոնք ներկա իրավիճակը երկարաձգելու համար, բացահայտորեն հայտարարում են, որ Թուրքիայի համար նախընտրում են Ռուսաստանի խնամակալությունը:

Պարոնայք, ստիպված եմ պնդել, որ ես չեմ կասկածում նման զգացմունքների անեղծությանը: Մենք վատ ենք հասկանում անգլիական արմատական դրամատիրության օրենքն ու ազդեցության ոլորտները: Անգլիական դրամատիրությունը խառնվում է աշխարհի բոլոր գործընթացներին, և այն իրադարձությունները, որոնք մեզ համար, քանի որ չափազանց ինքնամփոփ կյանքով ենք ապրում, հեռավոր են թվում, յուրովի, անմիջականորեն բորբոքում են Անգլիայի զգայունակությունը: Սակայն դրամատիրության ազդեցության ոլորտները ծավալելու անհագ մղումը անընդհատ գործում է, իսկ մարդկայնության ազնվագույն զգացումը, որքան էլ որ անկեղծ լինի, միշտ, պատրաստակամորեն վերափոխվում է խնամակալության: Ուստի ասում եմ, որ հենց Անգլիան նոր դիրքորոշում, նույնքան էլ նոր ու մտահոգող մարտավարություն է որդեգրում, նրա անմիջական պարտականությունն է դառնում համապատասխան այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որպեսզի ոչ ոք չնկատի ազգային հավակնոտության խարդավանքները: Այն նույն պահին, երբ թվում է, թե Անգլիան Ռուսաստանի առջև բացում է թուրքական արևելքի դռները, այն նույն պահին, երբ Անգլիան տարբեր խոստումներով, Օսմանյան կայսրության հնարավոր մասնատման հայտարարություններով փորձում է գայթակղել Ռուսաստանին, նույն Անգլիան Եգիպտոսում վարանում է իրագործել իր միջազգային պարտականությունները, և Եվրոպայում հարց է ծագում՝ արդյո՞ք հայկական հարցի իր վերաբերմունքում նույնպես Անգլիան ինչ-ինչ սադրանքներ չի քողարկում: Այս կասկածն իսկ բավական է, որ գրեթե ոչնչի հավասարվեն այն պատկառելի ծերունու խոսքերի բարոյական արժեքը, որին քիչ առաջ նման մեծարանքով ողջունեցինք: Ահա, թե իմ կարծիքով քննարկվող հարցում ո՞րն է Անգլիայի պատասխանատվությունը:

Բայց այլ պատասխանատվություն ևս գոյություն ունի, որն ինձ թվում է թույլ կտաք նույն անկաշկանդությամբ ձևակերպել: Դա շատ անհրաժեշտ է, որովհետև իմ կարծիքով այն անավարտ ու մշուշոտ նախադասություններում, որոնք այս ամբիոնից հնչեցրեց արտաքին գործերի պարոն նախարարը, մի մանրամասն կա, որը կարծում եմ արժե մտապահել. արտաքին գործերի պարոն նախարարը, որպես ռուս ժողովրդի ղեկավարի՝ վերջերս Փարիզ կա-

տարած այցելության ամենաուրախալի արդյունք, նշեց, թե ինչպես ֆրանս-ռուսական բանակցություններում հայկական հարցի վերաբերյալ որոշակի համաձայնություն է ձեռք բերվել: Հետևաբար նա մեզ ենթադրել տվեց, որ Ֆրանսիայի և Ռուսաստանի այդ հստակ պայմանավորվածությունը հայկական հարցի վերաբերյալ, ամենայն հավանականությամբ, եվրոպական համադաշնության համար, այդպես գոնե կարելի է կարծել, հայկական հարցին միջամտելու որոշակի հիմք կդառնա: Ուրեմն մենք առավել ևս իրավունք ունենք, կարծում եմ դուք ինձ թույլ կտաք նույնիսկ լուրջ պարտականություն կոչել, ամենայն անկեղծությամբ ձշտել, թե մինչև հիմա՝ արդեն երեք տարի՝ հայկական հարցում ի՞նչ դեր է խաղացել Ռուսաստանը: Պարոնայք, դա շատ կարևոր է նաև այն բանի համար, որ, ինչպես կփորձեմ ներկայացնել հենց հիմա, դա կլինի հենց Ֆրանսիայի կառավարության պատասխանատվությունը, քանի որ մեր երկրի քաղաքականությունը Փոքր Ասիայում Ռուսաստանի քաղաքականությունից չի տարբերվում: Ուստի իմ մեղքը չէ, որ ես ստիպված պիտի լինեմ Ռուսաստանի քաղաքականության միջոցով, դժվարությամբ, պարզել Ֆրանսիայի բուն էությունը *(ծափահարություններ ձախ ծայրահեղականների, բազմաթիվ ծայրահեղականների շարքերում)*:

Ուրեմն, պարոնայք, չնայած թվացյալ բարդությանը, ամենևին դժվար չէ մի քանի բառով բացահայտել ու բացատրել Ռուսաստանի քաղաքականությունը Արևելքում: Այնպես, ինչպես Սավուայի արքայատոհմը իտալական հեղափոխական շարժումն օգտագործեց իր սահմանները ընդարձակելու համար ու միայն հաղթանակից հետո ձնշեց, այնպես, ինչպես Գերմանիայում ֆոն Բիսմարկը Պրուսիայի գերիշխանությունն ամրապնդելու նպատակով որոշ ժամանակ սատարեց գերմանական հեղափոխությանը, անգամ համաժողովրդական քվեարկություն անցկացրեց, ապա, Հոհենցոլերների արքայատոհմի ձեռքին գործիք դարձնելուց հետո, ձնշեց, ձիշտ այդպես, պարոնայք, Ռուսաստանը մի ամբողջ դար իր սահմանները ընդարձակելու, գերիշխանությունը ամրապնդելու համար բորբոքում է բոլոր սլավոնների հեղափոխական զգացումները, Թուրքիայի ձնշված՝ հեղափոխական ու ազգայնական խմբավորումների զգացումները: Այդ պատճառով էր Ռուսաստանը Լեհաստանում սատարում ընչազուրկ գյուղացիների ապստամբությունը ազնվականության դեմ: Ահա այդ նույն պատճառով արդեն քսան տարի Ռուսաստանը Բալկաններում՝ Բուլղարիայում, Ռումինիայում, Սերբիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում հանդես է գալիս որպես սլավոնական մտայնության պաշտպան, իսկ Ալեքսանդր 2-րդը Մոսկվայում հավաքած իր պալատական մարշալներին և հավատարիմ ազնվականությանը քարոզում էր հանուն սլավոնական սրբազան դատի սրբազան պայքարի ելնել: Նույնը և Հայաստանում, պարոնայք, արտաքին գործերի պարոն նախարարը հենց նոր խոսում էր սադրիչների, գրգռիչների մասին, բայց նա պետք է զգուշանա, նման արտահայտություններով կարող է վիրավորել չափազանց հզոր, չափազանց համբավավոր անձանց, որոնց հանդեպ խորին հարգանք է տածում: Բոլորիս հայտնի է, պարոն նախարարն էլ չի կարող հերքել, որ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, Հայաստանում, ամենադժգոհ ազգային, ամենադժգոհ քրիստոնյա՝ բացառիկ ակտիվ տարրերը եղել են հենց ռուսների բարեկամները, եղել են կամավոր ռուսական բանակի շարքերն անցած հայ մարտիկներ՝ այն էլ Թուրքիայի դեմ մղվող պատերազմի ընթացքում: Բայց, ահա, արդեն մի քանի տարի է Ռուսաստանը նկատում է, որ իր համար էլ է վտանգավոր դառնում այդ կերպ հեղափոխություն և անկախություն խաղալը: Նա նկատում է, որ Լեհաստանը, չնայած այդ երկրում պարբերաբար հեղվող հորդ արյանը, չնայած ռուսական գաղտնի ոստիկանության համակարգին, որը մեր կառավարության միջոցով իր հսկողությունը հասցրեց ընդհուպ Ֆրանսիայի լեհական գաղութը... *(ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում: Բողոք խորհրդարանի կենտրոնում ու աջակողմյանների շարքերում)*... Ռուսաստանը նկատեց, որ Լեհաստանը պահպանել է իր ինքնության հավատամքը և արդյունաբերական քաղաքների խոշոր բանավաններում ազգային գաղափարախոսության ու ընկերվարական գաղափարախոսության միասնականություն է ստեղծվել, որը կարող է վտանգավոր դառնալ ապագայի համար *(նոր աղմուկ խորհրդարանի կենտրոնում ու աջակողմյանների շարքերում)* Ամենակարևորը՝ Բեռլինի դաշնագրից հետո Ռուսաստանը նկատեց, որ բուլղար ժողովուրդը, որին ինքն էր իրավազորել, միտք չունի թուրքական լծից ռուսական լծի տակ անցնել: Ահա Ռուսաստանի բոլոր մտահոգությունների, դիրքորոշումների գաղտնիքը հայկական հարցում *(ընդվզում խորհրդարանի կենտրոնում ու աջակողմյանների շարքերում)*:

Հայկական հարցը երկու փուլ ունի. առաջինը սկսվում է Սասունի կոտորածներից ու հասնում է մինչև 1895-

ի նոյեմբերի Կոստանդնուպոլսի ջարդը, երկրորդը՝ այդ օրերից ձգվում է մինչև այժմ: Ակնհայտ է՝ երկու փուլերում էլ Ռուսաստանը միայն մի մտահոգություն է ունեցել: Իշխան Լոբանովը, այն պահին, երբ մյուս գերտերությունների դեսպանները նրան շտապեցնում էին միանալ իրենց, որպեսզի սուլթանի վրա համատեղ լուրջ ճնշում գործադրեն, խոսքը Կոստանդնուպոլսի և Փոքր Ասիայի մեծ կոտորածներից առաջ, կոտորածները կանխելու համար, արդյունավետ միջոցներ ձեռնարկելու մասին է, իսկ ավելի ուշ, երբ հարկ էր լինում մի նվիրակ ևս գավառ ուղարկել, որի ներկայությունը թերևս սուլթանին արգելեր նորից արյուն հեղել, իշխան Լոբանովը միշտ երկու պատասխան էր տալիս: Նա նախ ասում էր՝ «Ես չեմ ուզում, որ Հայաստանը նոր Բուլղարիա դառնա, որ ռուսահպատակ հայերը մեր դեմ ուղղեն այն հաստատությունները, որոնք նրանց թույլ է տրվել ստեղծել թուրքական տիրապետության ներքո գտնվող Հայաստանում» *(տարաբնույթ աղմուկ դահլիճում)*, ապա ավելացնում, որ հայկական շարժման շարքերում հեղափոխականներ կան, որոնց հետ ոչ մի դեպքում չի կարելի խաղ անել: Այնպես որ, Ռուսաստանի քաղաքականությունը հայկական հարցում միշտ էլ սպասման, ձգձգման քաղաքականություն է եղել: Միշտ էլ, այնպիսի պահի, երբ Հայաստանը թուրքական բռնաճնշմամբ կորցրել է իր կորովի ազգայնական ու հեղափոխական տարրերին, և Ռուսաստանը հնարավորություն ունեցել է, առանց իր երկիրը վտանգելու, առանց անկախության կամ հեղափոխության մանրէն ռուսական կայսրություն մտցնելու, հովանավորության տակ վերցնել Հայաստանը, չի միջամտել, ոչինչ չի արել *(բողոքի շշուկներ խորհրդարանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում, ձախակողմյանների բազմաթիվ շարքերում: Ցայներ ձախ ծայրահեղականների շարքերից՝ «ճիշտ է, շատ ճիշտ է»)*: Ո՛չ, դահլիճի հայրենասիրական թվացող բողոքի շշուկները մեզ՝ ճշմարտությունն ասելուն չեն կարող խանգարել *(բողոքի նույն շշուկները նույն շարքերում)*: Հենց այդ ճշմարտության՝ միակ ճշմարտության պատճառով է, որ արտաքին գործերի պարոն նախարարը չի կարողանում հրատարակել «Դեղին գիրքը», որովհետև այնտեղ է բացահայտվում Ֆրանսիայի պատասխանատվությունը: (Շարունակելի)

Ժան Ժորեսի արձանը Փարիզում

[1] Ալբեր դը Մյուն – կոմս, Ֆրանսիայի Ազգային ժողովի ազատական պատգամավոր: «Հարցապնդումներ Հայաստանի դեպքերի կապակցությամբ» խորհրդարանական քննարկման՝ 1896 թ. նոյեմբերի 3-ի նիստում ելույթ է ունեցել Ժան Ժորեսից առաջ, պաշտպանել է հայերի դատը:

[2] Դընի Կոշեն – Ֆրանսիայի Ազգային ժողովի կաթոլիկ պատգամավոր: Բացել է 1897 թ. փետրվարի 22-ի՝ «Կառավարության մտադրությունները Կրետեի դեպքերի կապակցությամբ» հարցապնդման քննարկման նիստը, բարձր գնահատել Ժան Ժորեսի՝ 1896 թ. նոյեմբերի 3-ի նիստի հայանպաստ ելույթը:

# ՈՐՆ Է ԵԼՔԸ

**Վահե ՍԱՐԳՍՅԱՆ**

«Միտք» վերլուծական կենտրոն

Երկա Վրաստանը, որը հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և որին որպես այդպիսին ընդունում է միջազգային հանրությունը, անկախացել է և դուրս եկել ԽՍՀՄ կազմից 1991 թ. ապրիլի 9-ին՝ իրեն համարելով իրավահաջորդ պետություն ոչ թե Խորհրդային Վրաստանի, այլ՝ 1918 թ. կազմավորված Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության:

Դեռ 1990 թ. հոկտեմբերի 28-ին և նոյեմբերի 11-ին կայացած Վրաստանի Գերագույն խորհրդի երկփուլանոց ընտրությունների ժամանակ խորհրդարանի 246 մանդատներից 81-ը իր ձեռքը վերցրեց 1990 թ. ապրիլին ստեղծված «Կլոր սեղան–Ազատ Վրաստան» բլոկը՝ Զվիադ Գամսախուրդիայի գլխավորությամբ[1]: Վերջինս 1990 թ. նոյեմբերի 14-ին ընտրվեց Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ[2]:

Գալով իշխանության, Զ. Գամսախուրդիան և իր կողմնակիցները երկրի նախկին վարչական ինքնավարությունների ու այդպիսիք չունեցող ազգային փոքրամասնությունների նկատմամբ որդեգրեցին մի քաղաքականություն, որը շարունակություն գտնելով է. Շևարդնաձեի ու Մ. Սահակաշվիլու վարչակարգերի ժամանակ, երկիրը նետեց լարվածության ու մինչ օրս շարունակվող պատերազմների գիրկը:

Դեռ 1990 թ. Զ. Գամսախուրդիան, չնայած իր ելույթներում ԼՂԻՄ-ը անվերապահորեն ճանաչում էր Հայաստանի մաս, այնուամենայնիվ հենց այդ օրերից լուծարեց Հարավ-Օսական Ինքնավար Մարզը՝ «Հարավային Օսեթիա» արտահայտությունը որակելով որպես բոլշևիկյան եզրույթ, և հայտարարեց, որ «...ոչ մի Հարավային Օսեթիա Վրաստանում չկա: Կան օսական գյուղեր, իսկ օսերը եկվորներ են, վերաբնակներ»[3]:

Սրանով լայն թափով սկիզբ դրվեց Վրաստանի՝ իրեն որպես ոչ թե խորհրդային, այլ՝ 1918 թ. Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ հռչակելու գործընթացը: 1990 թ. մարտի 9-ին՝ ՎԽՍՀ Գերագույն խորհրդի «Վրաստանի սուվերենության պաշտպանության երաշխիքների մասին» որոշման մեջ 1921 թ. Կարմիր բանակի մուտքը Վրաստանի տարածք անվանվեց անեքսիա և օկուպացիա[4]: Այս որոշումն ըստ էության մատնանշում էր ԽՍՀՄ օրենքների շրջանակներից Վրաստանի դուրս գալը: ՎԽՍՀ Գերագույն խորհրդի՝ այս հողի վրա կատարած հաջորդ քայլն էր 1990 թ. հունիսի 20-ի որոշումը, որով վերջինս անօրինական ճանաչեց պետական այն բոլոր պայմանագրերը և ստեղծված կառույցները, որոնք կնքվել էին «Վրաստանի օկուպացումից»՝ խորհրդայնացումից հետո[5]: Դրանով ուժը կորցրած հայտարարվեց 1922 թ.՝ ՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը[6]:

1991 թ. մարտի 31-ին Վրաստանի բնակչությունը քվեարկեց Վրաստանի անկախ պետականության վերականգնման օգտին, հանրաքվեին մասնակցած ազգաբնակչության 90,3 տոկոսից 98,9 տոկոսը «Այո» ասաց անկախությանը: 1991 թ. ապրիլի 9-ին կայացավ Վրաստանի առաջին գումարման Գերագույն խորհրդի անդրանիկ նստաշրջանի արտակարգ նիստ: Նիստում ելույթ ունեցավ ԳԽ-ի նախագահ Զ. Գամսախուրդիան և ժամը 12.00-ին հռչակեց Վրաստանի անկախության վերականգնումը՝ 1918 թ. մայիսի 26-ի անկախության ակտի հիման վրա[7]: Իր ելույթում Զ. Գամսախուրդիան երկրի ոչ վրացի բնակչությանը շնորհակալություն հայտնեց աջակցության համար: Նշվեց նաև, որ Աբխազիային երաշխավորվում է ինքնավարություն, իսկ Աջարիայի ինքնավարության

հարցը կորոշի այդ հանրապետության բնակչությունը՝ հանրաքվեի միջոցով[8]: Զ. Գամսախուրդիան ընթերցեց նաև անկախության վերականգնման մասին ակտը, որն ընդունվեց միահամուռ՝ աննշան փոփոխություններով և լրացումներով:

Այս գործընթացների մեջ բավականին հետաքրքրական էր Աջարիայի պարագան: Երեք հազար քառ. կմ ունեցող այս մարզին ինքնավարության կարգավիճակ է տրվել 1921 թ. հունիսի 16-ին[9]: Խորհրդային Վրաստանի ժամանակաշրջանում կնքված բոլոր պայմանագրերից հրաժարված Վրաստանը, բնականաբար, պետք է լուծարեր նաև այս մարզը, եթե չլիներ մի կարևոր հանգամանք՝ Բաթումի մարզը լայն ինքնավար կարգավիճակով Վրաստանի կազմում է հայտնվել 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական և նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի թուրք-անդրկովկասյան դաշնագրերով: Հետևաբար, եթե Վրաստանը լուծարեր այս մարզը, ապա պետք է չեղյալ հայտարարեր վերոնշյալ պայմանագրերը[10], ինչն էլ իր հերթին իրավաբանական հիմք կհանդիսանար, որպեսզի Բաթումի մարզը (Աջարիան) անցներ Թուրքիային: Հետևաբար, երևի այս վտանգի գիտակցումով էր, որ Վրաստանը «ետ կանգնեց կես ճանապարհից» և Աջարիայի ինքնավարությունը թողեց նույն կարգավիճակով[11]: Այս պատճառով է նաև, որ Վրաստանը մինչ օրս, թեկուզ ձևական բնույթով, պահպանում է Աջարիայի ինքնավար կարգավիճակը:

Ելնելով այն հանգամանքից, որ Վրաստանի կազմում եղած ինքնավարությունները իրենց այդ կարգավիճակն ստացել են Խորհրդային օրենքներով (1921 թ. հունիսին ինքնավար հանրապետության կարգավիճակ է ստացել Աջարիան, 1922 թ. ապրիլի 20-ին ինքնավար մարզի կարգավիճակ՝ Հարավային Օսեթիան[12], 1931 թ. փետրվարին ինքնավար հանրապետության կարգավիճակ է ստացել Աբխազիան), ՎԽՍՀ ԳԽ-ի այս որոշումները (հետագայում նաև՝ Վրաստանի անկախության վերականգնման մասին ակտի ընդունումը) լիարժեք իրավական հիմք հանդիսացան ՎԽՍՀ-ի նախկին ինքնավարությունների՝ ՎԽՍՀ-ից առանձնացման համար:

Զ. Գամսախուրդիա

1918-1921 թթ. պետության իրավական հիմքի վրա ստեղծելով իր նորանկախ պետությունը[13], Վրաստանը մինչ օրս ոչ մի իրավական հիմք չի կարող ունենալ իր տիրապետությունը տարածելու ինչպես նախկին ինքնավարությունների, այնպես էլ խորհրդային շրջանում այդպես էլ գոնե ձևական ինքնավարություն չստացած Սամցխե-Զավախք-Ծալկա տարածաշրջանի[14] վրա: Վերջիններս 1921 թվականից՝ Վրաստանի խորհրդայնացումից առաջ, ոչ մի ձևով չեն գտնվել Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կազմում:

1918 թվականի հանրապետության սահմանների հիմքի վրա 1991 թվականին անկախանալով, Վրաստանը մոլորության մեջ է գցել միջազգային հանրությանն ու Միավորված ազգերի կազմակերպությանը[15]՝ վերջիններիս կողմից ճանաչվելով ոչ թե 1918 թ. պետության սահմաններում, որոնք վիճելի և անորոշ էին, այլ՝ Խորհրդային Վրաստանի սահմաններում, որոնք, ինչպես վերը նշեցինք, ձևավորվել էին կոմունիստական կուսակցական մարմինների կողմից և որոնք բացարձակ մերժվում էին նորանկախ Վրաստանի կողմից:

Վրաստանի սահմանները ճանաչելով Խորհրդային Վրաստանի սահմաններում՝ միջազգային հանրությունը շարունակում է մնալ հակասությունների ու մոլորության լաբիրինթոսում: Վերջինս դրանով փաստորեն ճանաչում է վաղուց արդեն




որպես միջազգային իրավունքի սուբյեկտ գոյություն չունեցող Խորհրդային Միության կուսակցական մարմինների՝ հենց նորանկախ Վրաստանի կողմից ուժը կորցրած որոշումները[16]:

Ներկա՝ հետխորհրդային շրջանի հայ-վրացական սահմանը ևս կոմունիստական կուսակցական մարմինների որոշումների արգասիք է: Չնայած հետխորհրդային շրջանի հայ-վրացական բազմաթիվ բարձրաստիճան հանդիպումներում կողմերը բազմիցս իրար հավաստիացրել են՝ միմյանց պետական անկախության ու տարածքային ամբողջականության սկզբունքներին հավատարիմ լինելու կարևորության մասին, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ևս, ձգտելով բաց պահել իր արտաքին հաղորդակցության վերջին միջոցը և խնդիրներ չունենալ Վրաստանի հետ, 1991 թ. ապրիլի 12-ին ճանաչել է նորանկախ Վրաստանի անկախությունը դարձյալ Խորհրդային Վրաստանի՝ հենց իր՝ նորանկախ Վրաստանի կողմից իրավաբանորեն չճանաչված և իրավական հիմքի վրա խոցելի սահմաններում[17]: Իսկ ներկա հայ-վրացական՝ հենց նորօրյա Վրաստանի կողմից չճանաչված սահմանները ձևավորվել են 1921 թ. նոյեմբերի 6-ին՝ Հայաստանի կողմից՝ ժողկոմխորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի և Վրաստանի կողմից՝ Հեղկոմի նախագահ Բուդու Մդիվանու Թիֆլիսում ստորագրած պայմանագրերով[18]: Ինչպես հանգամանորեն ցույց է տվել պրոֆեսոր Ա. Ա. Մելքոնյանը, Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի (ներկայումս՝ Գյումրի) սահմանների մասում ընկած էր նախկին ցարական վարչատարածքային բաժանումը, իսկ Լոռու Չեզոք գոտում[19] նախկին սահմանները լիովին փոփոխված էին՝ ի վնաս հայկական կողմի: Հետևաբար՝ մինչ այդ մասնատված Լոռի գավառի հարավային մասը՝ Լոռու Չեզոք գոտին ևս ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հուլիսի 7-ի որոշմամբ ամբողջովին չի անցել Հայաստանի ԽՍՀ-ին[20]: Հետագայում ևս, մինչև 1930-ական թվականների կեսերը, չդադարեցին վիճելի մնալ հայ-վրացական սահմանային հարցերը: Կնքվել են դարձյալ մի շարք պայմանագրեր, որոնց արդյունքում, թեև ոչ էականորեն, փոփոխության ենթարկվեց Ալեքսանդրապոլ-Ախալքալաք սահմանը, և ամեն անգամ՝ հօգուտ վրացական կողմի:

Ներկա Վրաստանի՝ Խորհրդային Վրաստանի ժառանգությունից ամբողջապես հրաժարման մասին է խոսում դեռ 1991 թ. դեկտեմբերի 21-ի Ալմա-Աթայի հռչակագրին չմիանալը, որով նախկին միութենական 11

հանրապետություններ միանալով ստեղծում էին Անկախ պետությունների հանրակցությունը՝ ԱՊՀ-ն[21]: Հռչակագրում նշվում է. «Հանրակցության մասնակից պետություններն իրենց սահմանադրական արարողակարգերին համապատասխան երաշխավորում են նախկին ԽՍՀ Միության պայմանագրերից ու համաձայնագրերից բխող միջազգային պարտավորությունների կատարումը»[22]: Չընդունելով այդ պայմանագրերն ու համաձայնագրերը, Վրաստանը սկզբից ևեթ մերժեց անդամակցել ԱՊՀ-ին:

Վրաստանը պարտավոր է հարգել ոչ միայն իր նախկին խորհրդային տարածքում գտնված ինքնավարությունների՝ միջազգային իրավունքի նորմերով ամրագրված որոշումներն ու կատարած քայլերը, այլև հենց իր՝ որպես պետության ընդունած որոշումները և չզլանալ մտնելու այդ որոշումներից բխող պարտավորությունների բեռի տակ: Դրանից ելնելով Վրաստանը պարտավոր է վերանայել իր դիրքորոշումները Աբխազիայի, Հարավային Օսեթիայի, Աջարիայի և Սամցխե-Ջավախք-Ծալկայի վերաբերյալ:

Եթե ներկայումս Վրաստանը, թեկուզ ձևականորեն, Աջարիային շնորհել է որոշ ինքնավարություն, իսկ Աբխազիային գոնե առատորեն խոստանում է իր կողմից արված այդ «զիջումը», ապա այլ է Հարավային Օսեթիայի պարագան. վերջինիս ճակատագիրը Վրաստանի կողմից առայժմ թղթի վրա որոշվել է հետևյալ կերպ. դեռ 1993-1995 թթ. տեղի ունեցած երկրի վարչատարածքային բաժանումների հողի վրա (որոնք մինչ օրս չեն ստացել իրավաբանական ձևակերպումներ Սահմանադրության՝ երկրի մայր օրենքի մեջ պետական կառուցվածքի մասին գլուխը բացակայելու պատճառով) մասնատվեց նախկին Հարավօսական Ինքնավար Մարզը, որի մեծ մասը հարավային վրացական մի քանի շրջանների՝ Խաշուրիի, Քարելիի, Գորիի և Կասպիի հետ մտցվեց Շիդա Քարթլի նորաստեղծ նահանգի մեջ, իսկ Ինքնավար Մարզի արևելյան շրջանները մտցվեցին մեկ այլ՝ Մցխետա-Մթիանեթի նահանգի մեջ: Հարավային Օսեթիայի՝ Վրաստանին ենթարկվելու դեպքում վերջինիս սպասում է այսպիսի ճակատագիր, երբ թղթի վրայի այս որոշումը կդառնա իրականություն:

Հակառակ այս ամենի՝ Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի հանդեպ Վրաստանի ներկայումս արված ռազմատենչ քայլերն ու Սամցխե-Ջավախք-Ծալկայի նկատմամբ տարվող «սառը պատերազմի» քաղաքականությունը ցույց են տալիս, որ Վրաստանը դեռ մտադրություն չունի հանդես գալու որպես իրական ժողովրդավար երկիր: Այս ամենի մեջ իրենց մեծ մեղքի բաժինն ունեն միջազգային հանրությունն ու հատկապես այն երկրները, որոնք, շարունակելով ճանաչել Վրաստանի՝ խորհրդային ժառանգություն հանդիսացող ապօրինի սահմանները, վերջինիս «տարածքային ամբողջականության» վերականգնման համար շարունակում են իրավական, տնտեսական ու ռազմական ձեռք մեկնել Վրաստանին:

Վրաստանը, որպես փոքրիկ կայսրություն, հոգեվարքի մեջ է: Մ. Սահակաշվիլու հերթական փորձը՝ վերականգնել կայսրությունը իր երբեմնի սահմանների մեջ՝ ձախողվեց: Օս ժողովրդի միասնական ու հերոսական պայքարը, ռուսական խաղաղապահների միջամտությունն ու դեպքերի զարգացումը ցույց են տալիս, որ Վրաստանի ապագան կախված է ավելի շատ ռուսական կամ արտաքին ծրագրերից ու միջազգային իրադրությունից, քան իրենից՝ Վրաստանից: ՄԱԿ-ի ամբիոններից ՌԴ-ի ներկայացուցիչ Վիտալի Չուրկինի անզիջող հայտարարությունները, Վրաստանի՝ օսերի հանդեպ իրականացրած վերջին գործողությունները՝ որպես ցեղասպանություն որակելը, ՌԴ խաղաղապահ զորքերի կողմից վրացական ռազմաբազաների (Սենակի, Վազիանի) և այլ ռազմական նշանակության օբյեկտների ռմբակոծումը, աբխազական ճակատի ակտիվացումն ու Աբխազիայի կողմից Կոդորի կիրճի՝ վրացական ռազմական վերահսկողությունից ա-

Մ. Սահակաշվիլի

զատագրման գործողությունները և Վրաստանում տիրող համատարած խուճապը վկայում են Վրաստանում սպասվող բոլոր առումներով գլոբալ մասշտաբային փոփոխությունների մասին: Անկախ այն բանից, կմնա Մ. Սահակաշվիլին պետության գլուխ, թե կդատապարտվի միջազգային հանրության կամ հենց իր սեփական քաղաքացիների կողմից ու կլքի քաղաքական դաշտը, Վրաստանը այլևս ապացուցել է իր՝ որպես միասնական պետության գոյության անհնարինությունը:

Վրաստանը դարձավ իր վերջին քայլերի պատանդը, որից ելքը լինելու է նոր տիպի Վրաստանի ստեղծումը: Այդպիսի Վրաստան կարելի է տեսնել ֆեդերացիայի կամ, ավելի իրատեսական է, կոնֆեդերացիայի տեսքով: Թռուցիկ հայացք նետելով Վրաստանի ներկա քարտեզին՝ միանգամից կարելի է մատնանշել կոնֆեդերացիայի այն միավորները, որոնք առաջանալու են անշան փոփոխություններով: Դրանք չեն առաջանալու այն վարչատարածքներում, որոնք արհեստականորեն ստեղծվեցին Վրաստանի կողմից 1993-1995 թթ., երբ երկիրը բաժանվեց 11 երկրամասերի (նահանգների):

Հասկանալու համար Վրաստանին սպասվող ճակատագիրը, հարկ է մի փոքր հետ գնալ դեպի 1994 թ., երբ 1992 թ. օգոստոսին Աբխազիայի դեմ Վրաստանի սանձազերծած նույն արյունալի պատերազմներից հետո Վրաստանը վերջնական ու նույն կերպ կորցրեց Աբխազիան ու 1994 թ. փետրվարի 3-ին կնքված ռուս-վրացական պայմանագրով նորից ընկավ ՌԴ-ի գիրկը՝ շուտով անդամակցելով ԱՊՀ-ին: Գրեթե կործանման հասած երկրի ղեկավար է. Շևարդնաձեն ևս ոչինչ չստանալով Աբխազիայում և զգալով սեփական ընդդիմության ճնշումը՝ անընդունակ էր առանձին-առանձին լուծելու բազմաթիվ ու բազմապիսի ազգամիջյան խնդիրները: Այս պայմաններում Վրաստանը չէր էլ կարող մտածել երկրի միասնությունը բռնի ուժով վերականգնելու մասին: Մնում էր միայն երկրի ֆեդերատիվ կառուցվածքի մոդելի մշակումը: Իսկ այստեղ ցանկացած մոդելի մշակում, նախ և առաջ, ձեռնտու պետք է լիներ նաև Ռուսաստանին, վերջինիս օգնությամբ այդ մոդելը պիտի պարտադրվեր անհնազանդներին:

Վիտալի Չուրկին

Վրաստանին փաստորեն անհրաժեշտ էր ֆեդերալիզացիայի այնպիսի տարբերակ (ընդ որում, իր հարցազրույցներից մեկում, երկրի՝ դաշնային հիմունքներով կառուցվածքի ստեղծման օգտին էր հանդես եկել նաև է. Շևարդնաձեն), որը՝ ա) կերաշխավորեր նրա տարածքային ամբողջականությունը, բ) կապահովեր ուժային կառույցների միասնական համակարգի ձեվավորումը, գ) պայմաններ կստեղծեր շարունակելու վրացիների վերաբնակեցման քաղաքականությունը դաշնության սուբյեկտների տարածքներում:

Ռուսաստանին անհրաժեշտ էր Վրաստանի ֆեդերալիզացիայի այնպիսի տարբերակ, որ կարող էր ապահովել՝ ա) Սև ծովի և վրաց-թուրքական սահմանի երկայնքով ինքնավարությունների շղթայի ձևավորումը՝ Աբխազիա-Մեգրելիա-Աջարիա-Ջավախք (կամ Սամցխե-Ջավախք) գծով, բ) տեղերում որոշակի ուժային կառույցների առկայությունը, որոնք կարող են հակակշռել Թբիլիսիի գաղութային քաղաքականությանը, գ) իր ռազմական խարիսխների գոյատևման երաշխավորումը թե Թբիլիսիի և թե տվյալ ինքնավարության կողմից, որի հետևանքով նրանց դուրս բերման վտանգ այլևս չէր սպառնա:

Ռուսական կողմը սկզբունքորեն կողմնակից էր ֆեդերալիզացիային, բայց, Վրաստանի հետ նույն խնդրի վերաբերյալ ունենալով հակադիր դիրքորոշումներ, ի վերջո չգնաց փոխզիջման: Այս ամենը հանգեցրեց նրան, որ նահանգային այս բաժանումները այդպես էլ չստացան իրավաբանական ձևակերպումներ և 1995 թ. օգոստոսի 24-ին Վրաստանի ընդունած սահմանադրության մեջ բացակայեցին երկրի պետական-

տարածքային և վարչա-տարածքային կառուցվածքի, սրա հետ մեկտեղ նաև տեղական կառավարման և ինքնակառավարման աշխատակարգի մասին գլուխները:

Մոտավորապես նույն իրավիճակում է գտնվում նաև այսօրվա Վրաստանը: Իր և իրեն թելադրող կողմերի իսկ կատարած քայլերի գերին դառնալով Վրաստանին հնարավոր է սպասվի վերափոխում մի նոր՝ կոնֆեդերատիվ տիպի պետության: Այստեղ առաջանում է մի կարևոր հարց. ՌԴ-ն կգնա՞ արդյոք այս անգամ մինչև վերջ՝ իր կողմից թելադրվող պետական կառուցվածքի նոր մոդելի կիրառման հարցում, թե՞ առանձին պայմանավորվածությունների շնորհիվ հետ կկանգնի «կես ճանապարհին»՝ այնպես, ինչպես 1994-95 թթ., որի արդյունքում Վրաստանը, փաստորեն, սեփական հայեցողությամբ կիրառեց պետության տարածքային բաժանման նոր մոդելը:

Այնուամենայնիվ, ցանկացած պարագայում Վրաստանում միայն ֆեդերատիվ կամ կոնֆեդերատիվ մոդելի կիրառումը կարող է հանդիսանալ կայունության և խաղաղության հաստատման միակ երաշխավորը: Իսկ այդպիսի պարագայում լուրջ և արդեն ուշացած քայլեր ունի անելու Հայաստանի Հանրապետությունը: Նկատի ունենալով, որ արդեն Աբխազիան և Հարավային Օսեթիան ունեն հայեցակարգային ու հստակ ձևավորված պահանջներ՝ բոլոր առումներով, Աջարիան ունի այդպիսի պահանջների ներկայացման «հզոր փորձ», Մեգրելիայի, Սվանեթիայի և ադրբեջանաբնակ շրջանների պարագայում ևս չի լինի դժվարություն՝ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ վերջիններիս զբաղեցրած տարածքները մոտավոր համընկնում են Վրաստանի կողմից վերջիններիս «շնորհված» նահանգային բաժանման սահմանագծերին (վերջիններս ներառված են համապատասխանաբար՝ 1. Սամեգրելո–Զեմո Սվանեթի, 2. Ռաջա–Լեչխումի և Քվեմո Սվանեթի, 3. Քվեմո Քարթլի նորաստեղծ նահանգներում: Ավելին, ինչպես արդեն նշեցինք, Քվեմո Քարթլի նահանգի մեջ է արհեստականորեն ներառված նաև հայկական Ծալկան), ապա օրակարգային հարց է դառնում ներկա Վրաստանի հարավային մասում Սամցխե-Զավախք-Ծալկա տարածաշրջանի՝ որպես հայկական միավորի ստեղծումն ու փաթեթային պահանջների ներկայացումը: Սամցխե-Զավախք-Ծալկա տարածաշրջանի վերաբեր-

յալ միայն այդպիսի հայեցակարգի առկայու-թյունը կարող է հիմք հանդիսանալ խուսափելու 1994 թ. սխալներից, երբ ՌԴ-ի և Վրաստանի՝ ֆեդերալիզացիայի ծրագրերի միջև առկա տարբերու- թյունները ստիպում էին վրացիներին դիմել կանխարգելիչ գործողությունների՝ նպատակ ունենալով ֆեդերատիվ նոր համակարգի միջոցով՝ ա) հետ բերել նրանց, ովքեր արդեն փաստորեն անջատվել են, բ) ազգային շրջանները վրացական շրջանների հետ միաձուլելու ճանապարհով, թույլ չտալ ազգային հատկանիշի հիման վրա ֆեդերալիզացիայի նոր սուբյեկտների ձևավորումը (դրա վառ օրինակն էր Բորժոմի արհեստական կցումը Սամցխե-Ջավախք երկրամասին, ինչպես նաև Ծալկայի անջատումը տարածաշրջանից և վերջինի ներառումը ադրբեջանաբնակ մեկ այլ՝ Քվեմո Քարթլի նահանգի մեջ: Ահա այս գործընթացների համատեքստում պետք է դիտարկել է. Շևարդնաձեի 1994 թ. հուլիսի 31-ին ստորագրած «Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի ստեղծման մասին» թիվ 237 հրամանագիրը և «Տարածաշրջանի վարչության մասին» կանոնադրությունը):

Ցանկացած պարագայում, ֆեդերալիզացիայի այս կամ այն մոդելի կիրառման, անգամ այդ ամենը դարձյալ Վրաստանի հայեցողությամբ իրականանալու դեպքում, խիստ անհրաժեշտ է ունենալ ինչպես այդ ամենի մասին պատկերացումներ, այնպես էլ՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի մասին ճշգրտված հայեցակարգային փաստաթղթեր:

---

1 Скаков А. Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия: проблемы и перспективы развития, РИСИ, под редакцией ожокина Е. М./, т. 2, Москва, 2002, с. 261.

2 «Հայաստանի Հանրապետություն», 15.11.1990:

3 Նույն տեղում, 02.03.1990:

4 Скаков А. Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия: проблемы и перспективы развития, РИСИ, под редакцией ожокина Е. М./, т. 2, Москва, 2002, с. 261.

5 Նույն տեղում:

6 Мяло . Г., Россия и последние воины хх века (1989-2000), истории падения сверхдержажы, Москва, 2002, с. 109.

7 «Հայաստանի Հանրապետություն», 10.04.1991:

8 Նույն տեղում:

9 «Ազատամարտ», թիվ 29, օգոստոս, 1993: Հմմտ. Էվոյեան Ս., Աջարական հանգոյց, Հայրենի Ջաւախք, Պէյրութ-Լիբանան, 2002, էջ 389:

10 Ստեփանյան նախապայման, (Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ: Խորհրդաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2006, էջ 25:

11 1991 թվականից Աջարիայի Ինքնավար Հանրապետության փաստացի ղեկավար, պաշտոնապես Գերագույն խորհրդի նախագահ Ասլան Աբաշիձեն այս կապակցությամբ նույնպես հանդես էր գալիս հայտարարությամբ, ըստ որի՝ «ըստ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, Աջարիան հանդիսանում է միջազգային իրավունքի ենթակա (սուբյեկտ), իսկ միջազգային պայմանագրերը գերակա են Սահմանադրությունից» (տես՝ Էվոյեան Ս., Աջարական հանգոյց, «Հայրենի Ջաւախք», էջ 393): Պատմական հիմնավոր փաստերի և միջազգային իրավական նորմերի վրա հիմնված Ա. Աբաշիձեի այս հայտարարությունը հերթական անգամ հիշեցնում էր Վրաստանին այն մասին, որ վերջինս իր մշակած քաղաքական ուղեգծում (նաև Սահմանադրության՝ պետության կառուցվածքի մասին գլխի ընդունման գործընթացում) պարտավոր էր մեծապես հաշվի նստել այս ամենի հետ: Լրացուցիչ նշենք, որ Վրաստանի Սահմանադրության՝ պետության կառուցվածքի մասին գլուխը մինչ օրս ընդունված չէ:

12 Վրաց-օսական հարաբերություններն առաջին անգամ լրջորեն սրվեցին դեռ 1989 թ., երբ նույն թվականի նոյեմբերի 10-ին Հարավային Օսեթիայի ԳԽ-ն որոշեց Ինքնավար Մարզը հռչակել Հարավային Օսեթիայի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն՝ Վրաստանի կազմում, տես՝ Зверев А., Этнические конфликты на авказе, 1988-1994 /Спорние границы на авказе/, Москва, 2002, с. 48.

13 Այս հիմքի վրա, երբ 1995 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց նորանկախ Վրաստանի Սահմանադրությունը, այն համարվեց 1921 թվականի՝ անկախ Վրաստանի գոյության ընթացքում ընդունված Սահմանադրության իրավահաջորդ-ժառանգորդը: Մնացած՝ 1922, 1937 և 1978 թվականներին ընդունված ՎԽՍՀ սահմանադրությունները մերժվում էին հետխորհրդային Վրաստանում, տես՝ «Свободная Грузия», 27.08.1996, հմմտ. «Ազգ», 26.08.1995: Լրացուցիչ նշենք, որ մինչև Հայաստանի Հանրապետության նոր՝ 1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրության ընդունումը երկրում գործել է 1975 թ. ընդունված ՀԽՍՀ Սահմանադրությունը:

14 Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանը Վրաստանին է բռնակցվել դարձյալ կոմունիստական կուսակցական մարմինների որոշմամբ՝ 1921 թ. հուլիսի 16-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշման ու ՎԽՍՀ Կենտկոմի եզրակացության հիման վրա, տես՝ Մելքոնյան Ա.Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, հավելված, փաստաթուղթ N 44, հմմտ.՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 45:

15 1992թ. հուլիսի 31-ին Վրաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության 179-րդ անդամը, տես՝ «Свободная Грузия», 01.081992:

16 http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=1627&SectionID=0&Date=08/03/2008&PagePosition=1

17 «Հայաստանի Հանրապետություն», 16.04.1991:

18 Մելքոնյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 344:

19 Լոռու Չեզոք գոտին նախկին հայկական Լոռի գավառի հարավային մասի վրա ստեղծվել է 1918 թ. վերջին հայ-վրացական երկշաբաթյա պատերազմից հետո տեղի ունեցած կոնֆերանսի արդյունքում: Մեր ուսումնասիրություններում ցույց ենք տվել, որ այս գործընթացում իր հերթական մասնատումն ապրեց Լոռի գավառը, որի հյուսիսային և հարավային մասերի սահմանագիծն արհեստականորեն դարձավ զինադադարի պահին վրացական զորքերի գտնվելու վայրը: Սրանով Լոռի գավառի հյուսիսային մասը, ստանալով Բորչալու թաթարական եզրը, որպես հայկական գավառ այլևս չդրվեց բանակցությունների սեղանին, վերջնականորեն համարվելով վրացական տարածք:

20 Մելքոնյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 345:

21 Վրաստանը Ռուսաստանի Դաշնության ճնշումների տակ ԱՊՀ-ին է անդամակցել միայն 1994 թ. մարտի 1-ին, խորհրդարանի ձայների 124 կողմ, 47 դեմ և 4 ձեռնպահ հարաբերակցությամբ, տես՝ Скаков А. Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия: проблемы и перспективы развития, РИСИ, под редакцией ожокина Е. М./, т. 2, Москва, 2002, с. 272: Անդամակցելով ԱՊՀ-ին, Ադրբեջանի և Հայաստանի ներկա հանրապետություններն այդ իմաստով տարբերվում են Վրաստանի՝ ԱՊՀ-ին անդամակցելը մշտապես ունեցել է ձևական բնույթ և օրակարգում մշտապես եղել է վերջինիցս դուրս գալու հարցը:

22 «Հայաստանի Հանրապետություն», 24.10.1991:

# ՀՅԴ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՍՈՑԻՆՏԵՐՆԻ ԱՆԴԱՄ ԱՅԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

*Կարեն Խանլարյան*

*Սկիզբը՝ նախորդ համարում*

### Բ. ՀՅԴ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

«ՀՅԴ գաղափարաբանության հիմքը» գլուխը հիմնականում բաղկացած է վեց ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը համառոտ ակնարկով ներկայացնում է մարդկության անցած ուղին: Այս բացատրության հիմքում ամենեւին ընկած չէ որեւէ վարդապետությանը կամ փիլիսոփայական դպրոցին հատուկ մեթոդաբանություն: Ինչպես օրինակ, պատմական նյութապաշտության ֆորմացիոնալ մոտեցումներն ու օրինաչափությունները, իրարահաջորդ հասարակական ֆորմացիաների պատմաբանական տեսությունը եւ դասակարգային պայքարների ներկայացումը՝ որպես պատմության առաջընթացի միակ շարժիչ ուժ: «*Պատմության ընթացքում դրսեւորվել են մարդու նկատմամբ մարդու տիրապետությունը եւ աշխատանքի շահագործումը*».- ահա այն, ինչ բացարձակորեն ընդգծում է ՀՅԴ ծրագիրը որպես մարդկության պատմության ողջ երկայնքով ընթացող երեւույթներ: Դասակարգային պայքարի՝ որպես «պատմության միակ շարժիչ»-ը համարելու մարքսյան տեսությունը հենց սկզբից քննադատվել է ՀՅԴ տեսաբանների կողմից: «*Վերջապես ո՞վ է ասում, որ կեղեքումն աշխարհիս վրա կատարվում է միայն մի ձեւով՝ դասակարգային արտահայտությունով,*- հարց է բարձրացնում Գարեգին Խաժակը:- *Ամենեւին ոչ... Բացի դրանից կա եւ մի այլ տեսակի, կարելի է ասել՝ ավելի վատթար կեղեքում, քան մի դասակարգի կեղեքելը մյուսին: Կա ազգային կեղեքում, երբ մի ազգ՝ տիրողը կեղեքում է մի ուրիշ ազգի՝ տիրվածին... Սակայն ո՞վ է այստեղ կեղեքողը. մի ազգի ամբողջությո՞ւնն է կեղեքում մյուս ազգի ամբողջությանը: Երբեք: Տիրողը, կեղեքիչը հանդիսանում է միշտ տիրող ազգի, ուժեղ ժողովրդի մեջ մի շերտ - բուրժուազիան, ազնվականությունն ու բյուրոկրատիան*»[1]:

Իսկ մարդկային առաջադիմությունը, ըստ ՀՅԴ ծրագրի, անկատար է նկատվում «*...այնքան ժամանակ, քանի դեռ ի նպաստ իրենց բարօրության մարդկային մտքի եւ աշխատանքի նվաճումներից օգտվելու հավասար հնարավորություն չունեն բոլոր անհատները, ընկերային հավաքականությունները եւ ազգերը*»: ՀՅԴ ծրագրում դրված «հավասար հնարավորություն» դրույթը, թեեւ առաջ են քաշում նաեւ նեոլիբերալական տեսաբան-

ները, այդուհանդերձ համարվում է զուտ սոցիալիստական արդիական դրույթ: Լեհաստանի ձախ դեմոկրատական ճակատ կուսակցությունը այս դրույթը հետեւյալ կերպով է մեկնաբանում. «*Պետությունը պետք է երաշխավորի հավասար մեկնարկային կետ յուրաքանչյուր քաղաքացու համար եւ վստահեցնի, որ սոցիալական տարբերությունները շատ մեծ չեն*»[2]: «*Հավասարությունը ազատության ապրելակերպն է*,- ասվում է Արգենտինայի սոցիալիստական կուսակցության 2002 թ. ծրագրում,- *հավասարությունը նույնպես պահանջում է սոցիալական կառուցվածքներ ու տնտեսական պայմաններ, որոնք յուրաքանչյուրին կտան զարգացման ու մասնակցության հավասար իրավունքներ եւ հավասար հնարավորություններ*»[3]:

Իսկ Նորվեգիայի լեյբորիստական կուսակցությունը առավել որոշակիորեն է արտահայտում իր տեսակետը հնարավորությունների հավասարության մասին, այն համեմատելով իրավունքների հավասարության հասկացության հետ. «*Հավասար հնարավորությունն, այնուամենայնիվ, նշանակում է ավելին, քան ընտրության ազատությունն է եւ բարեկեցիկ սիստեմի առավելությունների մատչելիության ձեւական հավասարությունը*»[4]:

Դանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն էլ խորքային փոխկապվածություն է ուրվագծում հավասարության եւ արդարության հասկացությունների միջեւ. «*Հավասարություն նշանակում է հասարակության ունեցվածքի ազնիվ եւ սոցիալապես արդար բաշխում: Այն նշանակում է հավասար հնարավորություններ եւ հավասար մատչելիություն կրթության, առողջապահության եւ այլ ծառայությունների ոլորտում՝ անկախ սեռից, սոցիալական եւ էթնիկական դիրքից: Հավասարության հասկացությունը, անշուշտ, չի ենթադրում, թե մենք բոլորս պետք է լինենք նմանատիպ*»[5]: Կարեւոր հաստատում է այստեղ երեւան գալիս, այն է՝ սոցիալիստական ուրույն հասկացությամբ հավասարությունը օպտիմալացվում է հօգուտ արդարության, այսինքն ընդունելի է հավասարության այն չափը, որ ստեղծում է առավելագույն արդարությունը (այդ սահմանը հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների կետն է), իսկ դրանից առավել հավասարեցումները (նորվեգացի լեյբորիստների բնորոշմամբ՝ ձեւական հավասարեցումները) միայն սահմանափակում են արդարություն հասկացության շրջագիծը:

Ֆորմացիոնալ տեսությունների խնդրահարույց եւ ոչ ընդհանրական բանաձեւումներից խուսափելով, ՀՅԴ ծրագիրն, առանց պատմական հերթավորման փորձի, ներկայացնում է տիրապետության եւ շահագործման տարբեր արտահայտությունները. «*Տիրապետության եւ շահագործման տարբեր ձեւերն են դրամատիրությունը, կայսերապաշտությունը, ամբողջատիրությունը, գաղութատիրությունը...*»: Հատկանշական է, որ տիրապետություն (domination) եւ շահագործում (exploitation) զույգ հասկացությունները հաճախ միասին են գործածվել ՀՅԴ ծրագրում, թերեւս որպես միեւնույն երեւույթի տարբեր դրսեւորումներ, որպես մեկը մյուսի նկատմամբ լրացուցիչ ըմբռնումներ: Այս մեթոդոլոգիան լայն կարելիություն է ընձեռում: մարդկային պատմության մեջ նշմարելու ոչ միայն հասարակական-տնտեսական եւ դասակարգային հակասություններն ու ընդհարումները, այլեւ միջպետական, ցեղային, դավանական, մշակութային եւ նմանատիպ մյուս բոլոր այն հակամարտությունները, որոնք, հակառակ նյութապաշտական դպրոցների տրամաբանության, դասակարգային հակասությունների սոսկական հետեւանքները չեն եղել, այլ հաճախ որպես զուտ տնտեսական պայմաններից անկախ գործոններ՝ իրենց հերթին, խոշոր դեր ու կշիռ են ունեցել մարդկության պատմության մեջ:

Տիրապետության եւ շահագործման զույգ երեւույթների ուրվագծմանն առընթեր, այս ենթագլխում, ազատության եւ հավասարության սկզբունքները եւ դրանց իրականացման համար տարվող պայքարը բնութագրվում է որպես անխուսափելի եւ անշրջելի ձգտում. «*Բայց մարդ անհատը, ընկերային հավաքականությունները, ժողովուրդները եւ ազգերը ձգտել են ազատության եւ հավասարության եւ պայքարել դրանք իրականացնելու համար*»:

Արդարության, ազատության եւ հավասարության իդեալները երեւակայական կամ ուտոպիական չեն, այլ, ըստ ՀՅԴ ծրագրի, դրանք իրականացնելու ուղղությամբ մղվող պայքարը թե բնական է, թե խորապես գիտակցված, որը «*ընթանում է մարդու եւ հասարակության կյանքի զարգացման զույգ գործոնների՝ առարկայական եւ ենթակայական ազդակների փոխներգործությամբ*»:

Ահա ՀՅԴ ծրագիրն այստեղ ամրագրում է դաշնակցական պատմա-փիլիսոփայական այն դրույթը, համաձայն որի առարկայական եւ ենթակայական գործոնների համադրական (սինթետիկական) փոխներգործությամբ է

պայմանավորվում մարդու զարգացումը: Պատմա-փիլիսոփայական այս ինքնուրույն մոտեցումը ձեւավորման եւ հղկման բավական հին ուղի է կտրել մեր գաղափարախոսական գրականության մեջ, որն, ըստ Երվանդ Ֆրանգյանի, Հրաչ Տասնապետյանի եւ ՀՅԴ այլ տեսաբանների, կարելի է անվանել «պատմական իրապաշտություն»:

Խոհափիլիսոփայական այս համակարգի տրամաբանությամբ է նաեւ ձեւավորվում ազգային-ազատագրական պայքարների եւ հասարակական շարժումների բնական զուգահեռության ու ֆունկցիոնալ փոխկապվածության սկզբունքը. «*Այդ պատմական հունի մեջ տեղ են գտնում ե՛ւ ազգային ազատագրական պայքարները, ե՛ւ մարդկային ընկերության բնաշրջական կամ հեղափոխական առաջընթացը դեպի քաղաքական, ընկերային եւ տնտեսական իրավունքների հավասարությունը կենսագործող արդար կարգեր*»:

Նշված սկզբունքներից բացի վերոհիշյալ տողերում հատկանշական են հետեւյալ մոտեցումները.

- Նախ մարդկային հասարակության առաջընթացի հարցում՝ ե՛ւ բնաշրջական, ե՛ւ հեղափոխական ուղիներով ընթանալու տեսությունը, որով մեր աշխարհընկալումը կատեգորիկ կերպով սահմանազատվում է մի կողմից՝ էվոլուցիոնարիստական, գրադուալիստական տեսություններով բնորոշվող պահպանողական գաղափարախոսություններից, մյուս կողմից՝ զարգացումը միմիայն ռեւոլուցիոնարիզմով պայմանավորող ծայրահեղական ձախ գաղափարախոսություններից: ՀՅԴ համոզմամբ մարդկային զարգացումները ընթանում են բնաշրջական ուղիներով, սակայն երբ հանդիպում են կոշտ խոչընդոտների, ապա հեղափոխությունը դառնում է անխուսափելի: Այս մասին դեռ առավել հստակ ձեւակերպումների կհանգենք:

- Ապա՝ արդար կարգերը ներկայացվում են որպես վախճանական նպատակ, կարդինալ տեսլական: Այլ խոսքով, այստեղ հաստատվում է այն, որ մեր գաղափարախոսական տեսլականը չի ավարտվում բարեփոխումներով, այլ ընդգրկում է արդար կարգերի կամ համակարգի կերտման առավել լայն հեռանկար:

* * *

Երկրորդ ենթագլխում ծրագիրը գնահատում է աշխարհի ներկա կացությունը: Արդյունաբերականացման ու արհեստագիտության արագ զարգացումը նկատի ունենալով, ծրագիրը հաստատում է, սակայն, որ «*մարդկային ընկերությունը շարունակում է ենթակա մնալ ներազգային կամ ազգամիջյան մակարդակների վրա խտրականություններին եւ բեւեռացումներին*»: Ներկայիս ազգամիջյան մակարդակում՝ համաշխարհային կապիտալիզմի տիրապետության եւ ներազգային մակարդակի՝ շահագործման համակարգերի միջեւ փոխկապակցվածության մասին կարեւոր հաստատման ենք հանդիպում Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության 2005 թ. ծրագրում, ուր ասվում է. «*...մենք ականատես ենք լինում ոչ ժողովրդավարական վարչակարգերի եւ միջազգային կապիտալի միջեւ նոր դաշինքների*»[6]:

Վերոհիշյալ իրականության վերլուծումը խորացնելով, ՀՅԴ ծրագիրը ժամանակակից համաշխարհային տիրապետության հիմքում ընդգծում է երկու գլխավոր համակարգերի գոյությունը՝ արեւմտյան կապիտալիստական եւ խորհրդային տեսակի ամբողջատիրական կարգերը: Վերջիններս «*գաղափարախոսական եւ այլ պիտակների անվան տակ հաստատեցին պետական դրամատիրություն ու բռնապետություն՝ ոտնահարելով ենթակա ժողովուրդների ազգային-քաղաքական եւ ընկերային-տնտեսական ազատությունները եւ իրավունքները*»: Այստեղ կարեւոր ենք համարում մեջբերել գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության հաստատումը խորհրդային ամբողջատիրության մասին: Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ոչ միայն իր պատկառելի պատմությամբ, այլ նաեւ ճակատագրի բերմամբ, նմանվում է ՀՅԴ-ին՝ խորհրդային ամբողջատիրության լուծը սեփական հայրենիքում ճաշակելու, բայց մշտապես՝ ճշմարիտ սոցիալիզմին հավատարիմ մնալու իմաստով: Թերեւս սա է պատճառը, որ գերմանական սոցիալ-դեմոկրատիան էլ ՀՅ Դաշնակցության պես, որպես մարդկային պատմության կարեւոր փորձ, հուշում է խորհրդային տիպի ամբողջատիրության թողած հետքերի մասին. «*Խորհրդային տիպի պետության ավարտով*,- ասում են գերմանացի սոցիալ-դեմոկրատները,- *ոչ թե հերքվեց դեմոկրատական սոցիալիզմի գաղափարը, այլ հստակորեն հաստատվեց սոցիալական դեմոկրատիայի կողմնորոշումը դեպի խորքային արժեքներ: Մեր պատկերացմամբ դեմոկրատական սոցիալիզմը մնում է համերաշխության մեջ ապրող ազատ ու անկախ հասարակության տեսլականը*»[7]:

Դասակարգային տարբերությունների եւ ընկերային

համերաշխության խախտման հիմնական պատճառը ՀՅԴ ծրագիրը տեսնում է փոքրամասնության ձեռքում տնտեսական եւ քաղաքական իշխանության կենտրոնացման մեջ: Այդ ուժի կենտրոնացումը սակայն, ըստ ծրագրի, սահմանափակված չի մնացել տեղական, ազգային սահմաններում եւ, նվաճելով տարածաշրջանային կամ համաշխարհային մակարդակ, վերածվել է մեծապետական համակարգի, որի տիրապետությանը «*նույնիսկ իրենց անկախությանը տիրացած պետություններից ու ժողովուրդներից շատերը ենթակա են մնացել*»: Ազգային պետությունների դեմ ծառացող այս վտանգի մասին ահազանգում են նաեւ շվեդ սոցիալ-դեմոկրատները. «*Ալեկոծվող աշխարհում*,- ասում են նրանք,- *որտեղ մենք ապրում ենք, ազգային պետությունները նոր մարտահրավերների են դիմակայում*»[8]: Իսկ անկախ պետությունների ենթակայության երեվույթը գերմանացի սոցիալ-դեմոկրատները բնորոշում են հետեւյալ կերպով. «*Ազգային պետությունները, նույնիսկ ամենամեծերը նրանցից, վտանգի են ենթարկվում՝ դառնալու գլոբալ կապիտալի ներդրումների համար մրցող սովորական մի վայր*»[9]:

Անդրադառնալով կապիտալիզմի ներկայիս հանգրվանին, ՀՅԴ ծրագիրը հատկապես նշում է տնտեսության համաշխարհայնացման երեւույթը (globalization), որը «*բնորոշվում է նորագույն արհեստագիտությամբ, մարդուժի որակական զարգացումով, հաղորդակցական ցանցերի եւ տեղեկությունների ընդարձակումով*»:

ՀՅԴ ծրագիրը, սակայն, հաստատում է, որ այս նպաստավոր եւ դրական կողմերով հանդերձ, համաշխարհայնացումն ավելի բացասական հետքեր է թողել եւ թողնում, ապա թվարկում է համաշխարհայնացման բացասական հետեւանքները. «*...ազգային տնտեսությունների քայքայում, աշխատուժի զանգվածային տեղաշարժ, գործազրկության աճ, աշխատանքի արժեզրկում, տեղեկությունների տիրապետում եւ շահախնդիր օգտագործում, որակյալ մարդուժի շահագործում, ազգային մշակույթները խաթարող, սպառողական կեղծ մշակույթի կազմավորում*»:

Համաշխարհայնացման երեւույթը քննարկելիս Դանիայի սոցիալ-դեմոկրատները նույնպես նշում են նրա դրական կողմերը, ասելով, որ «*Գլոբալացումը մեզ ընձեռում է շատ նոր հնարավորություններ, բայց նաեւ նոր պահանջների առջեւ է կանգնեցնում մեզ որպես մարդ եւ որպես հասարակություն*»[10]: Այդուհանդերձ, ՀՅԴ ծրագրի նման, Դանիայի սոցիալ-դեմոկրատների ծրագիրը եւս ընդգծում է երեւույթի բացասական երեսները. «*Գլոբալիզացիան նաեւ նշանակում է*,- ասում են նրանք,- *որ մեր ազգային արժեքներն ու կարգուկանոնը մարտահրավերի են ենթարկվում, քանի դեռ մարդուժը, կապիտալը, պղծումն ու հանցագործությունը շրջում են սահմանների վրայով*»[11]:

Շվեդ սոցիալ-դեմոկրատները համեմատաբար ավելի չափավոր են արծարծում իրենց մտահոգությունը, բավարարվելով ասելով, որ «*Գլոբալիզացիան նշանակում է, որ մենք այլեւս չենք կարող միայնակ լուծել ազգային խնդիրները*»[12]:

Գերմանացի սոցիալ-դեմոկրատները համաշխարհայնացման բացասական կողմերից բացի, նշում են նաեւ համաշխարհայնացման երեւույթին առընթեր անդրազգային տնտեսական ուժերի քայքայիչ ներգործությունը. «*Գլոբալիզացիային համընթաց աշխարհը վերածվում է մի պարզ շուկայի*,- հաստատում են նրանք:- *Տնտեսական իշխանությունը համակենտրոնանում է գլոբալ կորպորացիաների, բանկերի, հիմնադրամների ձեռքում: Անդրազգային ընկերությունները ծրագրում են իրենց շահութաբեր ռազմավարությունը՝ աշխարհով մեկ քայքայելով ժողովրդավարորեն օրինականացված որոշումները*»[13]:

Այս դիտանկյունից էլ ՀՅԴ ծրագիրը վերլուծում է համաշխարհային մակարդակով իրագործվող այս քայքայիչ գործընթացը. «*մեծապետական ուժերը կամ տնտեսապես զարգացած համակարգերը՝ միջազգային եւ անդրազգային ընկերությունները, հավելյալ դրամագլուխ, հումք, շուկաներ եւ փոխադրական ուղիներ ապահովելու համար քաղաքականապես կամ տնտեսապես գերիշխել են ժողովուրդներին, ազգային պետություններին*»:

Ներազգային եւ համաշխարհային վերոհիշյալ չարիքների, տիրապետության, շահագործման եւ իրավազրկման դեմ պայքարը, հետեւաբար, «*ենթադրում է քաղաքական ու տնտեսական ազատությունների եւ մշակութային ինքնուրույնության ձգտում թե ներքին, թե արտաքին ճակատների վրա*»:

Արտաքին ճակատի վրա համաշխարհային տիրապետության դեմ պայքարի միջազգային նշանակությունը մեկնաբանվել է նաեւ Գերմանական սոցիալ-դեմոկրատա-

կան կուսակցության 2007 թ. «Համբուրգյան ծրագրում», ըստ որի «*ազգային պետությունները պետք է միավորեն ուժերը եւ միասնաբար ուժեղացնեն իրենց ազդեցությունը: Եվրոպան որդեգրել է այս գործընթացը: Սոցիալական Եվրոպան կարող է նաեւ հարացույցի դեր խաղալ աշխարհի մյուս մասերի համար*»[14]:

Նորվեգացի լեյբորիստներն էլ, նույնպես, հավատում են ներքին եւ արտաքին ճակատների վրա տիրապետության դեմ պայքարի անհրաժեշտությանը. «*Սոցիալ-դեմոկրատիան սահմաններ չունի*,- ասում են նրանք:- *Նորվեգական լեյբորիստական կուսակցության հիմնական գաղափարները՝ ազատության, համերաշխության եւ հավասար հնարավորությունների մասին, կանգ չեն առնում մեր ազգային սահմանների մոտ: Մենք ջանում ենք ստեղծել գլոբալ հասարակություն՝ հիմնված գործունյա ազգերի վրա, որտեղ բոլոր քաղաքացիները կունենան ժողովրդավարական իրավունքներ՝ հիմնված արդարության եւ ժողովրդավարական օրենքների վրա, աշխատելու իրավունք եւ հնարավորություն՝ ապահովելու իրենց եւ իրենց ընտանիքներին*»[15]:

Երրորդ ենթագլուխը, փաստորեն, մի ընդհանրացնող բանաձեւում է՝ ամփոփում՝ ՀՅԴ ընկերվարության մասին:

«*Հայ Յեղափոխական Դաշնակցության համոզումով, ընկերվարության ճանապարհով է, որ մարդկության քաղաքական, տնտեսական եւ ընկերային զարգացումը օժտվում է արդար եւ համերաշխ հարաբերություններով*»:

Այստեղ ծրագիրն ամրագրում է արդարության եւ համերաշխության սկզբունքները: Համերաշխությունը պետք չէ շփոթել անշարժ անդորրության հետ, որն, ըստ էության, վաղանցիկ է եւ բաց համակարգերին մատնելու է ապակայունության: Համերաշխ հարաբերությունները խորքում ենթադրում են հասարակական այնպիսի դիսցիպլին, որի ձեւավորմամբ, առգո հարցեր բարենպաստ լուծում կստանան բազմամակարդակ օրենքների կանխորոշված համակարգի միջոցով: Սա նշանակում է, որ հասարակական համերաշխության ՀՅԴ բնորդը, համընդհանուր կերպով, ապահովում է թե՛ լիակատար մասնակցության, թե՛ անկաշկանդ մրցակցության՝ միատեղ գոյության կայուն միջավայր:

Անհրաժեշտ է այստեղ նշել, որ լեյբորիստական մի շարք կուսակցություններ այսօր խուսափում են իրենց առաջարկած համակարգը նկարագրել որպես սոցիալիստական: Բրիտանական, ավստրալական եւ նորզելանդական լեյբորիստները, օրինակ, իրենց պլատֆորմներում, ընդարձակ բնութագրումներ տալով իրենց առաջադրած հասարակական բնորդների մասին, այնուամենայնիվ չեն օգտագործում սոցիալիզմ եզրույթը: Իսկ սոցիալիստական եւ որոշ սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ ոչ միայն չեն խորշում հայտնելու իրենց հավատարմությունը սոցիալիզմի նկատմամբ, այլեւ, ժամանակ առ ժամանակ, հստակեցնում եւ վերստին բանաձեւում են իրենց նորովի պատկերացումները այդ հիմնարար գաղափարի մասին: Այդ իմաստով կարելի է Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը համարել ամենաառաջատարներից մեկը: «*Դեմոկրատական սոցիալիզմ*,- ամրագրելով, ամրագրում են նրանք իրենց գործող ծրագրում:

*Մեր պատմությունը ձեւավորվել է դեմոկրատական սոցիալիզմի՝ ազատ եւ հավասար մարդկանց մի հասարակության գաղափարով, որտեղ իրականանում են մեր խորքային արժեքները: Այն պահանջում է տնտեսության, պետության եւ հասարակության այնպիսի կառուցվածք, որը երաշխավորում է քաղաքացիական, քաղաքական, սոցիալական եւ տնտեսական հիմնավոր իրավունքներ բոլոր մարդկանց համար՝ ապրելու շահագործումից, ճնշումներից եւ բռնությունից զերծ կյանքով*»[16]:

* * *

«*Ընկերվարությունը ձգտում է ինչպես անհատի եւ նրա աշխատանքի ազատագրությանը, այնպես էլ ազգերի? իբրեւ հավաքական անհատականությունների ամբողջական ազատագրությանը, անկախությանն ու գերիշխանությանը եւ նրանց համերաշխ համակեցությանն ու իրավահավասար գործակցությանը*»:

Այսպիսով, ՀՅԴ ծրագիրն արծարծում է այն միտքը, որ ընկերվարությունը ոչ միայն հասարակական-տնտեսական կամ աշխատանքի, այլ նաեւ ազգերի ազատագրության (emancipation, էմանսիպացիա) գաղափար է: Շվեդիայի սոցիալ-դեմկորատները ինքնուրույն ավանդական մոտեցումներ ունեն սոցիալիզմի այս էական բնույթի մասին. «*Սոցիալ-դեմոկրատիան հովանավորում է դեմոկրատական ազատությունների ուղղությամբ մղվող ժողովրդական պայքարները*,- ասում են նրանք,- *եւ պաշտպանում*

*գերտերություններից փոքր ազգերի կախվածությունը բացառող իրավունքը»*[17]:

Սոցիալիզմի այս էական բնույթը բխում է այն պարզ տրամաբանությունից, թե ով ձգտում է հասարակական ազատագրության ու արդարության՝ նա չի կարող չձգտել նաեւ ազգային ազատագրության, եւ, փոխադարձաբար, ով նպատակ է հետապնդում ազգի ազատ ու անկաշկանդ զարգացման՝ չի կարող անտարբեր գտնվել հասարակական արդարության եւ հասարակական համերաշխության նկատմամբ: Սոցիալիզմի այս էական բնույթի մասին հետաքրքիր միտք է հայտնել Երվանդ Ֆրանգյանը: Նրա կարծիքով սոցիալիզմը ձգտում է «*ստեղծել անկախ, ինքնօրեն ազգություններ եւ ապահովել նրանց տեղը եւ իրավունքը... Սոցիալիստական կարգի, սոցիալիստական կուսակցությունների հաղթանակի գրավականը կայանում է բոլոր ազգությունների հեղափոխական դեմոկրատիայի, աշխատավոր մասսաների կուռ, համերաշխ միացման մեջ: Իսկ դրա համար առաջնահերթ կարեւորություն, հրամայական անհրաժեշտություն է ներկայացնում ազգային հարցի արդար ու արմատական լուծումը...*»[18]:

Գարեգին Նժդեհն էլ, որին վերջերս ցեղապաշտության որոշ հայ տեսաբաններ շատ են սիրում համարել «հակասոցիալիստ», գերպարզեցված կերպով բանաձեւել է այս նույն միտքը. «*Սոցիալապես որքան արդար՝ այնքան զորավոր է հայրենիքը*,- ասում է նա իր բանտային գրառումներում»[19]: Պատահական չէ, որ գրեթե բոլոր իրավազրկված ազգերի ազատագրական շարժումները, այսպես թե այնպես, հակված են եղել սոցիալական արդարության սկզբունքին:

Հետեւաբար ամբողջական ազատագրության այս երկու տեսակները՝ սոցիալականը եւ ազգայինը, ըստ էության, լրացնում են միմյանց եւ ընթանում են զուգահեռ. «*Այս զուգահեռ պայքարները մղվում են ժողովրդավարական միջոցներով, իսկ ժողովրդավարության խափանման պարագայում, նաեւ՝ հեղափոխությամբ*»:

Ահա այստեղ ՀՅԴ ծրագիրը որոշակիացնում է մեր հեղափոխականության տեսությունը թե ազգային եւ թե հասարակական ազատագրության ասպարեզներում: Ոմանք փափագում են ՀՅԴ հեղափոխականությունը տեսնել միմիայն ազգային-ազատագրական պայքարի դաշտում, ոմանք էլ՝ միմիայն հասարակական գետնի վրա: ՀՅԴ ծրագիրն, այսպիսով, հաստատում է, որ երկու ասպարեզներում էլ, երբ սպառվում են խաղաղ ու ժողովրդավարական շարժման հնարավորությունները եւ խափանվում օրինական մեխանիզմները, ապա, որպես բնական իրավունք եւ անհրաժեշտություն, անխուսափելի է դառնում հեղափոխությունը: Այլ խոսքով, իրական հեղափոխականության տեսությունը թերեւս զատորոշվում է ավանտյուրիստական կամ կույր ռոմանտիկական մտագարություններից այն բանով, որ հեղափոխությունմիջադեպը, էպիզոդը դիտվում է ո՛չ որպես առաջին բաց ճանապարհ, այլ իբրեւ վերջին փակուղին շրջանցող անհրաժեշտ այլընտրանք:

(շարունակելի)

---

1 ածակ Գ., Ինչ է ազգությունը, Բեյրութ, 1974, էջ 252:

2 Լեհաստանի ձախ դեմոկրատական ճակատ, Սահմանադիր ծրագիր:

3 Արգենտինայի սոցիալիստական կուսակցություն, Ծրագիր, 2002:

4 Նորվեգիայի լեյբորիստական կուսակցություն, Պլատֆորմ, 2005-2009 թթ., 2005:

5 Դանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Քաղաքականություն եւ սկզբունքներ, 2005:

6 Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 2005:

7 Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Համբուրգյան ծրագիր, 2007:

8 Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 2005:

9 Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Համբուրգյան ծրագիր, 2007:

10 Դանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 2004:

11 Նույն տեղում:

12 Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 2005:

13 Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Համբուրգյան ծրագիր, 2007:

14 Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Համբուրգյան ծրագիր, 2007:

15 Նորվեգիայի լեյբորիստական կուսակցություն, Պլատֆորմ, 2005-2009 թթ., 2005:

16 Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Համբուրգյան ծրագիր, 2007:

17 Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 1993:

18 Ֆրանգյան Ե., Հասարակագիտական էտյուդներ, Բագու, 1917, էջ 45-46:

19 Գաղափարագրություն ՀՅ Դաշնակցության, Ա հատոր, Գաղափարաբանություն, 1997, էջ 243:

# «Գնա, արագ վագիր, գնա »

**Կ. Բասենցի**

Այս տարուայ օգոստոսի 23-ին լրանում է Արցախեան ազատամարտի նուիրեալներից Մերուժան Մոսեանի, Միեր Ջուլիաճեանի, Արտակ Մնացականեանի, Լեւոն Համբարձումեանի եւ Ռուդիկ Աւագեանի նահատակութեան 15-րդ տարին: Կարծում եմ, թէ նրանց շիրիմներին մի փունջ թարմ ծաղիկ դնելուն համազօր են իմ այս յուշերը, որ դոյզն-ինչ չափով, փորձելու են ընթերցողին հաղորդել նրանց կեանքին, անմնացորդ նուիրուածութեանը վերաբերող դրուագներ...

* * *

1993 թ. Ակնայի (Աղդամ) ազատագրումից առաջ, մշակուեցին եւ գործադրուեցին մի շարք գործողութիւններ Կաքաւաձոր (Մարզիլի), Բաղմանլար եւ այլ գիւղերի, աւանների ուղղութեամբ: Մերուժան Մոսեանի ղեկավարած գումարտակը, որ Մարտունի քաղաքի երկու գումարտակներից մէկն էր, գտնուում էր այդ գործողութիւնների կիզակէտում: Կաքաւաձորի ազատագրման գործողութեան նպատակը, զուտ ռազմական նպատակներից բացի, այնտեղի, գրեթէ անսպառ, վառելանիւթի առգրաւումն ու Մարտունի փոխադրումն էր: Մերուժանը, ինչպէս միշտ, զգուշացրել էր իր գումարտակի մարտիկներին, որ չի հանդուրժի թալանչիութեան որեւէ դէպք եւ կը պատժի մեղանչողներին:

Գործողութեան աւարտին պարզուեց, որ երեք զինեալ մարտիկ ոչխարներ էին բերել Մարզիլիից եւ տարել իրենց տները: Մերուժանի բարկութեանը սահման չկար: Կանչեց պարտազանցներին:

Գիշերուայ կէսին երեք զինեալներ ներկայացան գումարտակի կենտրոնական շտաբ, ուր միայն Մերուժանն ու ես էինք նստած... Մերուժանին դեռ այդպէս բարկացած չէի տեսել: Մերուժանը զինաթափեց նրանց եւ կարգադրեց՝ ոչխարներն անմիջապէս փոխադրել գումարտակ:

* * *

Մի առաւօտ, նստած ճաշում էինք, երբ գումարտակի «Կամազ»-ի նուիրուած եւ շատ պարտաճանաչ վարորդը բարեւելով անցաւ... Յանկարծ Մերուժանը նրան ետ կանչեց՝ ասելով.

- Էդ կօշիկներդ որտեղի՞ց:

- Մարզիլիից վերցրի,- պատասխանեց վարորդը:

- Հանի՛ր ու քո կօշիկները հագի՛ր,- մեղմ ձայնով ասաց Մերուժանը:

- Մերուժ, կօշիկներս օգտագործելի չէին:

- Գնա բեր, տեսնեմ...

Եւ վարորդը գնաց, բերեց իր մաշուած կօշիկները, որոնք իրօք հագնելու բան չէին...

- Դէ հագի՛ր,- ասաց Մերուժանը, եւ վարորդն առանց սակարկելու հանեց «առգրաւուած» նոր կօշիկները ու հագաւ հները:

Այնուհետեւ Մերուժանը աւարառուած նոր կօշիկները նետեց փայտի «փեջ»-ը:

Մերուժանի այդ խստութիւնը նոյնիսկ դաժան էր, սակայն էական անհրաժեշտութիւն էր, որովհետեւ



Մերուժան

թալանչիութիւնը պատերազմում զինուորների նկարագիրը փչացնելուց բացի, հենց ռազմական իմաստով անդառնալի հետեւանքներ կարող էր ունենալ: Նոյնիսկ պատահել էին դէպքեր, երբ համակարգուած նահանջի հրամանին չենթարկուելով, թալանով զբաղուող մարդիկ յայտնուել էին վտանգաւոր գոտում...

* * *

«Մեր Մերուժ»-ին ազատամարտիկները շատ էին սիրում, ոչ միայն իր ռազմական իմացութեան եւ արիութեան, այլ նաեւ իր մարդկային առաքինի ու անաչառ նկարագրի համար: Մի օր Մերուժանի հայրական տանը, իր հօր՝ Արմէն Մոսեանի հետ նախաճաշում էինք: Աւարտելուց յետոյ, երբ պատրաստւում էինք գումարտակ վերադառնալ, տիկին Մարգօն՝ Մերուժանի ազնուափայլ, իմաստուն եւ տառապած մայրը մօտեցաւ եւ Մերուժանից թաքուն մի փոքր շիշ մեկնեց ինձ, ապսպրելով.

- Բալես, մի քիչ սալեարկա կը բերես տուն, փեջը վառելու համար:

Գումարտակում, երբ խնդրեցի գումարտակի պահեստապետ Սերվենթին շիշը լցնել, Մերուժանը նկատեց ու հարցրեց.

- Մամա՞ն է ուզել:

- Հա,- միամիտ պատասխանեցի:

- Ներիր,- ասաց Մերուժանը,- բայց թոյլ չեմ տայ, որ գումարտակի պահեստից մեր տան համար սալեարկա տանես: Վառելիքի օգտագործումը ենթակայ է խիստ ռեժիմի,- աւելացրեց նա:

- Մի շի՞շն էլ:

- Մի շիշն էլ...

Մի քանի օր յետոյ, նստած էինք գումարտակի շտաբում, երբ ներս մտաւ մեր նուիրեալ ազատամարտիկներից մէկը եւ դիմեց Մերուժանին.

- Մերուժ, ինձ 15 լիտր սալեարկա է հարկաւոր:

- Ինչի՞ համար,- հարցրեց Մերուժանը:

- Դէ, գիտես էլի, քենիս է ամուսնանում Ստեփանակերտում, պիտի մերոնց «Կամազ»-ով տանեմ, վերադարձնեմ:

- Սերվենթ, 15 լիտր սալեարկա տուր տղուն,- ասաց Մերուժանը...

Զարմացած դիմեցի Մերուժանին.

- Բա ո՞ւր մնաց «սալեարկայի օգտագործման ռեժիմ»-ը:

- Դա իր տեղում է,- խնդալով պատասխանեց Մերուժանը եւ հազիւ ծիծաղը զսպելով աւելացրեց.- «օգտագործման ռեժիմ»-ը թոյլ է տալիս կռուող «սալդաթ»-ի ամենաանձնական հարցերում օգտա-

կար լինել եւ սա, այս դէպքում, կոչ-ւում է «օգտակարութեան ռեժիմ»:

- Իսկ այդ «օգտակարութեան ռեժիմ»-ը չի՞ տարածւում գումարտակի հրամանատարի վրայ:

- Ի՞նչ ես կարծում,- հարցրեց նա,- պիտի տարածուի՞:

Լռեցի... Պատասխանը շատ պարզ էր: Արցախեան հերոսամարտում Մերուժանը անձնական ոչ մի բան չունէր տալու-վերցնելու՝ սեփական կեանքից բացի: Այդ մասին գիտէինք բոլորս դեռ նրա կենդանութեան ժամանակ:

Այդ մասին գիտէր յատկապէս, եւ բոլորիցս աւելի լաւ, հենց նրա հերոսածին մայրը...

* * *

Կռիւներից մէկի ժամանակ մեր ուժերից մի տաս-տասներկու տանկ, շարասիւնով, սկսեցին առաջանալ դէպի հակառակորդի դիրքերը: Ռազմադաշտը տափարակային էր եւ հակառակորդը իր ծանր ու միջին հրետանիով ուժգին կրակ բացեց մեր տանկերի ուղղութեամբ: Տանկերը սկսեցին դանդաղել, մի երկուսը նոյնիսկ պտտուեցին՝ նահանջելու նպատակով:

Այդ խառնաշփոթի պահին յանկարծ ռադիոկապից լսուեց հետեւեալը.

- Էդ ո՞ւմ «Ուազ»-ն է,- հարցնում էր առաջապահներից մէկը:

- Մերուժի,- պատասխանում է միւսը:

Եւ բոլորս զարմացած սկսում ենք հեռադիտակներով զննել ռազմադաշտը: Նկատում ենք Մերուժանի «Ուազ»-ը, որը սրընթաց առաջ էր շարժւում եւ նրանից գումարտակի հետախուզութեան տղաները, գնդացիրները ձեռքներին, կախուած վիճակում կրակում էին դէպի հակառակորդի դիրքերը:

- Տղերք, մենակ չթողնենք Մերուժին,- ռադիոկապով գոռաց տանկիստներից մէկը:- Թխենք,- աւելացրեց նա:

- Դաւայ, սկսեցինք,- պատասխանեց միւս տանկիստը:

Եւ, անպատմելի արագութեամբ, տանկերը սկսեցին բաց շղթայով շարժուել Մերուժանի «Ուազ»-ի ետեւից... ու «թխել» անասելի ուժգնութեամբ:

Յետոյ իմացանք, որ Մերուժանը կանգ էր առել միայն փախուստի դիմած հակառակորդի դատարկուած խրամատների առջեւ:

Մերուժանի այս արիութեան մասին, երկար ժամանակ, հիացմունքով պատմում էինք: Ինքը համեստաբար լռում էր, եւ միայն բացատրում, որ իր արածը տակտիկական քայլ էր, տանկիստների «դուխ»-ը բարձրացնելու համար, «ուրիշ ոչ մի բան»...

* * *

Ինձ, ասես ի վերուստ, բախտ էր վիճակուել մօտիկից ծանօթանալու եւ ապրելու Արցախեան ազատամարտի տիտանական դէմքերի հետ, ինչպիսիք են Մերուժանը, Պետոն, Աւօն, Միերը, Արտակը, եւ ուրիշներ: Այստեղ անյարմար եմ զգում նշել ողջ մնացածների անունները, որովհետեւ, մօտիկից ճանաչելով նրանց եւ նրանց «խոնարհ հերոսի» տիպարը, ընդամէնը պիտի վիրաւորած լինեմ նրանց ուխտը, անձնազոհի նրանց ամբողջ կենսակերպը: Սա մի տեսակ պարադոքսի է նմանւում. հպարտութեամբ խօսել նահատակների մասին եւ միաժամանակ հպարտութեամբ լռել կենդանի մնացածների դէպքում: Այս պարադոքսը նկատելի է ամէն քայլափոխի, որից ազատուելն էլ անհնար է:

Ինձ ապշեցնում է մի հանգամանք եւս, երբ յիշում եմ թէ՛ նահատակուած եւ թէ՛ կենդանի մնացած ազատամարտիկներից շատերին: Փորձեմ բացատրել միտքս. նախնական տպաւորութեամբ, Մերուժանին գնահատում էի որպէս գումարտակի քաջ, իմաստուն հրամանատարի, կուսակցական սկզբունքային ղեկավարի, ուշիմ մարդու, գաղափարապաշտ հայի...

Նախնական այդ տպաւորութիւններս ճիշտ էին, սակայն, հիմնականում, առընչւում էին Մերուժանի բացայայտ յատկանիշներին: Որքան մտերմանում էինք, այնքան աւելի ու աւելի էի ծանօթանում նրա անհատական բնաւորութեան ոչ բացայայտ կողմերին: Շուտով իմացայ, որ Մերուժանը նուիրուած հայր էր: Չեմ կարող մոռանալ, որ 1993 թ. ամռանը, ռազմական, քաղաքական եւ կուսակցական աշխատանքների ահաւոր գերծանրաբեռնուածութեան պայմաններում, հազիւ մի ա-

զատ պահ գտաւ ու գլխապատառ շտապեց իր դստեր՝ Արմինէի ծննդեան հանդէսին: Այդ ճշտապահ եւ պատասխանատու հրամանատարի, ղեկավար մարդու կերպարի յետեւում թաքնուած էր հոգատար եւ բարի հօր վարքագիծը: Յետոյ էլ իմացայ, որ նա նաեւ հոգատար ամուսին էր, ուշադիր եղբայր եւ երախտագէտ զաւակ:

Մերուժանի նման հերոսների հանրայայտ յատկանիշները անկախ չեն իրենց անհատական բնաւորութեան նուրբ գծերից: Աւելին, այդ բոլոր յատկութիւնները նրանց մէջ գոյանում են որպէս մէկ անքակտելի ամբողջութիւն: Հետեւաբար շատ պարզ տրամաբանութեամբ հասկացայ, որ հերոսներին յայտնաբերելու համար կարիք չկայ սպասել պատերազմի, այլ, տեսնելով նրանց վսեմագոյն վարքագիծը ընտանեկան մթնոլորտում, մարդկային փոխյարաբերութիւններում եւ ընկերական միջավայրում, նրանց կարելի է յայտնաբերել հենց խաղաղ ժամանակ: Այս իմաստով նայում եմ շուրջս եւ ինձ համար ակամայ բացայայտում ողջ մնացած հերոսներին եւ, ինչու չէ, նաեւ նրանց, որոնք դեռ չհռչակուած հերոսներ են:

* * *

Անտանելի օր էր՝ Մարտունու ինքնապաշտպանութեան հրամանատար Աւոյի (Մոնթէ Մելքոնեան) նահատակութեան օրը: Այդ օրը Աւօն, իր «Ուազ»-ով եւ հինգ ազատամարտիկներով շտապում էր Մարզիլի՝ գումարտակներից մէկի հրամանատարի հետ դիրքային հարցեր լուծելու: Հակառակորդի զրահատեխնիկան աստիճանաբար սեղմում էր Մարզիլիի շրջապատման օղակը: Ճամփին Աւօն եւ իր զինակիցները հանդիպում են հակառակորդի «ԲՄՊ-2»-ին: Բախումն անխուսափելի էր: Հենց այդ ժամանակ էլ Աւօն հերոսաբար զոհուեց «ԲՄՊ-2»-ից արձակուած «սնայդեր»-ի բեկորներից:

Մենք գտնուում էինք դէպքի վայրից մի երկու կիլոմետր հեռու, մի բարձունքի վրայ եւ ռադիոկապի միջոցով միայն իմացանք, որ «զրոզրո»-ի «Ուազ»-ը ընկել է շրջափակման մէջ: Ահաւոր իրավիճակ էր: Ինչպէ՞ս կարելի էր ճեղքել ադրբեջանական բանակի առաջացող զրահատեխնիկայի շղթան: Հարկաւոր էր իսկոյն կողմնորոշուել:

Յանկարծ ռադիոկապից իմացանք, որ Մերուժանը, ամէն ինչ անտեսելով, շարժւում է դէպի «խաչմերուկ»:

Քարացանք ու նայեցինք մի-

Մոնթէ Մելքոնեան

մեանց: Այնուհետեւ ռադիոկապից հաղորդուեց, որ մի քանի հրամանատարներ եւս շարժւում են դէպի «խաչմերուկ»:

Նրանք գրեթէ միաժամանակ հասան «խաչմերուկ» եւ շրջափակուած ազատամարտիկներին եւ «Ուազ»-ը տեղափոխեցին հայկական դիրքեր: Փրկարարութեան այդ գործողութիւնը հրաշքի էր նման... Բայց, աւաղ, մեր ուրախութեան ալիքը սառեց, երբ իմացանք, որ Աւօն տեղում նահատակուել է, իսկ ծանր վիրաւորուած Սարիբէգին փոխադրել են Մարտունու հիւանդանոց: Շտապեցինք այնտեղ: Մի քանի ժամից վախճանուեց նաեւ մեր աննման Սարիբէգը: Այնուհետեւ տեսայ Մերուժանին՝ անհուն վշտից կարկամած:

Անտանելի, շատ անտանելի օր էր այդ օրը:

Ակամայից յիշել էի Աւոյի խօսքը: Պատմում էին, որ Աւօն մի օր, մի հետախուզական գործողութիւնից վերադառնալուց յետոյ, ակնարկելով Մերուժանին եւ մի քանի այլ հրամանատարների, ասել էր, որ «այս տղաքը երբեք դիակս ռազմադաշտում, թուրքին չեն թողնի»: Այդ խօսքը յիշեցրի Մերուժանին:

Մերուժանը գլխով հաստատեց եւ սուզուեց իր խոհերի մէջ:

* * *

Մերուժանի գումարտակի հետախոյզները բացառիկ տղաներ էին: Ամենաերիտասարդներից էր Արտակ

Արտակ Մնացականեան

Մնացականեանը, Երեւանի Ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանող: Չափազանց ուշիմ այդ երիտասարդը, որն, ի դէպ, «Europe» եւ «Deep Purple» երաժշտական խմբերի երկրպագու էր, մի օր մօտեցաւ ինձ եւ յայտնեց իր եւ իր մտերիմ ընկերոջ ցանկութիւնը՝ ՀՅԴ շարքերն անցնելու մասին:

- Արտակ ջան, դեռ պիտի ծրագիր, կանոնագիր իմանաք, յետոյ անցնէք շարքերը,- ասացի նրան:

- Մենք ծրագիրը լաւ գիտենք, բայց կանոնագրից շատ բան չենք հասկանում,- պատասխանեց նա՝ աւելացնելով,- մենք վաղուց պիտի երդուէինք, ուղղակի չի ստացուել:

Որոշ ժամանակ անց Մարտունու կոմիտէն կազմակերպեց նրանց երդման ընդունումը եւ ինձ էլ յանձնարարեց կատարել կարգը: Չեմ կարող մոռանալ երկու երիտասարդների երդման այդ արարողութիւնը: Այդ գիշեր, սովորականի պէս էլ լոյս չկար, հետախուզականի «կազարմա»-ում տղաները պարում, ուրախանում էին իրենց երիտասարդ ընկերների երդման առիթով:

«Մագնիտոֆոն»-ից հնչում էր ռուսերէնով մի երգ՝ Ղարաբաղին նուիրուած՝ «Եա պիշու պիսմօ իզ Կարաբախա...»: Տղաները շուրջպար էին բռնել եւ նրանց ներբաններին հարուածից յատակի փոշին բարձրանում եւ մոմերի մեղմ լոյսի տակ մշուշապատում էր զօրանոցը: Ահա այն անփոխարինելի տեսարանը, որ երբէք չի անհետանայ յիշողութիւնից...

Կամաց կամաց մագնիտոֆոնի մարտկոցները նստեցին եւ Արտակը սկսեց գեղեցիկ ձայնով երգել յեղափոխական երգեր: Քէֆը չընդհատուեց: Մի պահ մօտեցայ Արտակին ու հարցրեցի.

- Արտակ, էդ ո՞նց ա, որ ամբողջ

օրը «Europe» եւ «Deep Purple» լսողդ էդքան յաջող յեղափոխական երգեր ես երգում:

- Եթէ նրանք էլ լսած լինէին մեր յեղափոխական երգերը, համոզուած եմ, որ նոյն թափով կ'երգէին,- ժպտալով պատասխանեց Արտակը:

Մեր աննման Արտակը իրօք լաւ էր սերտել ՀՅԴ ծրագիրը, գաղափարախօսութիւնը: Նրա մօտ ազգային ու համամարդկային արժէքների միջեւ արհեստական ջրբաժաններ չկային: Չկային արհեստական ջրբաժաններ նաեւ արդիականի ու աւանդականի միջեւ: Նրա ըմբռնած «յեղափոխական»-ը խոր իմաստ էր պարունակում: Այդ ինձ ապացուցուեց նաեւ հետագայում:

* * *

Երեւանից Մարտունի էին ժամանել մեր մարտական երեք գործիչներ: Կոմիտէն նպատակայարմար գտաւ նրանց ներկայութեամբ անցկացնել զինավարժական բանակում: Բանակումը կազմակերպուեց «հին դպրոց»-ի մօտակայ տարածքում: Բանակումին մասնակցում էին Մարտունու կոմիտէութեան ընկերները:

Բանակումի ծրագրում, զուտ զինավարժական եւ ռազմագիտական դասընթացներից բացի, նկատի էին առնուել նաեւ նպատակային ժամանցներ: Մի գիշեր էլ գիտելիքների մրցոյթ էր: Ձեւաւորուեցին երկու խումբ. ա) Քաղաք Երեւան, բ) Քաղաք Մարտունի... Ես էլ «իրաւարար»-ն էի: Սկսեցին հարցումներ տալ միմեանց. էլ աշխարհագրական, էլ պատմական ամէն տեսակի հարցեր հնչեցին՝ «ամենաբարձր գագաթը», «ամենաերկար գետը», «Վաթերլոոյի պատերազմը» եւ այլն, եւ այլն... Երեւանից ժամանած տղաների հետ հիացմունքով նկատեցինք, որ Արտակը գրեթէ բոլոր հարցերին ճիշտ պատասխաններ էր տալիս: Գործիչ ընկերներից մէկն ասաց.

- Ահա մի քանի հարցում Արտակին՝ ռազմագիտական բնոյթի,- ու հարցրեց մէկ առ մէկ,- ԱԿՍ-ի «կալիբր»-ից ու հարաւսլաւական ականի գնդիկների քանակից մինչեւ «կապսուլ»-ների տեսակները: Արտակը պատասխանեց ճշգրիտ ու դիմեց ինձ ասելով.

- Բա ՀՅԴ ծրագրից հարցեր չէի՞ք տայ ինձ...

Ու ես մի քանի հարցեր տուեցի: Պատկերը նոյնն էր:

Ապացուցուեց բոլորիս, նոյնիսկ հէնց իրեն լաւապէս ճանաչող մարտունեցի ընկերներին, որ Արտակը բացառիկ է իր գիտելիքներով: Եւ ոչ միայն գիտելիքներով:

* * *

Զինավարժական փորձերից մէկում, մեր գործիչ ընկերը սովորեցնում էր տղաներին, թէ ինչպէս կարելի է վիրաւորներին, կամ զոհուածներին տեղափոխել ռազմադաշտից.

- Գօտին կը փռէք, վիրաւորին կամ զոհուածին կը գլորէք դրա վրայ, այ էսպէս կը հաւաքէք գօտին, յետոյ...

Տղաները երկուական կարգով բաժանուեցին՝ փորձելու համար: Կոմիտէի ներկայացուցիչը ինձ նախապէս զգուշացրել էր ֆիզիկական մարզումների ժամանակ Արտակի ստացած ողնաշարային վնասուածքի մասին, որը չէր հասցրել բուժել՝ Երեւանից Մարտունի շտապելու եւ զինուորագրուելու պատճառով: Յանկարծ նկատեցի, որ նա արդէն ուսերին է վերցրել իր անբաժան, մտերիմ այն ընկերոջը, որի հետ միասին երդուել ու շարքերն էին անցել: Արագ մօտեցայ եւ իրեն արգելեցի այդ փորձը կատարել: Իրեն յատուկ մեղմ եւ իմաստալից ժպիտով ասաց.

- Է՜հ, մէկ ա, մի ընկերոջ կողքին եմ լինելու պատերազմի դաշտում: Եթէ վիրաւորուի կամ զոհուի, հօ չե՞մ թողնելու նրան, ինչ ա թէ «մաջք»-ս (մէջք) ցաւում ա...

* * *

Մերուժանը հետախոյզներին ուղարկել էր, եթէ չեմ սխալւում, Կաքաւաձորի մօտակայքը՝ հետախուզութեան: Նրանք ճանապարհուեցին առաւօտ կանուխ, դեռ լոյսը չբացուած: Մի քանի ժամից խզուեց նրանց ռադիոկապը: Չգիտէինք ուր են եւ ինչ վիճակում: Ահաւոր հոգեվիճակ էր գումարտակում: Գրեթէ բոլորս հաւաքուել էինք ռադիոկապի սենեակ, ուր իրօք մեղուական աշխատանք էին տանում մեր գումարտակի կապաւոր աղջիկները: Ընդունիչի ամէն մի խշխշոցից վեր էինք թռչում տեղից ու վազում դէպի ընդունիչը, դարձեալ՝ ոչ մի կապ... Մերուժանը անհամբեր քայլում ու քայլում էր: Նրա հետ խօսել չէր լինում: Լարուած վիճակում հազար ու մի վարկած էինք առաջ քաշում.- հաղորդի՞չն է փչա-

ցել, էլեմենտնե՞րն են նստել, շրջափակման մէ՞ջ են ընկել... ընդհուպ մինչեւ ամենասարսափելին:

Կէսօրից անց էր:

- «Կամազ»-ը պատրաստէ՛ք, «Տ-72»-ը «խոդ» տուէ՛ք, գնում ե՛նք,- յանկարծ վճռական ձայնով հրահանգեց Մերուժանը:

Տղաները կայծակի արագութեամբ սկսեցին սպառազինուել, սակայն պահը դաժան էր: Ո՞ւր պիտի փնտրէինք նրանց, ո՞ր ուղղութեամբ պիտի շարժուէինք, եւ ամենաճնշիչը՝ ի՞նչ տեսարաններ էին գալու մեր աչքի առջեւ...

Մերուժանը քարտէզը դրել էր իր առջեւ ու կարգադրութիւններ էր անում, երբ հրաշք կատարուեց. «Եկա՜ն»:

Դուրս վազեցինք: Գումարտակի միջանցքում նկատեցի Արտակին: «Raybon» ակնոցը աչքերին, «մագնիտաֆոն»-ի ընկալուչները ականջներին, թերեւս իրեն լսելի երաժշտութեան ռիթմով թափ էր տալիս համազգեստի փոշին: Մեզնից առաջ արդէն հասան ու նրան շրջապատեցին ռադիոկապի մեր աղջիկները:

- Բա միւսնե՞րը,- միջանցքում վազելով, հարցրեց Մերուժանը:

- Հը՞,- ընկալուչը հեռացնելով պատասխանեց Արտակը, եւ ցոյց տուեց գումարտակի մուտքը:

Այնտեղ տեսանք հետախոյզներին, բոլորն էլ ողջ-առողջ: Կորցրածը



Անդրանիկ Պողոսեան

վերստացածի անբացատրելի ուրախութիւն էինք ապրում: Հրաշքի, երազի պէս մի բան էր: Մթնշաղի պահերը, լուսամուտներից թափանցող մեղմ լոյսի բարակ ճառագայթները, փոշուց մշուշապատուած գումարտակի միջանցքը, մեր քնքուշ, բայց արիասիրտ աղջիկների ուրախութեան ճիչերը եւ Արտակի «Raybon»-ը կազմում էին այդ երազային տեսարանի երանգները:

Երեկոյեան զեկոյցից պարզուեց, որ տղաները շրջափակման մէջ էին ընկել: Աւերուել էր նրանց հաղորդիչը: Մի քանի ժամ կռուել եւ, շնորհիւ Արտակի հերթական ինքնազոհութեան, ճեղքել էին ադրբեջանցիների օղակը եւ փրկուել...

- Ի՞նչ ես լսում,- յուզմունքի այդ պահին միայն այս հարցը կարողացայ տալ Արտակին:

- Հը՞,- ընկալուչը դարձեալ հեռացնելով պատասխանեց,- խառը երգեր են՝ «Europe», «Deep Purple», Ներսիկ Իսպիրեան, հա, «Beatles» է՛լ կայ...

* * *

Մերուժանը իսկական ղեկավար էր: Նա ոչ միայն հոգատար էր ազատամարտիկների առօրեայ, այլ նաեւ նրանց հոգեմտաւոր կեանքի նկատմամբ: Երբ մտածում եւ վերյիշում եմ Մերուժանի անհատականութեան այս յատկանիշների մասին, հարց եմ տալիս ինքս ինձ, թէ ինչպէ՞ս էր այդ մեծ ղեկավարը հասցնում լուծել, ի շարս այլոց, նաեւ հոգեմտաւոր սնունդի հարցը: Երբ տեղեկացում էր, որ երաժշտական, մշակութային գործիչ է այցելել Արցախ, մեծ ոգեւորութեամբ մարդ էր ուղարկում նրանց գտնելու եւ Մարտունի հրաւիրելու:

Կարճ ժամանակահատուածում մեզ մօտ եկան երգիչներ Սահակ Սահակեանը, իր նուագախմբով, Արմէն Մովսիսեանը, ուրիշներ եւ անմոռանալի պահեր, ապրումներ պարգեւեցին մեզ: Ամէն անգամ Մերուժանը

յորդորում էր Մարտունու կոմիտէի եւ միւս ընկերներին գեղարուեստական համոյթների մասին իրազեկել ժողովրդին: Կարգադրում էր մի կերպ հիւրընկալել: Յատուկ ուշադրութեամբ հետեւում էր պատանիների, երիտասարդների՝ համերգներին մասնակցութեան հարցին: Տարօրինակ է թւում, բայց նաեւ այդպիսի տիպար էր Մերուժանը:

Նա անսահման յուզուած էր, երբ մեզ այցի եկաւ Հայ ազատագրական պայքարի կենդանի հերոսներից Անդրանիկ Պօղոսեանը: Նախօրեակին, ընթրիքի ժամանակ, Մերուժանը, որ լաւապէս տիրապետում էր Հայոց պատմութեան արդիական էջերին, այսպէս էր բնութագրում Հայ ազատագրական պայքարի այդ հերոսներին.

- Գիտէք ի՞նչ, մենք այստեղ Արցախում զէնքի ենք դիմել մեր ծննդավայրը, ընտանիքը, հարեւաններին պաշտպանելու համար: Պատկերացրէք, որ այդ տղերքը տունտեղ թողած, հայրենի հողից հեռու, օտար երկրներում, ուր ընտանիք չկայ, հարեւան չկայ, պայքարում էին: Մենք այն ժամանակ չէինք էլ կարողանում թիկունք հանդիսանալ նրանց պայքարին: Բայց հիմա այդ հերոսներին մեծարելու պարտականութիւն ունենք...

Անդրանիկ Պօղոսեանը մեզ մօտ եկաւ եւ իր հետ բերեց մի երկար եռագոյն դրօշ, որի վրայ իրենց ստորագրութիւններն էին թողնում ազատամարտիկները: Չգիտեմ քանի ազատամարտիկ ստորագրեց, եւ ստորագրողներից քանիսը ողջ մնացին, բայց գիտեմ, որ Անդրանիկի ձեռքով բերուած այդ դրօշը խորհրդանշում էր Հայ ազատագրական պայքարի շարունակուող ոգին: Ոգի, որ միաւորում էր մարդկանց: Դրօշ, որ կարծես, կտրուած լինելով ժամանակի պարամետրից, իր շուրջ էր հաւաքում մեր պայքարի բոլոր ազատամարտիկներին՝ Վարդաններից ու Դժոխքներից մինչեւ Լիսաբոնի հնգեակը եւ մինչեւ Արցախի ազատամարտիկները:

Հիմա երբ լսում, տեսնում եմ «Յարատեւ կռիւ» մեր նշանաբանը, ակամայից մտաբերում եմ այդ օրերը, Մերուժանի խօսքերը, Անդրանիկի բերած դրօշը...

* * *

Օգոստոսի առաջին օրերն էին: Վերադարձիս նախօրէին, Արտակը այլայլուած դէմքով մտաւ շտաբ եւ դիմեց ինձ.

- Շատ հետաքրքիր երազ եմ տեսել ու վռազ եկել եմ քեզ պատմելու:

- Խէր ա՞,- հարցրեց նրան Մերուժանը:

- Չգիտեմ, պատմեմ, ինքներդ դատէք,- ու պատմեց իրօք խորհրդաւոր իր երազը՝ դիմելով ինձ.

- Ես եւ դու քայլում էինք գումարտակի առջեւի հենց էս պողոտայով: Մեզնից առաջ քայլում էին շատ ուրիշ մարդիկ: Խօսում էինք: Յանկարծ աղմուկ լսուեց մեր ետեւից: Յետ դարձայ, տեսայ մի մեծ ամբոխ «տապոռ»-ներով վազում է դէպի մեզ:

- Ովքե՞ր էին,- հետաքրքրուած հարցրեցի նրան:

- Չգիտեմ: Անծանօթ էին, երեւի «թորք»,- պատասխանեց Արտակը:

- Էդ ոնց իմացա՞ր, որ թուրք են:

- Դէ, թորքերն են «տապոռ»-ով վրայ տալիս: Նրանք գոռալով յարձակուեցին մեզ վրայ: Ես ու դու սկսեցինք վազել պողոտայի երկայնքով: Նրանք հասան ինձ ու տապոռով տուին «մաջք»-իս: Ես ընկայ գետին, նայեցի քեզ ու բղաւեցի՝ գնա, արագ վազիր, գնա: «Տապոռ»-ներով ինձ տալիս էին, ու ես նոյն բանը բղաւում էի... Վախեցած արթնացայ:

Խորհրդաւոր պահ էր, զարմացած նայում էինք միմեանց: Խօսք չէինք գտնում ասելու: Վերջապէս լռութիւնը կոտրեցի՝ Արտակին ասելով.

- Խէր լինի, Արտակ ջան, լուսադէմի երազ է... լուրջ բան չկայ:

- Ինձ համար խէր ա, քե՛զ համար եմ մտահոգ,- խորհրդաւոր ժպիտով ասաց Արտակը՝ աւելացնելով,- էդ լուսադէմի երազներից շատ եմ «տեսալ»:

Բայց, կարծես, բնաւ էլ լուսադէմի երազ չէր... Մարտունուց մեկնեցի օգոստոսի 8-ին: Արտակը Մերուժանի, Միերի, Լեւոնի եւ Ռուդիկի հետ նահատակուեց օգոստոսի 23-ին: Չարաբաստիկ բօթը լսելուն պէս գլխումս անվերջ պտտում էին Արտակի երազը, խորհրդաւոր ժպիտը, նրա տեսած ամբոխը, «տապոռ»-ները եւ ինձ ուղղուած նրա կանչը. «Գնա, արագ վազիր, գնա...»:

# Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 8 (196) XVIII ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Շրջաբերականներ
Հ.Յ.Դաշնակցութեան

1

Ընկերներ,

Ազատական շարժման առաջին յաղթանակը, արդիւնք տարիների չարքաշ աշխատանքի, անբաւ զոհերի և յեղափոխական արիւնոտ կռիւների, տարուած է: Օսմանեան կայսրութեան մի ծայրից միւսը հնչում է Ազատութեան, Հաւասարութեան, Եղբայրութեան կոչը: Երէկեան Հանրաբանտը վերածուած է ազատաշունչ երկրի:

Հանրային կեանքը կերպարանափոխուած է, բանտերը դատարկուած են: Ազատութեան մարտիկները ազատ օդումն են, գրկախառնուած ժողովրդի հետ, որին նրանք այնքան անձնուիրաբար ծառայեցին:

Սակայն համատարած բերկրանքի ընթացքում հին ռեժիմի յիշատակներից սարսափած ժողովուրդների տարբեր խաւերից դուրս են թռչում տարակուսանքի և երկիւղի բացականչութիւններ՝ «Երկա՞ր պիտի տևէ արդեօք» խօսքեր: Մի երկիր, որ այսքան զոհեր տուեց ազատագրութեան, ուր ամբողջ պատմութիւնն ու կեանքը վերածուած էին համատարած տանջանքի, լացի ու անէծքի- չէ կարող, իրաւունք չունի ենթարկուել թերահաւատութեան և տատանման:

Ազատութիւնը արեամբ գնեցինք: Արեամբ էլ կը պաշտպանենք: Նա մերն է: Ոչ ոք նրան յետ խլել չի կարող, որովհետև ոչ

ոք իր կամքով չէ շնորհել: -Սա պիտի լինի հանգանակը ամբողջ ազգաբնակութեան, որուն այսօրուան անսահման ցնծութիւնը՝ երէկեան անսահման տանջանքի արձագանքն է միայն:

Սա պիտի լինի, ընկերներ, ձեր քարոզի, պրոպագանդի գլխաւոր նպատակակետը:

*Հ.Յ.Դաշնակցութեան*
*Կ. Պոլսի Պատասխանատու Մարմին*
*1908 յուլիս 30, Կ. Պոլիս*

2

Հայրենակիցներ,

Տասնեակ տարիներ տանջակից ձեզի ու բախտակից ձեր արիւնոտ ճակատագրին, մենք չի դաւաճանեցինք ձեզ ու չի մոռցանք ձեր տառապանքը: Ինկան մեզմէ անթիւ դիւցազներ, բայց մենք չի յուսահատեցանք:

Ազատութեան գաղափարը մնաց անսասան և Ցաղթութեան հավատքը անխոցելի՝ մեր շարքերուն մէջ:

Դեռ երեկ բազմաթիւ էին անոնք, որ կը քարկոծէին մեր յոյսն ու մեր զոհողութիւնը: Դեռ երէկ հազարաւորներ էին մեր հակառակորդները, որ կը տարակուսէին մեր գործունէութեան ու մեր անձնազոհութեան վրայ:

Եւ ահա Այսօրը կուգայ վկայել, թէ պարապ վատնուած չեն ո՛չ մեր արիւնը, ո՛չ մեր ճիգը, ո՛չ մեր անձնուիրութիւնը:

Թող ուրեմն Արդարութեան, Ազատութեան և Իրաւահաւասարութեան գաղափարը գրաւէ՛ աւելի ու աւելի Թիւրքիոյ բոլոր ազգերը:

*Հ.Յ.Դաշնակցութեան*
*Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմին*
*Կ. Պոլիս, 2 օգոստոս 1908*

3

Դաշնակցութեան Կ.Պոլսոյ Պատասխանատու Մարմինը, նկատի ունենալով սահմանադրական կարգերու ներմուծմամբ ստեղծուած նոր պայմանները, կը յայտարարէ հետևեալը.

Ա. Այն բոլոր ընկերները, որոնք կը պատկանէին Կազմակերպութեան, բայց բանտարկուած կամ աքսորուած էին, այժմ ազատ ըլլալով, պէտք է շտապեն անմիջապէս մտնել պատկանեալ խմբերու կամ կոմիտէներու մէջ:

Բ. Բոլոր խմբերն ու կոմիտէները պէտք է վերակազմուեն՝ համաձայն Դաշնակցութեան «Կանոնագրի»:

Գ. Կուսակցութեան մարմինները պարտք ունին ձեռնարկել մարտական ու քաղաքական խմբերու կազմութեան, իրագործելու համար այն ձեռնարկները, որոնք կրնան ծրագրուիլ Պատասխանատու Մարմիններու կամ Կեդրոնական Կոմիտէներու կողմէ:

Դ. Հեղծումներու ու թիւրիմացութիւններու տեղիք չը տալու համար, բոլոր մարմինները պարտաւոր են ղեկավարուել «Կանոնագրով», թէ իրենց ներքին յարաբերութիւններու, թէ ուսէ ձեռնարկներու մէջ, և թէ դրամական հարցերու վերաբերմամբ:

Առիթէն կ օգտինք յիշեցնելու բոլոր ընկերներուն, որ համաձայն Ընդհանուր ժողովի ցանկութեան, Կազմակերպութեան շարքերու մէջ չը պիտի ընդունին այնպիսիները՝ որոնք իրենց անձով կամ քայլերով կրնան արատ բերել Դաշնակցութեան անուան: Ընդհակառակը, անշիտակ և Կազմակերպութեան անունը շահագործելու միտումներ ունեցող անձինք, ո՛վքեր և ըլլան, պիտի հեռացին կազմակերպութեան շարքերէն:

*Հ.Յ.Դաշնակցութեան*
*Կ. Պոլսոյ Պատասխանատու*
*Մարմին*
*Կ. Պոլիս, 3 օգոստոս 1908*

4

Հ.Յ.Դաշնակցութեան Պատասխանատու Կոմիտէն Տաճկաստանի հայ ժողովրդին բացառիկ վիճակը ի նկատի ունենալով, շրջաբերական յայտարարութիւնով մը կը պահանջէ սահմանադրական կառավարութենէն հետևեալ միջոցներու իրագործումը.

1. Ազատ երթևեկում հայկական նահանգներու մէջ:

2. Վերադարձումը հայ գիւղացիներու հողերուն, որոնք վերջի ժամանակներս գրաւուած էին:

3. Ջնջում 1895-1908 տարիներու ընթացքին մէջ հայ ժողովրդի դէմ ստեղծուած հալածողական միջոցներուն:

4. Ազատ արձակումը քաղաքական հայ բանտարկեալներուն և վերադարձ քաղաքական բոլոր աքսորեալներուն:

5. Վերադարձ հայ գաղթականներուն, որոնց թիւը կ անցնի 90 հազարը:

Ասոնցմէ զատ Դաշնակցութիւնը, որ Թիւրքիոյ մէջ կը գործէ 18 տարիներէ ի վեր, որոշած է միւս ազգութիւններու պատկանող կուսակցութիւններուն հետ համերաշխաբար ի գործ դնել բոլոր իր ուժը, ձեռք բերելու համար կատարեալ ազատութիւն ընտրութիւններու ատէն և սահմանադրութեան վերաքննութիւն վարչական ապակեդրոնացման ուղղութիւնով:

*Հ.Յ.Դաշնակցութեան*
*Կ. Պոլսոյ Պատասխանատու*
*Մարմին*

## Համաստեղ
## Գիտաժողովի նյութեր

Երևան, 2008 թ., 144 էջ




Այր հայրենիքում Համազգային հայ կրթական և մշակութային միության հիմնադրման 80-ամյակի միջոցառումների շարքը բացվեց գիտամշակութային կյանքի մի նշանակալից իրադարձությամբ: Հանրապետության մայր բուհում կազմակերպվեց գիտաժողով՝ նվիրված 20-րդ դարի հայ ականավոր գրող, հասարակական գործիչ Համաստեղի (Համբարձում Կելենյան) կյանքին ու գրական ժառանգությանը: Ինչպես նշված է «Համազգայինի» Կենտրոնական վարչության ողջույնի ուղերձում՝ «Հայ ժողովուրդը թեւակոխած է նորագոյն պատմութեան թերեւս վտանգաւոր՝ բայց միաժամանակ բազմազան ու մեծ կարելիութիւններ խոստացող հանգրուան մը: Անշուշտ անոր ճակատագիրը կախեալ է բազմաթիւ ազդակներէ, բայց առաջին հերթին՝ իրմէ:

Լինելութեան հետ կապ ունեցող վերոնշեալ յայտարարութիւնը հաւանաբար անտեղի թուի գրական գիտաժողովի մը կազմակերպման առիթով հրատարակուող գրութեան մը մէջ: Այդպէս չէ սակայն, որովհետեւ Համաստեղի մասին գիտաժողովը Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ համագործակցութեան փոքր օրինակներէն մէկը ըլլալով կը խորհրդանշէ հայութեան աշխարհացրիւ մասնիկներու վերամիաւորման կամքը: Իսկ վերամիաւորման նպաստող այս փորձերը հայ ժողովուրդի վերապրելու ունակութեան ամենէն հիմնական երաշխիքներէն մէկը պետք է համարել»:

Նման միջոցառումները, որոնք մեր ժողովրդի երկու հատվածների հոգեմտավոր կյանքի մերձեցման ու միաձուլման լավագույն ազդակներ են, «Համազգայինի» կարծիքով՝ դյուրացնում են շատ ավելի դժվարին խնդիրների լուծումը, խնդիրներ, որոնք անխուսափելիորեն ծագել են ու կուտակվել խորհրդային տարիների անթափանց վարագույրի պատճառով:

Եթե մի պահ վերանանք գիտաժողովը որպես Հայրենիք-Սփյուռք մերձեցման լավագույն փորձերից մեկը դիտարկելու մտայնությունից, ապա կարող ենք ասել, որ այս իրադարձությամբ մենք ականատեսն ենք դառնում մեր մեծագույն գրողներից մեկի՝ Համաստեղի դեպի հայրենիք ու հայրենի գրական աշխարհ վերջնական վերադարձի: Այդ են վկայում մեր այսօրվա լավագույն գրականագետների ու գրաքննադատների գիտական զեկույցները, որոնք տեղ են գտել գիտաժողովի նյութերի հավաքածուում: Համաստեղի մուտքը գրական ասպարեզ ողջունել են Շիրվանզադեն, Իսահակյանը, Հակոբ Օշականը, Տիգրան Կամսարականը, Արշակ Չոպանյանը և ուրիշներ, ովքեր իրենց գրական նուրբ ճաշակով հանդերձ այնքան էլ շռայլ չեն եղել նորեկների հանդեպ: Այդ հյուրասեր ընդունելության պատճառն առաջին հերթին Համաստեղ երևույթի նորությունն է մեր գրականության մեջ, նրա «ջղուտ, հակիրճ, գունագեղ, կյանքով լեցուն» բանաստեղծական արձակը:

Արևելահայ ընթերցասեր հասարակությունն ակամա անհաղորդ մնաց Համաստեղի կյանքին ու գրական ստեղծագործությանը: Կյանք, որ ամբողջովին նվիրված է եղել Մեծ եղեռնից հետո հայ ժողովրդի ներքին կյանքի կայացման ու կազմակերպման գործին, գրական ժառանգություն, որ ամբողջովին ներծծված է հայրենի բնապատկերների ու հայ հասարակ մարդու հոգու զուլալությամբ: Այս ֆոնի վրա խնդրո առարկա գիտաժողովի նյութերի հավաքածուն և գիտաժողովն առհասարակ, կարելի է դիտել որպես ոչ ուշացած տուրք մեծատաղանդ գրողին ու նրա ստեղծագործությանը, որպես հայ գիտամշակութային կյանքի երկու հսկա դերակատարների՝ «Համազգայինի» և Երևանի պետական համալսարանի համատեղ նվիրաբերություն հայ ընթերցողին և հայ գրականության առավել երիտասարդ ուսումնասիրողներին:

**Էդիկ Անդրեասյան**

# Սերգեյ Գալստյան



Թերլեմեզյանի անվան ուսումնարանի մանրանկարչության բաժինն ավարտելուց հետո, Սերգեյ Գալստյանը ընդունվել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտ:

Մասնակցել է Հայաստանի նկարիչների միության մի շարք ցուցահանդեսների, հատուկ մրցանակի է արժանացել ՄԱԿ-ի 50 -ամյակին և Չինաստանում կազմակերպված ցուցահանդեսներում:

2005 թվականից դասավանդում է Էջմիածնի մայր եկեղեցուն կից հայկական մանրանկարչության արվեստի կենտրոնում:

Մասնակցել է Ախթալայի XIII դարի մենաստանի և Քանաքեռի Սուրբ Հակոբի վերականգման աշխատանքներին:

Նրա բազմաթիվ աշխատանքները գտնվում են աշխարհի տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում:



# «ԴՐՕՇԱԿ» -ի պատկերասրահ